



Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

<https://grqaser.org/hy/donate>

Ժողովրդական բանահյուսություն, Բալլադ, Անգլիական գրականություն

13+

Թարգմանությունը՝ Պ. Մեսրոպյանի

Ռոբին Հուդ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈՒԲԻՆ ՀՈՒԴԸ ՕՐԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ ՀԱՍԱՐԿԵՑ

Անգլիայի թագավոր Հարրի Երկրորդի օրոք երկրի հյուսիսում կային մի շարք անտառներ, որոնք արքայի որսավայրն էին հանդիսանում: Մահապատիժ էր սպառնում նրան, ով եղջերու կորսար այդ վայրերում: Անտառների հսկողությունը վստահված էր արքայական անտառապահներին, որոնց պետք յուրաքանչյուր անտառում այնպիսի հեղինակություն ուներ ինչպիսին շերիֆը<sup>1</sup>՝ քաղաքում կամ նույնիսկ եպիսկոպոսը՝ իր վանքում:

Շերվուդի և Բարնզդեյլի անտառները, որ արքայական խոշորագույն արգելավայրերից էին, գտնվում էին Նոթինգեմ և Բարնզդեյլ քաղաքների մոտ: Մի քանի տարի գլխավոր անտառապահ Հյու Ֆիցուլթը ապրեց այստեղ իր բարի կնոջ և որդու՝ փոքրիկ Ռոբերտի հետ: Ըստ տարեգրության տվյալների, տղան ծնվել էր Լոքսլի քաղաքում 1160 թվականին և նրան հաճախ Լոքսլեցի Ռոբ էին անվանում: Նա սիրունիկ տղա էր: Հենց որ քայլել սկսեց, հոր հետ գնում էր անտառի խորքերը, մի բան, որ մեծ հրճվանք էր պատճառում տղային: Հենց որ նրա աջ բազուկը բավականաչափ զորացավ, նա սովորեց աղել լարել և իսկական նետ արձակել: Իսկ

<sup>1</sup>Նահանգապետ՝ արքայի կողմից նշանակված (Օ. թ.):

ձմռան երեկոներին հափշտակությամբ էր ունկնդրում հոր պատմությունները օրենքից դուրս համարվող քաջարի մարդկանց մասին:

Նրա մայրը ազնվական ծագում ուներ և հուսով էր, որ իր տղան մի օր մեծ հռչակ կհանի արքունիքում կամ վանքում: Նա իր որդուն սովորեցրեց կարդալ և գրել, լինել քաղաքավարի, շիտակ պատասխաններ տալ և՛ տերերին, և՛ գյուղացիներին: Տղան, թեև սիրում էր իր դասերը, բայց իրեն ավելի երջանիկ էր զգում երկար աղեղը ձեռքին անտառում ման գալիս:

Մանկության օրերին Ռոբը երկու ընկեր ուներ. մեկը Ուիլլ Գեյմուեյլն էր՝ հորեղբոր որդին, որը Նոթինգեմ քաղաքի մոտ էր ապրում, իսկ մյուսը՝ Մարիան Ֆիցուոլթրն էր, Յանթինգոնի կոմսի միակ դուստրը: Յանթինգոնի ապարանքը երևում էր Շերվուդի բարձր ծառերից մեկի վրայից, և շատ հաճախ Ռոբը ծառի գագաթից սպիտակ ազդանշան էր պարզում, որ նշանակում էր, թե սպասում է Մարիանին: Ռոբը նրան չէր այցելում ապարանքում: Մարիանի և Ռոբի հայրերը թշնամության մեջ էին: Որոշ մարդիկ ասում էին, որ Յուլ Ֆիցուլթը՝ Ռոբի հայրը, Յանթինգոնի օրինական կոմսն էր, սակայն Ֆիցուոլթը, որ վայելում էր արքայի սերը, բռնագրավել էր նրա հողերը: Բայց հայրերի թշնամությունը չէր մտահոգում Ռոբին կամ Մարիանին: Նրանք գիտեին, որ ընդարձակ կանաչ անտառը բաց էր իրենց առաջ և որ ծաղիկների բուրմունքն ու թռչունների դայլալը լցնում են լայնարձակ աշխարհը:

Ֆիցուոլթից բացի, Ռոբի հայրը երկու թշնամի էլ ուներ. Նոթինգեմի նիհար շերիֆն ու Ջերֆորդի գեր եպիսկոպոսը: Այս երեք թշնամիները պայման կապեցին մեղադրել Յուլ Ֆիցուլթին դավաճանության մեջ, և այս շինծու մեղադրանքի հիման վրա նրան հեռացրին արքայական անտառապահի պաշտոնից: Եվ Ֆիցուլթը, կինը և Ռոբը, որը արդեն 19 տարեկան էր, ձմռան մի ցուրտ երեկո ստիպված եղան լքելու իրենց տունը: Շերիֆը կալանավորեց անտառապահին՝ դավաճանության համար, և զցեց Նոթինգեմի բանտը: Ռոբն ու մայրն էլ գիշերը բանտում անցկացրին, սակայն հաջորդ առավոտյան նրանց դուրս արեցին: Օգնության համար նրանք դիմեցին իրենց միակ բարեկամ Գեյմուեյլի կալվածատեր Ջորջին և սա ուրախությամբ ապաստան տվեց նրանց:

Սակայն, հարվածը և ձմեռային գիշերվա ճանապարհորդությունը շատ ծանր էին Ռոբի մոր համար: Դեռ անտառում ապրելիս նրա առողջությունը խանգարվել էր: Յագիվ երկու ամիս անց նա վախճանվեց: Մոր կորուստը ծանր եղավ Ռոբի համար: Մոր գերեզմանի վրա դեռ առաջին գարնան ծաղիկները չծաղկած՝ նա մի ուրիշ ծանր հարված էլ ստացավ, կորցրեց իր հորը: Մեղադրողները դեռ չէին էլ կազմակերպել դատավարությունը, երբ խեղճ մարդը մեռավ բանտում:

Անցավ երկու տարի: Ռոբի քեռու տղան Ուիլլը գնացել էր դպրոց, իսկ Մարիանի հայրը, որ լսել էր իր դստեր և Ռոբի բարեկամության մասին, իր աղջկան ուղարկել էր Էլիանոր թագուհու արքունիքը: Այսպիսով, Ռոբը մեն-մենակ անցկացրեց այդ երկու տարին: Ծերունի կալվածատերը՝ Ռոբի հորեղբայրը, բարի էր նրա նկատմամբ, սակայն չէր կարողանում օգնել խեղճ տղային: Բանն այն էր, որ Ռոբն անտառում անցկացրած իր նախկին կյանքին ավելի քիչ չէր կարոտել, քան իր մոր բարությանը և հոր ընկերությանը, ամեն անգամ, երբ պրկում էր իր երկար աղեղը և անվրեպ արձակում նետը, հիշում էր անցյալի իր երջանիկ օրերը:

Մի առավոտ, երբ Ռոբը եկավ նախաճաշի, հորեղբայրն ասաց.

— Ռո՛բ, որոյա՛կ իմ, քեզ նորութիւն ունեմ ասելու,— և ծերունին ժպտալով նայեց նրան:

— Ի՞նչ կարող է լինել այդ, հորեղբայր Չեյմուել,— հարցրեց երիտասարդը:

— Առիթ է ներկայացել քո երկար աղեղը լարելու և մի լավ մրցանակ շահելու: Նոթինգեմում տոնավաճառ է տեղի ունենում և շերիֆը նետաձիգների մրցութիւն է հայտարարել: Լավագույն նետաձիգները արքայական անտառապահի պաշտոն են ստանալու. նա, ով իր նետը արձակի անվրեպ՝ կշահի ոսկեծուլ նետի մրցանակը, իսկ դա շատ հարմար նվեր է քո սիրածի համար, այնպես չէ՞, Ռոբ:— Եվ կալվածատերը ծիծաղեց, բարի հայացքը դարձնելով Ռոբի վրա:

Ռոբի աչքերը շողացին:

— Իրոք, դա լավ մրցանակ է, հորեղբայր,— ասաց նա,— իսկ անտառապահ դառնալը իմ վաղեմի փափագն է: Թույլ կտա՞ս, որ մասնակցեմ մրցմանը:

— Իհարկե,— պատասխանեց հորեղբայրը,— մայրդ ուզում էր, որ հոգևորական դառնաս, սակայն ես տեսնում եմ, որ դու ցանկանում ես կյանքդ կանաչ անտառում անցկացնել, այնպես որ, հաջողութիւնն եմ ցանկանում քեզ:

Երիտասարդը շնորհակալութիւն հայտնեց հորեղբորը՝ նրա բարի ցանկութիւնների համար և սկսեց ճանապարհորդութեան պատրաստութիւն տեսնել:

Մի քանի օր անց, մի գեղեցիկ առավոտ Նոթինգեմ գնալիս, Ռոբը անցնում էր Շերվուդի անտառով: Նա մի բարձրահասակ երիտասարդ էր, ոտից գլուխ լինքոլն<sup>2</sup> կանաչ հագած: Ուսին կրում էր աղեղը, իսկ կողքից կախված էր նետերով լի կապարճը: Նա քայլում էր թեթև և ուրախ, որովհետև նրա հույսերը մեծ էին և աշխարհում թշնամի չուներ: Բայց այդ օրը նրա կյանքի վերջին առավոտն էր, որ անց էր կացնում առանց թշնամու: Մի ուրախ եղանակ շվացնելով, Շերվուդով անցնելիս նա պատահաբար հանդիպեց մի խումբ անտառապահների, որոնք խրախճանք էին անում և ուրախանում մի կաղնու տակ:

Առաջին իսկ հայացքից Ռոբն իմացավ, որ մի թշնամի էր շահել: Նա այն մարդն էր, որ զավթել էր գլխավոր անտառապահի պաշտոնը, որը առաջ Ռոբի հորն էր պատկանում, իսկ մորը նետել էր ձյան մեջ: Բայց Ռոբը ոչինչ չասաց և ցանկանում էր շարունակել իր ճանապարհը, երբ այդ մարդը ձայն տվեց.

— Օ՛, ահա մի սիրուն փոքրիկ նետաձիգ. ո՞ւր ես գնում, տղաս, այդ Էժան աղեղով և խաղալիք նիզակներով, գուցե նա իր նետը Նոթինգեմի տոնավաճառում արձակելու հույս ունի, հա՛, հա՛, հա՛:

Մյուս անտառապահներն էլ քահ-քահ ծիծաղեցին: Ռոբը կարմրեց, նա շատ էր հպարտանում իր նետաձգութեամբ:

— Իմ աղեղը ձերինից վատը չէ,— ասաց նա,— և իմ նետերը կարող են նույնքան շեշտակի և հեռու սլանալ, իսկ ես ձեր դասերի կարիքը չեմ զգում:

---

<sup>2</sup> Կանաչ գույնի կտոր, որ պատրաստվել է Լինքոլն քաղաքում (Օ. Թ.):

Այս խոսքերի վրա նրանք նորից ծիծաղեցին բարձրաձայն և գլխավորը ասաց.

— Ցույց տուր մեզ քո վարպետությունը և եթե կարողանաս խփել այս թիրախին՝ քեզ քսան արծաթ պեննի<sup>3</sup>: Բայց եթե չկարողանա՛ս խփել...

— Ցույց տվեք ձեր թիրախը,— նրա խոսքն ընդհատեց Ռոբը,— ձեր քսան պեննիի դիմաց ես իմ գլուխը գրագ կդնեմ:

— Համաձայն եմ քո պայմանին,— պատասխանեց անտառապահը բարկացած,— եթե չկարողանաս խփել թիրախին, գլուխդ խիզախությանդ զոհ պիտի գնա:

Այդ պահին, որոշ հեռավորության վրա, եղջերուների մի նախիր էր անցնում անտառով: Դրանք արքայի եղջերուներն էին: Թվում էր, թե նման տարածության վրա նրանք գերծ էին ամեն մի վտանգից: Գլխավոր անտառապահը մատը մեկնեց դեպի եղջերուները:

— Եթե քո մատաղ բազուկը կարողանա նետը հասցնել այս տարածության կեսին, ապա ես կմրցեմ քեզ հետ:

— Շահտ բարի,— ասաց Ռոբը, — իմ գլուխը գրագ եմ դնում 20 պեննիի դիմաց, թե որ չկարողանամ հոտի առաջնորդին սպանել:

Այդ խոսքերի վրա նա լարեց իր երկար աղեղը. և մի պահ և նետը սլանում էր բացատի միջով: Հաջորդ պահին հոտի առաջնորդը գետին տապալվեց նետի հարվածից:

Սկզբում անտառապահները զարմացան, իսկ հետո բարկացան: Ամենքից ավելի գլխավոր անտառապահն էր զայրացած:

— Գիտե՞ս, թե դու ինչ արեցիր,— ասաց նա երիտասարդ նետաձիգին: Դու սպանեցիր արքայի եղջերուին. մինչդեռ արքա Հարրիի օրենքն ասում է, որ մահ է սպառնում նրան, ով նման ոճիր է գործում: Ինձ հետ չխոսես դրամի մասին. իսկույն հեռացիր այստեղից և չստիպես, որ մեկ էլ նայեմ երեսիդ:

Ռոբը բարկացավ և ասաց.

— Ես արդեն բավական շատ եմ նայել քո դեմքին, ով իմ սքանչելի անտառապահ: Դու զավթել ես իմ հոր տեղը:

Եվ Ռոբը շուռ եկավ ու հեռացավ:

Նրա վերջին խոսքերը խիստ զայրացրին անտառապահին: Նա ձեռքն առավ աղեղը և մի նետ արձակեց Ռոբի հետևից: Այս վերջինի բախտից, վճռական պահին անտառապահի ոտը սայթաքեց մի ճյուղի վրա և նետը սուրաց ականջի կողքով:

Ռոբը զայրույթով շուռ եկավ ու նայեց իր թշնամուն:

— Հա՛,— բացականչեց նա,— երևում է, որ դու ինձ նման անվրեպ նետաձիգ չես. առ քեզ մի հատ նետ այս Էժան աղեղից:

Շեշտակի սլացավ Ռոբի պատասխան նետը:

---

<sup>3</sup> Անգլիական դրամ (Մ. Թ.):

Գլխավոր անտառապահը մի ճիշտ արձակեց, երեսի վրա փռվեց և անշարժ պառկեց:

Չայրույթի աղաղակներով, անտառապահները հավաքվեցին իրենց պետի շուրջը, բայց մահացած գտան նրան:

Ռոբը հոր վրեժը լուծեց, սակայն հիմա էլ ինքը դարձավ օրենքից դուրս: Խումբը դեռ չէր հետևել նրան, երբ նա առաջ վազեց կանաչ անտառի միջով: Թվում էր, թե երկնասլաց ծառերը բացում էին իրենց թևերը և ողջունում նրա վերադարձը:

Օրվա վերջին, սոված և հոգևած, Ռոբը կանգ առավ մի խեղճ այրի կնոջ հյուղակի առաջ, որ գտնվում էր անտառի ծայրին: Իր մանկության օրերին այրի կինը Ռոբին միշտ հյուրասիրել էր ուտելիքով. դրա համար էլ նա համարձակ ներս մտավ: Պառավ կինը շատ ուրախացավ, երբ տեսավ Ռոբին. կերակրեց նրան, առաջարկեց հանգստանալ և անել իր պատմությունը: Ապա նա տմբտմբացրեց գլուխը.

— Մի չարաբաստիկ քամի է փչում Շերվուդում,— ասաց կինը:— Աղքատներին թալանում են, իսկ հարուստները պաշտպան են կանգնում կողոպուտ անողներին: Սովամահ չլինելու համար իմ երեք որդիները արքայի եղջերուներից մի քանիսը որսացին: Եվ այժմ նրանք համարվում են օրենքից դուրս: Նրանք պատմում են, թե բարի մարդիկ շատ կան իրենց հետ թաքնված անտառում:

— Ասա՛, իմ բարի մայր, որտե՞ղ են նրանք,— հարցրեց Ռոբը,— ես ուզում եմ միանալ նրանց:

— Ո՛չ, ո՛չ,— պատասխանեց պառավը սկզբում: Բայց երբ համոզվեց, որ էլ ուրիշ ելք չկա, այսպես ասաց.

— Որդիներս այս գիշեր գալու են այստեղ, մնա և տես նրանց, եթե ուզում ես:

Եվ այսպես, այդ գիշեր Ռոբը մնաց տեսնելու այրի կնոջ որդիներին: Իսկ երբ սրանք լսեցին Ռոբի պատմությունը՝ հայտնեցին նրան խմբի թաքստոցի տեղը, մի վայր, որին նա լավ ծանոթ էր: Վերջում նրանցից մեկն ասաց.

— Բայց խումբը դեռ չունի մի առաջնորդ, որ խելքն օգտագործի այնպես, ինչպես բազուկները: Մենք համաձայնության ենք եկել, որ մեր գլխավորը կդառնա օրենքից դուրս համարվող այն մարդը, որը կգնա Նոթինգեմ և կշահի նետաձգության մրցանակը: Ռոբը վեր թռավ.

— Դա շատ լավ է,— ասաց նա,— որովհետև ես գնում էի հենց այդ տոնավաճառը և շրջանի բոլոր անտառապահներն ու շերիֆի մարդիկ չեն կանգնի իմ և թիրախի միջև:

Թեև նա շատ երիտասարդ էր, բայց կանգնած էր այնպես հաստատ և նրա աչքերը շողում էին այնպիսի բոցով, որ երեք եղբայրները սեղմեցին նրա ձեռքը, բացականչելով. — Լսի՛ր մեզ, Լոքսլեցի. եթե շահես ոսկեծուլը նետը, անպայման դու կդառնաս օրենքից դուրս հայտարարված մարդկանց գլխավորը:

Եվ Ռոբը ծրագրեց, թե ինչպես կարող էր լավագույն ձևով ծայտվել և գնալ Նոթինգեմ քաղաքը, որովհետև նա համոզված էր, որ շուկայի հրապարակում անտառապահները նրա գլխի համար հավանորեն գին էին որոշել արդեն:

Ժամանելով մրցության բազմամբոխ վայրը, Ռոբը քայլերն ուղղեց դեպի մեծ շուկայի հրապարակը: Նա հասավ այնտեղ հենց այն պահին, երբ մի պաշտոնյա նոր էր սկսել կարդալ Նոթինգեմի շերիֆի հրովարտակը, որտեղ Ռոբին օրենքից դուրս էին հայտարարում արքայական գլխավոր անտառապահին սպանած լինելու համար: Հարյուր ֆունտ վարձատրություն պիտի ստանար նա, ով գտներ Ռոբին կենդանի թե մեռած:

Հոր նկատմամբ շերիֆի ունեցած ատելությունը փոխանցվել էր որդուն:

Օրվա խոշորագույն իրադարձությունը տեղի ունեցավ կեսօրից հետո: Այդ նետածիզների մրցումն էր ոսկեծույլ նետի համար: Քսան մարդ առաջ եկան նետերը արձակելու: Սրանց մեջ էր նաև մի մուրացկան, խեղճ մարդ՝ բազմերանգ շորեր հագին, գորշ երեսով և ձեռքերով: Գլուխը ծածկած էր վեղարով, որը վանականի տեսք էր տվել նրան: Դանդաղ, կաղին տալով, նա էլ իր տեղը գրավեց նետածիզների շարքում, մինչ ամբոխը բղավում ու ծիծաղում էր նրա վրա: Սակայն մրցմանը կարող էին մասնակցել բոլոր ցանկացողները, ուստի ոչ ոք չէր կարող առարկել:

Մուրացկանը Ռոբն էր: Նրա կողքին կանգնած էր մի հաղթանդամ մարդ՝ շագանակագույն դեմքով, մի աչքը, կանաչ վիրակապով կապած: Ամբոխը նրա վրա էլ ծիծաղեց, բայց նա անտարբեր առաջ անցավ, վարժ ձեռքով փորձելով իր աղեղը:

Բազմամարդ ամբոխը շրջապատել էր հրապարակը: Կենտրոնական օթյակը զբաղեցրել էին նիհար ու գոռոզ շերիֆը, նրա կինը և դուստրը, որը նվաճողից ոսկեծույլ նետը ստանալու և օրվա թագուհին հռչակվելու հույս ուներ: Հաջորդ օթյակում Հերֆորդի գեր եպիսկոպոսն էր բազմած: Իսկ մյուս օթյակում սև մազերով, սևաչյա, սիրուն դիմագծերով մի աղջիկ էր նստած: Այդ օրիորդ Մարիանն էր: Նա եկել էր այցելության Լոնդոնից՝ թագուհու արքունիքից, և այժմ համեստորեն նստած էր իր հոր՝ Հանթինգդոնի կոմսի կողքին: Եթե Ռոբը նախօրոք որոշել էր նվաճել նետը, ապա այժմ աղջկա գողտրիկ դեմքը էլ ավելի հաստատ դարձրեց այդ վճիռը:

Հնչեց շեփորը, ամբոխը լռեց, և մոնետիկը, ի լուր բոլորի, հայտարարեց մրցման պայմանները, որին կարող էին մասնակցել բոլոր ցանկացողները: Առաջին թիրախը տեղավորված էր որոշ հեռավորության վրա և բոլոր նրանք, ովքեր դիպցնեին նրա կենտրոնին՝ կարող էին մասնակցել երկրորդ փուլին, որի ժամանակ թիրախը մի փոքր ավելի հեռու պիտի դրվեր: Երրորդը պիտի դրվեր էլ ավելի հեռու, մինչև որ այսպիսով հաղթողը պարզվեր: Նվաճողին տրվելու էր ոսկեծույլ նետը և արքայական անտառապահի պաշտոնը: Եվ նա պիտի պսակեր օրվա թագուհուն:

Կրկին հնչեց շեփորը և նետածիզները պատրաստվեցին: Երբ Ռոբը փորձում էր իր աղեղը՝ նրա արտասովոր տեսքը շարժեց ամբոխի ծիծաղը: Բայց հենց որ նետածիզն իր առաջին նետը արձակեց հրապարակում քար լռություն տիրեց:

Թիրախը շատ էլ հեռու չէր. այնպես որ քսան մասնակիցներից տասներկուսը դիպցրին նրա ներքին օղակին: Ռոբը վեցերորդն էր, և խփեց անվրեպ: Նրա վարպետությանը հավանություն տվեց կանաչ վիրակապով մարդը, որը յոթերորդ արձակողն էր: Նա նույնպես դիպցրեց թիրախի մեջտեղին:

Ամբոխը բարձրաձայն աղաղակեց: Կրկին հնչեց շեփորը, ու մի նոր, ավելի հեռու թիրախ որոշվեց:

Մի անգամ ևս առաջին երեք նետաձիգները դիպցրին անվրեպ արժանանալով ամբոխի բուռն ծափերին: Նրանք հանրաճանաչ նետաձիգներ էին: Չորրորդ և հինգերորդ աղեղաձիգները միայն մի թեթև դիպցրին կենտրոնին: Ռոբը իր նետը դիպցրեց թիրախի մեջտեղին:

— Մուրացկա՛նը, մուրացկա՛նը,— գոռում էր ամբոխը,— մուրացկանին նայեցեք:

Եվ իսկապես, նրա նետը ամենից ավելի մոտ էր կենտրոնին: Բայց Ռոբի կանաչ վիրակապով հարևանը դիպցրեց ուղիղ մեջտեղին: Նորից լսվեցին բարձրաձայն աղաղակներ: Նոթինգեմ քաղաքում հաճախ չէր կարելի ականատես լինել նման նետաձգության: Մնացած նետաձիգներն իրար հետևից վրիպեցին և դուրս մնացին: Մինչ շեփորը երրորդ փուլի ազդանշանն էր տալիս՝ թիրախը դրվեց շատ ավելի հեռու:

Նետաձիգները մի անգամ ևս պատրաստվեցին իրենց աղեղները լարելու: Երրորդ տուրի թիրախը, ամբողջությամբ վերցրած, համարյա առաջինի ներքին օղակի մեծությունն ուներ: Առաջին երեք նշանառուները արձակեցին իրենց նետերը և, չնայած որ լավ նշանաձիգներ էին, նետերը հազիվ դիպցրին ներքին օղակին:

Հասավ և Ռոբի հերթը: Նա մի փոքր սրտնեղած էր: Երկնքում կուտակված ամպերը աղոտացնում էին լույսը: Բացի դրանից, քամի էր փչում հրապարակում: Նա մի հայացք զցեց այն օթյակի վրա, որտեղ սևաչյա աղջիկն էր նստած: Իր պատասխան հայացքում աղջիկը ժպտաց տղային: Թեև Ռոբը ծպտված էր, բայց այդ պահին նրան թվաց, թե աղջիկը ճանաչեց իրեն և կարծես հույս ուներ, որ Ռոբը բարձր կպահի հին Շերվուդի պատիվը: Նա անվարան քաշեց իր աղեղը, և նետը անվրեպ խրվեց թիրախի կենտրոնը:

— Մուրացկա՛նը, մուրացկա՛նը,— գոռաց ամբոխը, որը այժմ արդեն Ռոբի ջերմ բարեկամն էր դարձել:

Վերջին նետաձիգը Ռոբի հարևանը, դիրք ընդունեց: Ազատ և շնորհալի մի շարժումով նա ձգեց իր աղեղը և թևավոր նետը սուրաց թիրախի ուղղությամբ: Բոլորի աչքերը հետևեցին թռիչքին: Մի աղաղակ բարձրացավ, երբ նետը մի փոքր շեղվեց կենտրոնից: Նետաձիգի աչքերը չհավատացին արդյունքին. բայց հետո նա հասկացավ իր սխալը: Կանաչ վիրակապով մարդը հաշվի չէր առել քամին, որը թեքել էր նետի ուղղությունը: Չնայած դրան, նա առաջինը եղավ, որ շնորհավորեց հաղթողին:

— Ես հույս ունեմ, որ նորից ամիթ կլինի մեր նետերը արձակելու,— ասաց նա:— Ճիշտն ասած, ես ոսկեճուլ նետի կարիք չունեմ, բայց ուզում էի շահել այն՝ ի հեճուկս շերիֆի, որին ես չեմ սիրում: Այժմ պսակիր քո ընտրած աղջկան:

Ռոբը դեռ չէր էլ պատասխանել, երբ հաղթանդամ նետաձիգը շուռ եկավ և իսկույն խառնվեց ամբոխին:

Մինչ այդ, մուկետիկը Ռոբին հրավիրեց շերիֆի օթյակը՝ մրցանակը ստանալու:

— Դու շատ տարօրինակ մարդ ես,— ասաց շերիֆը սառնությամբ,— բայց և այնպես լավ ես արձակում: Անունդ ի՞նչ է:

Մարիանը, որ մոտիկ էր նստած, ուշադիր լսում էր:

— Ինձ թափառաշրջիկ Ռոբ եմ անվանում, միլորդ<sup>4</sup> շերիֆ,— ասաց նետաձիգը:  
Մարիանը ժպտաց:

— Դե՛, թափառաշրջիկ Ռոբ, եթե մի փոքր ուշադրություն դարձնենք քո դեմքին ու շորերին, տեսքդ կլավանա,— ասաց շերիֆը:— Ուզո՞ւմ ես ինձ մոտ ծառայության մտնել:

— Միլորդ շերիֆ, թափառաշրջիկ Ռոբը միշտ ազատ է ապրել և կարիք չունի ոչ մի ծառայության:

Շերիֆը բարկացավ, բայց իր աղջկա և ոսկեծույլ նետի սիրույն թաքցրեց բարկությունը:

— Թափառաշրջիկ Ռոբ,— ասաց նա,— ահա, այն ոսկեծույլ նետը, որը տրվում է օրվա լավագույն նետաձիգին: Մրցանակը քոնն է: Պսակի՛ր օրվա թագուհուն:

Այդ պահին մուկետիկը առաջ մղեց Ռոբին և կռացրեց նրա գլուխը շերիֆի աղջկա առաջ, որի շուրթերին բարակ ժպիտ էր խաղում: Բայց Ռոբը ուշք էլ չդարձրեց նրա վրա: Նա նետն առավ և դիմեց դեպի հաջորդ օթյակը, որտեղ օրիորդ Մարիանն էր նստած:

— Լե՛ղի,— ասաց նա,— խնդրում եմ ընդունեք այս աննշան նվերը մի ընչազուրկ թափառաշրջիկից, որի լավագույն նետերը ձեր տրամադրության տակ են:

— Շնորհակալ եմ, վեղարավոր Ռոբ<sup>5</sup>,— պատասխանեց աղջիկը ժպտերես և ոսկեծույլ նետը խրեց իր մագերի մեջ՝ ժողովրդի «Թագուհի՛ն, թագուհի՛ն» բացականչությունների տարափի տակ:

Շերիֆը զայրացած նայեց մուկացկանին, որ մերժել էր նրա հրավերը, վերցրել էր նվերը առանց շնորհակալություն հայտնելու և անտեսել էր իր հպարտ աղջկան: Նա իր մոտ կանչեց պահակներին և հրամայեց հետևել մուկացկանին: Բայց Ռոբը արդեն շրջվել և խառնվել էր ամբոխին, քայլերն ուղղելով դեպի քաղաքի դարպասը:

\*\*\*

Նույն երեկոյան անտառի բացատներից մեկում կանաչ հագած մարդկանց մի խումբ բոլորել էր խարույկի շուրջը, միս էր խորովում և ուրախանում: Հանկարծ անտառում մի ճյուղ ճարճատեց և նրանք վեր թռան:

— Ես ման եմ գալիս այրի կնոջ որդիներին,— ասաց մի հստակ ձայն,— և ես մենակ եմ եկել:

Իսկույն երեք մարդ առաջ եկան:

— Ռոբն է,— ձայն տվին նրանք,— բարով ես եկել Շերվուդ անտառը, Ռոբ,— և բոլոր մարդիկ բարի գալուստ մաղթեցին նրան: Նրանք արդեն լսել էին Ռոբի պատմությունը:

<sup>4</sup> Միլորդ — միջնադարյան Անգլիայում բարձրաստիճան պաշտոնյաներին դիմելու ձև (Օ. Թ.):

<sup>5</sup> Ռոբին Հուդ — հատուկ գոյականը այստեղից է առաջացել. «Հուդ» նշանակում է «վեղար»:

Այնուհետև, այրի կնոջ որդիներից մեկը՝ խիզախ Ուիլլը, ասաց.

— Տղաներ, դուք բոլորդ էլ գիտեք, որ գլխավոր չունենք: Ինձ այնպես է թվում, որ այս երիտասարդի մեջ մենք գտեք ենք մեր առաջնորդին: Դուք որոշել էիք ընտրել այն մարդուն, որ կարող էր նվաստացնել շերիֆին և նվաճել այսօրվա մրցման ոսկեծույլ նետը, այդպե՛ս է, չէ՞:

Խուժբը հաստատեց նրա ասածը, և Ուիլլը դիմեց Ռոբին.

— Ի՞նչ նորութունն ես բերում քեզ հետ Նոթինգեմ քաղաքից,— հարցրեց նա:

Ռոբը ծիծաղեց:

— Ճիշտն ասած, ես խայտառակեցի շերիֆին և նվաճեցի նրա ոսկեծույլ նետը: Բայց ինչ վերաբերվում է մրցանակին, դուք պետք է հավատաք իմ խոսքին, ես այն նվիրեցի մի օրիորդի:

Եվ քանի որ մարդիկ կասկածանքով էին ընդունում Ռոբի խոսքերը, նա շարունակեց.

— Բայց ես ուրախությամբ կմիանամ ձեր խմբին, եթե դուք ինձ ընդունեք որպես սովորական նետաձիգ, քանի որ ձեր մեջ կլինեն ինձանից ավելի տարիքով և միգուցե ավելի հմատ մարդիկ:

Ապա մի բարձրահասակ տղամարդ առաջ եկավ և Ռոբը տեսավ, որ նա կանաչ վիրակապով մարդն էր: Սակայն այժմ նա վիրակապ չունեի և երկու աչքերն էլ շողում էին ուրախությունից:

— Վեղարավոր Ռոբ, այսպես անվանեց քեզ լեդին,—ասաց նա,— ես, Ուիլլ Սթյուարթիս, հայտարարում եմ, որ քո պատմածը զուտ ճշմարտություն է և քեզնից բացի ուրիշ գլխավորի ես չեմ ենթարկվի:

Բարի Սթյուարթին օրենքից դուրս համարվող մարդկանց պատմեց Ռոբի հմտության մասին ու բոլորը ողջունեցին իրենց նոր գլխավորին, տալով նրան Ռոբին Յուդո անունը: Նա ընդունեց այդ անունը, քանի որ օրիորդ Մարիանն էր տվել այն: Ռոբին Յուդոին հանձնվեցին մի եղջերափող, որը նա փչելու էր, երբ ցանկանար հավաքել իր մարդկանց: Նրանք երդվեցին նաև՝ փող և ապրանքներ վերցնել միայն անարդար հարուստներից, օգնել աղքատներին և ձեռք չտալ կանանց: Այս բոլորը նրանք երդվեցին խարույկի շուրջը, խրախճանքի ժամին, կանաչ ծառի տակ:

Ահա թե ինչպես Ռոբին Յուդո օրենքից դուրս համարվեց:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈՒԲԻՆ ՅՈՒԴՈ ԴԻՄԱԿՈՐԵՑ ԼԻԹԼ ՋՈՆԻՆ

Ամբողջ ամառը Ռոբին Յուդոն ու նրա ուրախ մարդիկ թաքնվեցին Շերվուդ անտառում, բայց նրանց գործերը հռչակվեցին երկրով մեկ: Նոթինգեմի շերիֆը շատ էր գայրանում, սակայն չէր կարողանում բռնել օրենքից դուրս հայտարարված մարդկանց: Սկզբում ընչազուրկներն էլ էին վախենում նրանցից, բայց երբ տեսան, որ լինքով կանաչ հագած այդ մարդիկ, որոնց ի մի է հավաքում Ռոբին Յուդոն եղջերափողը, վնաս չեն հասցնում իրենց, այլ ընդհակառակը, ճնշողներին

կողոպտում են՝ ճնշվածներին օգնելու համար, սկսեցին սիրել այդ մարդկանց: Եվ Ռոբինի խումբը շարունակ մեծանում էր, մինչև որ ամռան վերջին նրա հավատարիմ մարդկանց թիվը հասավ ութսունի: Սակայն Ռոբինի արկածախնդիր ոգին ձանձրանում էր վրա հասած անդորր օրերից: Եվ մի ուրախ առավոտ նա վեր կացավ, ձեռքն առավ իր աղեղն ու կապարճը և ասաց,

— Տղերք, ես ուզում եմ Նոթինգեմ գնալ տեսնելու թե ինչպես է ապրում ուրախ աշխարհը: Բայց դուք արթուն պիտի մնաք անտառի եզրին և ականջ դնեք իմ եղջերափողին:

Այսպես ասելով, նա ուրախ-ուրախ քայլեց անտառի ծայրը և մի պահ կանգ առավ ճանապարհը զննելու:

Նա անվեհեր քայլեց այն ճանապարհով, որը քաղաք էր տանում: Բայց ոլորապտույտի վրա նկատեց մի արահետ, որ գետակի մյուս ափն էր տանում: Եվ այդ արահետը, որը նվազ վտանգավոր էր, կրճատում էր ճանապարհը: Նա թեքվեց այդ արահետով, մոտեցավ ու տեսավ, որ վերջին անձրևներից հետո գետակը խորացել էր ու վարարել: Բայց գետակի վրա գերանակապ նեղ կամուրջն այնտեղ էր դեռ:

Երբ Ռոբինը ոտը դրեց կամուրջի վրա՝ տեսավ վեց ոտնաչափ հասակ ունեցող հսկայի, որ գետակն ուզում էր անցնել նույն կամուրջի հակառակ կողմից: Նա ձեռքին մի կաղնե գավազան ուներ: Ռոբինը արագացրեց քայլերը: Նույն արեց և անձանոթը: Յուրաքանչյուրը կարծում էր, թե ինքը կանցնի առաջինը: Նրանք հանդիպեցին կամուրջի ճիշտ մեջտեղում և ոչ մեկը չէր ուզում տեղի տալ մյուսի առջև:

— Ետ գնա,— գոռաց Ռոբինը:

Անձանոթը ժպտաց: Նա գրեթե մի գլխով բարձ էր Ռոբինից:

— Ոչ,— պատասխանեց նա,— նահանջում եմ միայն ինձանից լավ մարդկանց առաջ:

— Ետ գնա, ասում եմ,— պատասխանեց Ռոբինը զայրացած,— այլապես ցույց կտամ քեզնից լավ լինելու: Ետ գնա, թե ոչ գետակը կզցեմ քեզ:

Հակառակորդը իր տեղից չշարժվեց:

— Հա՛, հա՛, հա՛, — քրքջաց նա:— Եթե անգամ որոշած էլ լինեի տեղի տալ, հիմա, քո ճառից հետո, տեղիցս չեմ էլ շարժվի: Ամբողջ կյանքումս փնտրել եմ այդ ավելի լավ մարդուն: Խնդրում եմ ցույց տուր, որ ինձանից լավն ես:

— Շուտո՛ւվ, շուտով ցույց կտամ,— ասաց Ռոբինը: — Դու մի քիչ կաց այստեղ, մինչև որ ես էլ կտրեմ քո գավազանի նման մի ձող:

Այսպես ասելով նա վերադարձավ իր ափը, մի կողմ դրեց իր երկար աղեղն ու նետերը և կտրեց ուղիղ վեց ոտնաչափ երկարությոն ունեցող ամուր ու երկար մի կաղնե ձող: Բայց և այնպես նրա կտրած ձողը մի ամբողջ ոտնաչափ կարճ էր հակառակորդի գավազանից: Ռոբինը հանդուգն քայլվածքով ետ դարձավ իր հակառակորդի մոտ:

— Բարեկամ,— ասաց նա,— ես պետք է ասեմ, որ նետաձգությունը ինձ համար ավելի դյուրին մրցություն է: Սակայն Անգլիայում նետի երգից բացի ուրիշ եղանակներ էլ կան:

— Այս խոսքի վրա նա ձողը պտտացրեց գլխավերևը:— Այնպես որ պատրաստվիր այն մեղեդուն, որ ես նվագելու եմ քո կողերի վրա: Մեկ, երկու....

— Երեք,— գոռաց հսկան և իսկույն վրա տվեց:

Լավ էր, որ Ռոբինը արագ էր շարժվել, որովհետև շատ ծանր էր այն հարվածը, որը հազիվ դիպավ նրա ուսին: Նա խուսափեց դրանից՝ միաժամանակ նախապատրաստվելով հարվածի: Մի ուստյուն արեց դեպի հակառակորդը և ծանր հարված հասցրեց նրան:

Մենամարտը թեժացավ: Ուժը պայքարում էր ճարպկության դեմ, և մենամարտն ուրախ էր անցնում: Անծանոթ մարդու ծանր հարվածները սուրում էին Ռոբինի գլխի շուրջը: Իսկ այն ճարպիկ հարվածները, որ նա էր հասցնում հակառակորդի կողերին շատ ցավեցրին նրա մարմինը:

Չնայած դրան, կես ժամի չափ յուրաքանչյուրը պինդ կանգնեց իր տեղում, մի ոտնաչափ անգամ ետ կամ առաջ չշարժվելով: Ոչ մեկի մտքով չէր անցնում «բավական է» գոչել: Հսկան, որին դուր էր գալիս այսպիսի մենամարտը, շարունակում էր ուրախ ժպտալ: Ռոբինն էլ էր ժպտում: Աշխույժ մենամարտը նրան էլ էր դուր գալիս: Բայց ի վերջո հսկայի դեմքը շառագունեց և շնչառությունը ծանրացավ: Նա կատաղած առաջ նետվեց այդ հանդուգն մարդու հաշիվը մաքրելու: Մի թեթև շարժումով Ռոբինը խուսափեց հակառակորդի հարվածից, ապա վեր ցատկեց ու մի այնպիսի հարված հասցրեց անծանոթին, որ հսկան համարյա ջուրն էր ընկնում:

— Ազնիվ խոսք, դու պինդ ես խփում,— գոչեց նա պատասխան հարված հասցնելով Ռոբինի գլխին:

Դա մի շատ բարեհաջող հարված էր: Այդ մի պահին Ռոբինն ավելի շատ աստղ տեսավ, քան բոլոր աստղագետները մինչ այդ հայտնաբերել էին: Եվ այդ հարվածից նա ջուրն ընկավ:

Սառը ջուրը նրան իսկույն ուշքի բերեց: Բայց ափ դուրս գալու նրա փորձերը ապարդյուն անցան: Հակառակորդը քահ-քահ ծիծաղում էր նրա վրա, բայց և այնպես օգնեց նրան:

— Հա՛, սքանչելի բարեկամս,— գոռաց հսկան,— որտե՞ղ ես այժմ: Արի՛, արի դուրս քաշեմ քեզ:— Եվ նա իր երկար գավազանը մեկնեց Ռոբինին՝ ասելով.

— Բռնիր սրանից, որ դուրս քաշեմ:

Ռոբինը բռնեց ձողից և թրջված մկան նման դուրս եկավ ջրից: Ուշքի գալու համար մի պահ պառկեց տաք արևի տակ, հետո նստեց և գլուխը շփեց.

— Բարեկամ, ազնիվ խոսք, դու շատ ուժեղ ես խփում,— ասաց նա:

Ապա վերցրեց իր եղջերափողը, որը մոտիկ էր դրած և փչեց երեք անգամ: Մի պահ լռությունից հետո բացատը լցվեցին քառասունի չափ բարձրահասակ յոմեններ<sup>6</sup>: Նրանք բոլորն էլ Ռոբինի նման լինքով և կանաչ էին հագել: Նրանց գլխավորում էին բարի Ուիլլ Սթյուարթին և այրի կնոջ երեք որդիները:

— Ո՛վ բարի տեր,— ասաց Ուիլլ Սթյուարթին,— այդ ինչպես է պատահել, որ ոսից գլուխ թրջվելես:

— Այս բարեկամը թույլ չտվեց, որ ես կամուրջն անցնեմ,— պատասխանեց Ռոբինը,— և երբ ես խփեցի նրա կողերին, նա էլ պատասխան մի հարված հասցրեց գլխիս, և ես հայտնվեցի ջրի մեջ:

— Որ այդպես է, նա էլ պետք է դրա համը տեսնի,— ասաց Ուիլլը,— բռնեցեք նրան, տղերք:

Նրանք պինդ բռնեցին հսկային, այդպես բռնած էլ տարան մինչև գետակը և ջուրը գցեցին: Ռոբինը թռավ կամրջի վրա և հարցրեց ծիծաղելով.

— Դե՛, սքանչելի բարեկամ, ասա մի տեսնեմ, որտե՞ղ ես դու հիմա:

Մի ուժեղ ճողփյուն լսվեց ի պատասխան և մի պահ հետո հսկան նորից ափ դուրս եկավ և սկսեց մենամարտել բոլոր նետածիգների հետ:

— Էլ բավական է,— ասաց Ռոբինը:— Դու ամենահաճելի մարդն ես, որին ես երբևիցե հանդիպել եմ, և մենք էլ կռիվ չենք անի:

— Համաձայն եմ,— պատասխանեց մյուսը:— Դու էլ ինձ ես դուր գալիս և ուզում եմ իմանալ քո անունը:

— Իմ մարդիկ Ռոբին Յուդ են անվանում ինձ. նույնիսկ Նոթինգեմի շերիֆը գիտի իմ անունը:

— Եթե այդպես է, ապա շատ եմ ափսոսում, որ ծեծեցի քեզ,— ասաց հսկան,— որովհետև ես քեզ էր ման գալիս և ուզում էի միանալ քո ուրախ խմբին: Բայց վայ թե այս մենամարտից հետո մենք անձանոթներ էլ մնանք:

— Ո՛չ, ո՛չ,— պատասխանեց Ռոբինը,— ես շատ ուրախ եմ, որ հանդիպեցիք, թեև ճիշտ որ ես էի ջրի մեջ ընկնողը:

Եվ ընդհանուր ծիծաղի տակ այդ երկու մարդիկ սեղմեցին միմյանց ձեռքերը: Եվ դա նշանավորեց նրանց հավերժ սերտ բարեկամության սկիզբը:

— Բայց դու դեռ չասացիր քո անունը,— ասաց Ռոբինը:

— Ինձ Ջոն Լիթլ են անվանում,— ասաց հսկան:

— Միացիր մեզ, ուրեմն, Ջոն Լիթլ, միացիր, և բարի գալուստ քեզ:

Ուիլլ Սթյուարթին, որը սիրում էր համով կատակներ անել, ասաց,

---

<sup>6</sup> Յոմեն — ազատ գյուղացի, մանր հողատեր (Մ. Թ.):

— Պետք է կնքել երեխային. ես կլինեմ նրա կնքահայրը: Այս փոքր անծանոթը այնպիսի մի գաճաճ է, որ նրա նախկին անունը պետք է փոխել:

Այս խոսքի վրա նա լռեց՝ մինչև գետակից իր եղջրափողը ջրով լցնելը.

— Լսի՛ր, որոյակ իմ,— և նա շաղ տվեց ջուրը հսկայի վրա,— անտառ մտնելիս ստացիր քո անունը. ես կնքեցի քեզ Լիթլ Ջոն<sup>7</sup>:

Այս կատակի վրա մարդիկ քահ-քահ ծիծաղեցին:

— Տվեք Լիթլ Ջոնին մի աղեղ և նետերով լի մի կապարճ ճարեք,— ասաց Ռոբինը հրճվանքով:— Բարեկամ, կարող ես այնպես հմուտ նետ արձակել ինչպես որ կռվում ես ձողով:

— Զառասուն յարդ<sup>8</sup> հեռավորությունից դիպցրել եմ մի փայտի կտորի,— ասաց Լիթլ Ջոնը:

Այսպես ուրախ-ուրախ գրուցելով, խումբը վերադարձավ անտառ՝ փնտրելով իր թաքստոցը: Այստեղ, մի մեծ կաղնու տակ գտան խմբի մնացած մարդկանց: Մի մեծ խարույկ վառեցին և սեղան նստեցին: Ռոբին Յուդը նստեց մեջտեղում, մի կողմում Ուիլլ Սթյուարթին, իսկ մյուսում՝ Լիթլ Ջոնը: Ռոբինը, թեև մենամարտում պարտվածն ինքն էր, գոհ էր օրվա արկածից, որովհետև միշտ չէ, որ կարելի է հանդիպել Լիթլ Ջոնի նման հզոր ու հավատարիմ բարեկամի:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈՒԲԻՆ ՅՈՒԴԸ ՄՍԱՎԱՃԱՌ ԴԱՐՁԱՎ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՏԱՎ ՇԵՐԻՖԻ ՄՈՏ

Հաջորդ առավոտ եղանակը վատ էր, և Ռոբինի խումբը մնաց չոր ու մտերիմ քարայրում: Երրորդ օրը, երբ Ուիլլ Սթյուարթի ընկերներից մեկը մի եղջերու էր որսացել, իսկ Ուիլլն ու մյուսները ծառերի հետևից դուրս էին եկել որսը տանելու՝ հանկարծ Նոթնգեմից եկած քսան նետաձիգ հայտնվեցին բացատի ծայրին: Ուիլլի մարդիկ կռացան, և նիզակները սուրացին նրանց գլուխների վրայով: Հետո մոտակա ծառերի հետևից նրանց մի այնպիսի բարիզալուստով պատասխանեցին, որ շերիֆի մարդիկ փախան: Ճիշտն ասած, նրանցից երկուսը վիրավորվեցին:

Երբ նետաձիգները քաղաք վերադարձան, շերիֆը զայրույթից կարմրատակեց.

— Ի՞նչ,— գոչեց նա,— մի՞թե իմ մարդիկ վախենում են Ռոբին Յուդի մարդկանցից: Եթե նրան գոնե մի անգամ հանդիպեմ, այն ժամանակ կտեսնենք, թե...

Թե ինչ էր ուզում տեսնել՝ նա չասաց: Բայց շուտով նրա ցանկությունը իրականացավ:

<sup>7</sup> Ջոն — հերոսի անունն է, Լիթլ՝ ազգանունը: Նրան կատակով կոչելով Լիթլ Ջոն՝ Ռոբինի մարդիկ բառախաղ են անում, քանի որ «Լիթլ» նշանակում է «փոքրիկ»:

<sup>8</sup> Երկարության չափ, որը հավասար է 0,914 մետրի (Օ. Թ.):

Չորրորդ օրը Լիթ Ջոնն անհետացավ: Խմբի մարդկանցից մեկն ասաց, թե Լիթ Ջոնին տեսել էր մի մուրացկանի հետ խոսելիս, բայց չէր իմացել, թե հետո ուր էին գնացել:

Երկու օր էլ անցավ: Ռոբինը չէր կասկածում Լիթ Ջոնի հավատարմությանը, սակայն վախենում էր, որ անտառապահները բռնած կլինեն նրան: Եվ էլ չկարողացավ համբերել: Վեր կացավ և ձեռքն առավ իր նետն ու աղեղը:

— Տղերք, ես պետք է Նոթինգեմ գնամ,— ասաց նա:— Վաղուց է, ինչ շերիֆը փափագում է ինձ տեսնել և միգուցե նա մի բան ասի ինձ Լիթ Ջոնի մասին:

Խմբից ուրիշներն էլ էին ուզում միանալ նրան, բայց նա թույլ չտվեց:

— Ո՛չ,— պատասխանեց նա ժպտերես,— շերիֆն ու ես այնքան լավ բարեկամներ ենք, որ մեր հանդիպումից վատ բան չի կարելի սպասել: Բայց և այնպես քաղաքի արևմտյան դարպասի դիմացը՝ անտառի եզրին, սպասեցեք ինձ, գուցե և ձեր օգնության կարիքն զգամ մինչև վաղը գիշեր:

Ասաց ու ճանապարհ ընկավ դեպի Նոթինգեմ: Ճանապարհի մի ոլորապտույտում Ռոբինը նկատեց հաղթանդամ մի մսավաճառի, որը ուրախ-ուրախ շվացնում էր ու քշում իր կառքը:

— Բարի լույս, բարեկամ,— ասաց Ռոբինը:— Ուր ես դնում, ո՞ւր ես տանում այդքան միսը:

— Բարի լույս,— պատասխանեց մսավաճառը,— ես մի հասարակ մսավաճառ եմ, գնում եմ Նոթինգեմ՝ մի ծախելու: Տոնավաճառի շաբաթ է: Իսկ դու ո՞վ ես:

— Ես լոքսլեցի մի յոմեն եմ: Մարդիկ ինձ Ռոբին Յուդ են անվանում:

— Ես շատ եմ լսել քո մասին,— ասաց մսավաճառը սարսափահար,— լսել եմ, թե ինչպես ես թեթևացնում գեր քահանաների ու ասպետների քսակները: Բայց ես մի աղքատ մսավաճառ եմ, որը այս մսի կտորն է տանում վաճառելու:

— Մի վախեցիր, բարեկամս,— ասաց Ռոբինը,— քեզանից մի պեննի էլ չեմ խլի: Ես գնել եմ ուզում քո միսը:

Այս խոսքի վրա նա հանեց մի տռուզ քսակ և շարունակեց.

— Այսօր ես ուզում եմ մսավաճառ դառնալ և միս վաճառել Նոթինգեմ քաղաքում: Կարո՞ղ ես ինձ ծախել քո միսը, կառքը և ձին հինգ մարկով:

— Աստված օրհնի քեզ, բարի Ռոբին,— ուրախությունից բղավեց մսավաճառը,— դե, իհարկե, կարող եմ:

— Մի քիչ կաց,— ծիծաղեց Ռոբինը:— Մենք դեռ պետք է փոխենք մեր շորերը: Վերցրու իմը և ինչքան ուժ ունես վազիր տուն, որ արքայական անտառապահները չբռնեն քեզ այս լինքոլն կանաչով:

Ասաց և հագավ մսավաճառի վերնաշապիկն ու գոգնոցը, բարձրացավ կառքը և ուրախ-ուրախ քշեց քաղաք:

Նոթինգեմ հասնելով, Ռոբինը ողջունեց դարպասապահին և կառքը քշեց շուկա: Աներկյունղ ու անհոգ նա իր ձին քշեց այնտեղ, ուր միս էին ծախում: Նա չգիտեր իր մսի գինը և մյուս մսավաճառներից շատ ավելի էժան վաճառեց իր ապրանքը: Տեսնելով, որ նա մի պարզամիտ մսավաճառ է, մարդիկ խոնավում էին նրա կառքի շուրջը և քահ-քահ ծիծաղում նրա կատակների վրա:

Սկզբում մյուս մսավաճառները բարկացան, բայց հետո տեսան, որ ավելի լավ կլինի բարեկամանալ նրա հետ: Եվ ասացին նրան.

— Այսօր մենք շերիֆի հյուրն ենք, դու էլ պիտի գաս մեզ հետ:

Ռոբինը համաձայնեց և իր ամբողջ միսը վաճառելուց հետո թողեց իր ձին ու կառքը հյուրընկալ մի պանդոկապահի մուտ և պատրաստվեց իր ընկերների հետ միասին շերիֆի տուն գնալու:

Տոնավաճառի օրերին շերիֆը սովորություն ուներ ճաշկերույթ տալու առևտրական գանազան համքարությունների: Նրանք վճարում էին շերիֆին շուկայում առևտուր անելու իրավունքի համար, այնպես որ այդ օրերը նրան լավ շահ էին բերում:

Մեծ շուքով շերիֆը սեղան էր նստել արդեն, երբ Ռոբին Ջուդը և երեք-չորս մսավաճառներ մտան դահլիճ: Շերիֆը ողջունեց նրանց ներողամտությամբ ու սիրալիր, հրավիրեց Ռոբինին նստելու իր աջ կողմը, որովհետև մի քանի մսավաճառներ արդեն պատմել էին Ռոբինի առևտրի, կատակների և նրա մսի էժան գնի մասին: Իսկ մյուսներն ասացին, որ նա ապրանքների գնից գաղափար չունի և ով ուզենա կարող է նրան հեշտությամբ կողոպտել:

Իսկ շերիֆը պատրաստ էր մի հիմար մսավաճառի կողոպտելու և շատ ուրախ էր, որ այդպիսի մի զվարթ հյուր էր եկել իր խնջույքին: Եվ այսպես, նա Ռոբինին նստեցրեց իր կողքին և քրքջում էր նրա կատակների ու երգերի վրա:

Ապա ներս մտավ Ջերֆորդի միլորդ Եպիսկոպոսը և նստեց շերիֆի մյուս կողքին: Մինչ այդ Ռոբինը շարունակում էր զվարճացնել շերիֆին ու նրա հյուրերին, կոչ անում իր մսավաճառներին, որ ուրախանան ու խմեն, քանի որ ինքը պատրաստ է գինու փողը վճարել:

— Դու շատ ուրախ մարդ ես երևում,— ասաց շերիֆը,— բայց այս խրախճանքը իմ հաշվին է լինելու: Երևի դու շատ եղջերավոր անասուններ ու շատ ակր<sup>9</sup> հող ունես, որ քսակդ այդքան լայն ես բաց անում:

— Իհարկե,— պատասխանեց Ռոբինը,— եղբայրներս և ես հինգ հարյուր գլուխ անասուն ունենք, բայց չենք կարողանում վաճառել: Դրա համար էլ մսավաճառ եմ դարձել: Բայց ես այդ արհեստը չգիտեմ և ուզում եմ, եթե առնող լինի, ամբողջ նախիրը միանգամից վաճառել:

Շերիֆի ազահ ախորժակը գրգռվեց:

— Ջինգ հարյուր անասո՞ւն,— հարցրեց նա:

---

<sup>9</sup> Հողային չափ, որ հավասար է 4047 քառ. մետրի (Օ. Թ.):

— Հինգ հարյուր տասը գեր անասուններ, որոնք ուզում եմ քան ոսկով ծախել: Մեծ գումար եմ ասում, ի՞նչ է:

«Տեսես երբևէ այսպիսի տխմար մսավաճառ աշխարհում եղե՞լ է, թե՞ չէ»,— մտածեց շերիֆը:

— Ո՛չ, իմ լավ բարեկամ,—ասաց նա, ծիծաղելով:— Ես միշտ էլ պատրաստ եմ մարդկանց օգնելու, եթե այդ գնով քո նախիրն առնող չլինի՝ ե՛ս կառնեմ:

Երբ Ռոբինը շնորհակալություն հայտնեց շերիֆին նրա բարության համար՝ շերիֆն ասաց.

— Վաղը նախիրդ քշիր շուկա և ստացիր փողդ:

— Ո՛չ,— ասաց Ռոբինը,— դա հեշտ գործ չէ. իմ անասունները Գեյմուելլի մոտ տարբեր վայրերում են արածում: Բայց այստեղից հեռավորությունը մի մղոնից ավելի չէ: Իսկ դուք չե՞ի՞ք կամենա գալ վաղը ձեր անասունները ընտրելու:

— Լա՛վ,— պատասխանեց աչքածակ շերիֆը:— Այս գիշեր մնա ինձ մոտ, իսկ առավոտյան՝ միասին կգնանք:

Շերիֆի տանը գիշերելու միտքը դուր չեկավ Ռոբինին: Բայց մերժել չէր կարելի: Նա մի հայացք գցեց հյուրերի վրա: Խրախճանքը եռում էր և բոլորի քեֆը տեղն էր: Մինչ շերիֆն ու Ռոբինը մեղմ ձայնով զրուցում էին, միլորդ եպիսկոպոսը համարյա մրափում էր:

— Համաձայն եմ,— ասաց Ռոբինը: Այդ պահին դուռը բացվեց և ներս մտավ մի ծառա, որը էլի գինի էր բերում: Ծառայի դեմքը խիստ զարմացրեց Ռոբինին: Նա էլ մսավաճառին նկատեց ու մի պահ քարացավ տեղում և հետո շուռ եկավ ու դուրս գնաց դահլիճից:

Լիթլ Ջոնն էր:

Ի՞նչ գործ ուներ Լիթլ Ջոնը շերիֆի տանը: Ինչո՞ւ չէր հայտնել խմբին այդ մասին: Արդյոք հավատարիմ էր մնացել խմբին: Ռոբինը չգտավ այս հարցերի պատասխանը:

Մինչ մսավաճառները ուրախ երգում էին, Լիթլ Ջոնը ուրիշ ծառաների հետ միասին ներս մտավ և փսփսաց Ռոբինի ականջին.

— Այս գիշեր հանդիպիր ինձ մառանում:

Ռոբինը գլխով արեց և սկսեց բարձրաձայն երգել: Ուշ գիշեր էր արդեն: Խրախճանքը շուտով ավարտեց:

Խումբը ցրելուց հետո շերիֆը ծառային հրամայեց, որ Ռոբինին տանի իր սենյակը, իսկ ինքը խոստացավ նրան հանդիպել հաջորդ օրը նախաճաշին:

Ռոբինը կատարեց իր խոսքը և այդ գիշեր հանդիպեց Լիթլ Ջոնի, իսկ հաջորդ օրը՝ շերիֆի հետ: Բայց դա մի ուրիշ պատմություն է, որ դուք կգտնեք հաջորդ գլխում:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇԵՐԻՖԸ ԿՈՐՑՐԵՑ ԵՐԵՔ ԼԱՎ ԾԱՌԱՆԵՐԻՆ ԵՎ ՆՈՐԻՑ ՉՏԱՎ ՆՐԱՆՑ

Նոթինգեմ քաղաքի տոնավաճառներից մեկում, մահակի<sup>10</sup> ուրախ խաղի մեջ Լինքոլնիցի Էրիքին պարտության մատնելուց հետո Լիթլ Ջոնը մտավ շերիֆի մոտ ծառայության: Նա այնտեղ գնաց մուրացկանի շորերով ծպտված: Լինքոլնի հայտնի չեմպիոնին տանելուց հետո նրա համբավը սկսեց տարածվել: Այա սկսեց նետածիզների մի մրցախաղ, որտեղ ևս առաջին մրցանակը շահեց: Իր վարպետության համար շերիֆը առաջարկեց նրան իր մոտ ծառայության մտնել: Լիթլ Ջոնը համաձայնվեց, և գնաց շերիֆի մոտ՝ Ռեյնոլդ Գրինլիֆ անվան տակ: Բայց այդ օրը շերիֆի համար սև օր եղավ, որովհետև Լիթլ Ջոնը միտք չունեի լավ ծառայելու:

Անցավ երկու օր: Եկավ մսավաճառների խրախճանքի օրը: Մեծ եղավ Լիթլ Ջոնի զարմանքը, երբ դահլիճ մանելով, տեսավ Ռոբին Յուդին այդպիսի մի տարօրինակ խմբի մեջ բազմած: Բայց, ինչպես տեսանք, երկուսն էլ պահեցին զաղտնիքը և պայմանավորվեցին հանդիպելու նույն գիշերը: Մինչդեռ գոռոզ շերիֆը չգիտեր, որ իր հարկի տակ ապաստան են գտել օրենքից դուրս համարվող երկու նշանավոր մարդիկ:

Քեֆից հետո, երբ արդեն ուշ գիշեր էր, Լիթլ Ջոնը քաղց զգաց և գնաց մառան, բայց այնտեղ նա հանդիպեց գեր մառանապետին, որը ուտելիք չուրեք նրան: Դրանից հետո Լիթլ Ջոնը նրան այնպես հասցրեց, որ մառանապետը գետին տապալվեց:

— Պառնկիր այդտեղ,— ասաց շերիֆի ծառան,— մինչև որ ուշքի գաս և գնաս քնելու: Եվ, վերցնելով իր սրտի ուզածը, սկսեց ուտել ու խմել:

Շերիֆը մի խոհարար ուներ, հաղթանդամ ու խիզախ մի մարդ: Աղմուկը հասավ նրա ականջին և նա եկավ տեսնելու, թե ինչ է պատահել: Երբ տեսավ, որ Լիթլ Ջոնը ուտում ու խմում է, իսկ գեր մառանապետը պառնկած է հատակին՝ երկուսի մեջ իսկույն կռիվ սկսվեց: Մի ամբողջ ժամ տևեց նրանց կռիվը: Այա մի պահ կանգ առան: Լիթլ Ջոնը առաջարկեց միասին ուտել ու խմել և ապա շարունակել կռիվը: Խոհարարը համաձայնվեց, որովհետև նա սիրում էր լավ կռվել և լավ էլ ուտել: Բայց ուտելուց հետո մարդ լավ է տրամադրվում ընկերոջ հանդեպ: Եվ նրանք որոշեցին վերջ տալ կռվին ու բարեկամանալ: Լիթլ Ջոնը խոհարարին ասաց, որ նա կարող է ավելի լավ ծառայության մտնել:

— Իսկ ո՞ւմ մոտ պիտի ծառայեմ,— հարցրեց խոհարարը:

— Ինձ մոտ,— պատասխանեց նորեկ մսավաճառը, մառանից ներս մտնելով:— Ես Ռոբին Յուդն եմ:

Խոհարարը խիստ զարմացավ: Ռոբին Յուդը շերիֆի հարկի տա՞լ:

— Վա՛հ, ազնիվ խոսք, դու քաջ մարդ ես եղել,— ասաց նա:— Ես շատ պատմություններ եմ լսել քո խիզախ գործերի մասին: Իսկ այս հաղթանդամ մարդն ո՞վ է:

---

<sup>10</sup> Մոտ յոթ ոսնաչափ երկարություն ունեցող մի փայտ, որ գյուղացիները որպես զենք են գործածել (Օ. Թ.):

— Ինձ Լիթլ Ջոն են անվանում, ո՛վ բարի մարդ:

— Երդվում եմ, Լիթլ Ջոն կամ Ռեյնոլդ Գրինլիֆ, որ դու ինձ շատ ես դուր գալիս: Ես Մաչն եմ, ջրաղացպանի որդի: Եթե դուք ինձ ընդունեք, ես մեծ ուրախությամբ կգամ ձեզ մոտ ծառայության:

— Շատ լավ,— պատասխանեց Ռոբինը:— Բայց ես պետք է վերադառնամ իմ ննջարանը: Երկուսդ էլ բախտավոր եք, որ այս տանը շատ գինի կար այսօր և ձեր կռվի աղմուկը Ռոբինից բացի ոչ ոքի ականջին չհասավ: Եթե դուք այս գիշեր մեկնեք այստեղից՝ ես կմիանամ ձեզ վաղը՝ լայնարձակ կանաչ անտառում:

— Բայց, ո՛վ բարի տեր,— ասաց խոհարարը,— դու գիշերը չպետք է մնաս այստեղ: Մեզ հետ արի: Շերիֆը հրամայեց իր պահակներին, որ բոլոր դարպասները հսկեն. բայց ես ծանոթ եմ արևմտյան դարպասի պահակին և նա մեզ բաց կթողնի, իսկ վաղը քեզ կկալանավորեն:

— Ո՛չ, չեն կալանավորի,— ծիծաղեց Ռոբինը,— որովհետև ես դուրս եմ գալու հենց շերիֆի հետ միասին: Դե, այժմ, Լիթլ Ջոն և դու՝ Մաչ, ջրաղացպանի որդի , շտապեցեք գնալ: Անտառի եզրին կգտնեք իմ ուրախ մարդկանց: Ասացեք նրանց, որ վաղը մի քանի եղջերու որսան, որովհետև երեկոյան հյուրեր ենք ունենալու:

Եվ Ռոբինը մեկնեց այնպես անսպասելի, ինչպես որ եկել էր:

— Բարեկամ,— ասաց Լիթլ Ջոնը,— գնալուց առաջ մեզ հետ վերցնենք շերիֆի արծաթե ափսեներից մի քանիսը, հարկավոր կլինեն մեր խնջույքին:

Խոհարարը համաձայնեց: Նրանք վերցրին մի մեծ պարկ, լցրին արծաթե ափսեներով և հեռացան նախ տնից, ապա քաղաքից ու գնացին Շերվուդ անտառի հարազատ ապաստարանը:

Հաջորդ առավոտյան՝ նախաճաշին, Ռոբին Յուդը հանդիպեց շերիֆին և տնատերը իսկույն խոսք բաց արեց անասունների հոյակապ նախրի մասին, որ արածում էր Գեյմուելլի մոտ և որը նա ուզում էր գնել 20 ոսկով: Այս անգամ էլ Ռոբինը իրեն հիմար ձևացրեց, իսկ շերիֆն առանց ձևականության ասաց, որ ինքը ուզում է անհապաղ գնալ և տեսնել նախիրը:

Ու այսպես ճամփա ընկան նրանք: Ռոբինը քշում էր մսավաճառի փոքր կառքը, իսկ շերիֆը գնում էր ձիով: Անցան կրնկաբաց դարպասներով, դուրս եկան Նոթինգեմ քաղաքից դեպի Շերվուդ անտառը տանող ճանապարհը: Այժմ խորանում էին անտառի մեջ: Ռոբինը ցնծագին շվացնում էր և ուրախ եղանակներ երգում:

— Բարեկամ, ինչո՞ւ ես այդքան ուրախ,— հարցրեց շերիֆը, որին դուր չէր գալիս անտառի լռությունը:

— Վախից եմ շվացնում,— պատասխանեց Ռոբինը:— Իսկ ինչի՞ց ես վախենում, երբ Նոթինգեմի շերիֆի հետ ես,— ասաց ուղեկիցը գոռոզաբար:

— Ասում են, որ Ռոբին Յուդն ու նրա մարդիկ չեն վախենում շերիֆից,— ասաց Ռոբինը,— վերջին անգամ քաղաք գալիս, ես իմ աչքով տեսա Ռոբին Յուդին այս ճանապարհի վրա:

— Ասում ես քո աչքով տեսա՞ր,— հարցրեց շերիֆը՝ շուրջը նայելով:

— Այո, նա ուզում էր խլել իմ ձին ու կառքը Նոթինգեմ գևալու համար: Ասում էր, որ ուզում է մսավաճառ դառնալ: Բայց ահա տես...

Այսպես խոսելով նրանք հասան մի ոլորապտույտի, այստեղից նրանց առաջ բացվեց մի հովիտ՝ լի արածող եղջերուներով:

Ռոբինը մատը մեկնեց դեպի հովիտն ու շարունակեց.

— Ահա և իմ անասունների հոտը, ո՛վ բարի տեր շերիֆ. ձեզ դուր գալի՞ս է:

— Բարեկամ,— ասաց շերիֆը,— ես ուզում եմ դուրս գալ այս անտառից, որովհետև ինձ ոչ այսպիսի նախիրներն են դուր գալիս, ոչ էլ քո դեմքը: Այնպես որ դու գնա քո ճանապարհով, ես՝ իմ:

— Ո՛չ,— ծիծաղեց Ռոբինը բռնելով շերիֆի ձիու սանձից,— ձեզ ուղեկցելը մի այնպիսի հազվագյուտ առիթ է, որից չի կարելի այդքան հեշտությամբ հրաժարվել: Բացի դրանից, ես, ուզում եմ, որ դու հանդիպեք իմ ընկերներին և հաց կտրեք նրանց հետ:

Այս խոսքի վրա նա հանեց իր եղջերափողը և երեք անգամ փչեց: Եղջերուները փախան, իսկ ծառերի հետևից դուրս թռավ մոտ քառասուն մարդ, բոլորն էլ լինքով և կանաչ հագած, ձեռներին՝ պրկված աղեղներ և կարճ թրեր՝ կողքերից կախած: Նրանք մոտ վազեցին Ռոբինին ու հարգալիր ողջունեցին նրան, մինչդեռ շերիֆը զարմանքից քար էր կտրել իր ձիու վրա:

— Բարո՛վ եք եկել կանաչ անտառը,— ասաց խմբի գլխավորներից մեկը, շերիֆին մոտենալով:

Շերիֆը մի գայրալից հայացք գցեց նրա վրա: Լիթլ Ջոնն էր այդ:

— Օ՛հ, Ռեյնոլդ Գրինլիֆ,— ասաց նա,— դու ինձ դավաճանե՞լ ես:

— Դուք եք մեղավորը, տեր իմ: Երբ ձեր տանն էի ինձ ուտելու բան չէին տալիս,— ասաց Լիթլ Ջոնը:— Բայց մենք ձեզ մի այնպիսի խնջույք ենք տալու, որ անկասկած ձեզ դուր կգա:

— Շատ բարի, Լիթլ Ջոն,— ասաց Ռոբին Յուդը:— Վերցրու նրա ձիու սանձը և տանենք պատվենք հյուրին, որ մեզ մոտ խնջույքի է եկել:

Այնուհետև ամբողջ խումբը ետ դարձավ և գնաց անտառի խորքը:

Կեռումեռ ճանապարհներով երկար գնալուց հետո նրանք անցան մի նեղ ծառուղով, որը կաղնիներով շրջապատված մի բացատ էր տանում: Այնտեղ՝ հաստաբուն մի կաղնու տակ, հաճելի մի խարույկ էին վառել, որի շուրջը մի խումբ յոմեններ էին բոլորել՝ թվով հավասար Ռոբին Յուդին ուղեկցող մարդկանց:

Յենց որ Ռոբինը երևաց, նրանք վեր թռան տեղներից և հարգալիր ողջունեցին իրենց գլխավորին: Շատ էին ուրախացել նրա վերադարձով:

— Ինձ լսեք, բարի մարդիկ,— գոչեց Ռոբին Յուդը,— մինչև որ մեր նոր խոհարարը, որը այժմ մեզ մոտ է, մեր պատվարժան հյուրին արժանի մի ճաշ եփի, եկեք ի պատիվ նրան մի քիչ խաղ անենք:

Ռոբին Յուդը գունատված շերիֆին նստացրեց ամենամեծ կաղնու տակ ու ինքն էլ նստեց նրա կողքին:

Սկզբում շերիֆին մահակի մի սքանչելի խաղ ցույց տվեցին, որից հետո տեղի ունեցավ լավագույն նետաձիգների մի օրինակելի մրցություն: Շերիֆը, որը բոլոր մարդկանց նման սիրում էր ճարպիկ խաղեր նայել, մոռացավ իր որտեղ լինելը և գոչեց:

— Յիանալի է, հիանալի: Նոթինգեմի ոչ մի տոնավաճառում դեռ այսպիսի վարպետություն տեսած չկամ:

Բայց երբ խումբը սեղան նստեց, հյուրը ականատես եղավ ևս երկու նոր անակնկալի: Երբ խոհարարը եկավ ճաշը մատուցելու՝ շերիֆը ճանաչեց իր նախկին ծառային:

Ի պատասխան շերիֆի զարմանքի, Մաչը՝ ջրաղացպանի որդին, ժպտաց և ճաշերը մատուցեց խմբի մարդկանց: Դրանից հետո շերիֆը կատաղեց: Նա տեսավ իր սեփական արծաթե ափսե՛ն, որը բերել էին իր տնից՝ Նոթինգեմից:

— Ավագակներ,— գոռաց նա:— Դուք ոչ միայն դավաճանել եք ինձ, այլև, գողացել եք իմ լավագույն արծաթե ափսե՛ն: Ո՛չ, երդվում եմ կյանքովս, ձեր ճաշին ես ձեռք չեմ տա:

Բայց Ռոբին Յուդը նրան առաջարկեց կրկին նստել տեղը, ուտել այդ ափսեներից և ուրախանալ, որ իրեն կյանքն էին շնորհել:

Այսպիսով շերիֆը կրկին նստեց իր տեղը և բոլորը ուրախ քեֆ արեցին, կերան ու խմեցին մինչև մայրամուտ:

Յետո շերիֆը վեր կացավ և ասաց,

—Շնորհակալ եմ Ռոբին Յուդ՝ նախկին մսավաճառից և քեզնից՝ Լիթլ Ջոն՝ նախկին մուրացկանից և քեզնից՝ Մաչ՝ նախկին խոհարարից և ձեր բոլորից, բարի մարդիկ, Շերվուդում կազմակերպված այս խնջույքի համար: Բայց արդեն ուշ է և ես պետք է գնամ, ուստի խնդրում եմ ցույց տաք ինձ ճանապարհը:

Յետո Ռոբին Յուդն ու նրա բոլոր մարդիկ ոտքի ելան, խմեցին շերիֆի կենացը և Ռոբինն ասաց,

— Եթե հենց հիմա ուզում եք մեկնել, մենք արգելք չենք լինի: Բայց դուք երկու բան մոռացել եք:

— Ի՞նչ եմ մոռացել,— հարցրեց շերիֆը:

—Մոռանում եք, որ ինձ հետ եկաք եղջերավոր անասունների մի նախիր գնելու. և այն որ՝ նա՛, ով ճաշում է Գրինվուդ Ինսում պետք է վճարի հյուրասիրողին:

Շերիֆը նայեց Ռոբինին՝ դասը մոռացած երեխայի հայացքով:

— Բայց ես մոտս քիչ դրամ ունեմ,— սկսեց նա:

— Իսկ ինչքա՞ն է այդ գումարը, տեր իմ,— հարցրեց Լիթլ Ջոնը,— որովհետև այդ գումարից պետք է դուրս գաք նաև իմ աշխատավարձը:

— Ի՛մն էլ,— ասաց Մաչը:

— Ի՞նչ էլ,— ժպտաց Ռոբինը:

— Այս արծաթե ափսեները մի բան արժե՞ն,— հարցրեց զայրացած շերիֆը:

Այս խոսքի վրա օրենքից դուրս համարվող մարդիկ քահ-քահ ծիծաղեցին:

— Ես կասեմ, թե բանը ինչու՞մն է, տեր իմ,— ասաց Ռոբինը:— Մենք, երեք վատ ծառաներս, մեր աշխատավարձի փոխարեն կվերցնենք այդ երեք ափսեները, իսկ անասունների հոտը կթողնենք ազատ՝ մեր և արքայի տնօրինության տակ: Բայց ինչու՞յքի համար պետք է, որ վճարեք: Ինչքա՞ն դրամ կա ձեզ մոտ:

— Այստեղ քսան ոսկի կա. քսան հատ էլ ունեմ,— պատասխանեց շերիֆը: Եվ լավ էր, որ չստեց, որովհետև Ռոբինը հրաման տվեց.

— Չաշվիր, Լիթլ Ջոն:

Լիթլ Ջոնը վերցրեց շերիֆի քսակը և դրամը հաշվեց:

— Բավականին ճիշտ է,— ասաց նա:

— Այդ դեպքում ձեր ճաշի համար քսան ոսկին բավական է, շերիֆ,— ասաց Ռոբինը,— այդպես չէ՞, տղերք:

— Ճի՛շտ է,— գոչեցին բոլորը միաբերան:— Շերիֆը պետք է երդվի, որ էլ մեզ նեղություն չի տա,— ասաց Ուիլլ Սթյուարթին և բոլորը համաձայնեցին նրա հետ:

— Ուրեմն, այդպես էլ պետք է լինի,— գոչեց Լիթլ Ջոնը, մոտենալով շերիֆին:— Դե, հիմա երդվեք ձեր կյանքով:

— Երդվում եմ,— ասաց շերիֆը բարձրաձայն,— որ ես էլ երբեք նեղություն չեմ տա Շերվուդում ապրող օրենքից դուրս համարվող մարդկանց:

«Բայց որ ձեզանից մեկն ու մեկը ձեռքս ընկնի Շերվուդից դուրս...»,— մտածեց նա ինքն իրեն:

Չետո նա վճարեց քսան ոսկին և կրկին պատրաստվեց մեկնելու:

— Մենք երբեք այսպիսի բարձրաստիճան հյուր չենք ունեցել,— ասաց Ռոբինը,— և քանի որ ուշ է, ճանապարհի մի մասը ես կուղեկցեմ ձեզ, որովհետև ես էի ձեզ այստեղ բերողը: Եվ նա բռնեց շերիֆի ձիու սանձից ու ձին առաջ տարավ բազմաթիվ արահետներով մինչև որ դուրս եկան գլխավոր ճանապարհը:

— Դե, ցտեսություն, բարի շերիֆ,— ասաց նա,— և մյուս անգամ, եթե ուզենաս թալանել մի խեղճ մարդու, հիշիր այն նախիրը, որ ուզում էիր գնել Գեյմուելլի մոտ: Իսկ երբ մյուս անգամ ծառա ընդունես, ստուգիր, որ նա քեզ ծառա չդարձնի:

Այս խոսքի վրա Ռոբինը խփեց ձիուն և շերիֆը քշեց գևաց Նոթինգեմ:

Ահա թե ինչպես շերիֆը կորցրեց իր երեք լավ ծառաներին և կրկին գտավ նրանց:

ԳԼՈՒԽ ՅԻՆԳԵՐՈՐԴ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈՒԲԻՆ ՉՈՒԴՆ ՉԱՆԴԻՊԵՑ ՈՒԼԼ ՍՔԱՐԼԵԹԻՆ

Շատ ժամանակ չէր անցել այն օրից, երբ շերիֆը դաս էր առել Շերվուդի անտառում: Մի գեղեցիկ առավոտ Ռոբին Յուդն ու Լիթլ Ջոնը քայլում էին արահետով: Դա հեռու չէր այն վայրից, ուր նրանք մենամարտել էին իրենց առաջին հանդիպման ժամանակ: Նրանք քայլեցին գետակի հոսանքի ուղղությամբ, թփերի զով ստվերում հանգստանալու: Առավոտը շոգ օր էր խոստանում: Նույնիսկ առվի եզրի ճանապարհը փոշոտ էր, այնպես որ սառնորակ ջուրը շատ դուրեկան էր:

Անդորր և ուրախ օր էր: Երկու ընկերները պառկեցին մեջքերի վրա, հայացքները հառած երկնքում ճախրող ամպերին, հանկարծ ոտնաձայներ լսվեցին: Ինչ-որ մարդ էր գալիս ճանապարհով ուրախ-ուրախ շվացնելով, երբեմն էլ մի զվարթ եղանակ երգելով:

— Ազնիվ խոսք, մի ուրախ թռչուն է գալիս, — ասաց Ռոբինը: — Արի անշարժ պառկե՛ք և հուսանք, որ նրա քսակը սրտի նման թեթև չէ:

Ու նրանք անշարժ պառկեցին: Եվս մի պահ, ու հանկարծ ոտից գլուխ ալ մետաքսե շորեր հագած, շքեղ գլխարկը գլխին մի անձանոթ երևաց: Սրա կողքից մի սիրուն սուր էր կախած: Երկար ու շեկ մազերը փռված էին ուսերի վրա աշակերտուհու պես:

— Ազնիվ խոսք, ուրախ թռչուն է, — արձագանքեց Լիթլ Ջոնն իր ընկերոջը և ավելացրեց, — բայց թույլ մարդ չի երևում: Հապա մի նայիր գեներին և սրունքներին: Ես վստահ եմ, որ հարկ եղած դեպքում շատ լավ կօգտագործի իր գեղեցիկ սուրը:

— Ո՛չ, — պատասխանեց Ռոբինը, — արքունիքի կանանց հաճոյակատարներից է: Ես վստահ եմ, որ մահակը տեսնելուն պես կփախչի: Թաքնվիր այս թփերի հետևը, կտեսնես, թե ինչպես է փախչում: Ինձ թվում է, որ նրա մետաքսե քսակը ավելի շատ պեննա է պարունակում, քան օրենքը թույլ է տալիս Շերվուդում կամ Բարնզոդեյլում ապրող մարդկանց:

Այս ասելով Ռոբին Յուդը դուրս եկավ թփուտից և կանգնեց անձանոթ մարդու ճանապարհին: Սա այնքան դանդաղ էր քայլում, որ դեռ չէր մոտեցել նրանց թաքստոցին: Ռոբինին նկատելով, նա շարունակեց առաջվա պես հանգիստ քայլել, նայելով մեկ աջ, մեկ ձախ, բայց ոչ Ռոբինին:

— Կանգ առ, — գոռաց օրենքից դուրս համարվող մարդը:

— Իսկ ինչո՞ւ, պետք է կանգնեմ, ո՞վ բարի մարդ, — Ռոբինին առաջին անգամ տեսնելով հարցրեց օտարականը քաղցր ձայնով:

— Որովհետև այդպես է իմ կամքը, — պատասխանեց Ռոբինը:

— Իսկ ո՞վ ես դու, — հարցրեց անձանոթը անվրդով:

— Անունս չեմ տա, — պատասխանեց Ռոբինը, — բայց իմացիր, որ եթե քսակումդ թույլատրվող քանակից ավել շիլլինգ<sup>11</sup> լինի, պետք է թեթևացնեմ այն, որովհետև այս անտառում ապրում են շատ արժանավոր մարդիկ, որոնք հարկ եղածից քիչ ունեն:

---

<sup>11</sup> Անգլիական դրամ: 12 պեննան հավասար է 1 շիլլինգի:

Ուրեմն, ազնիվ պարոն, հանձնիր քսակը: Ես ուզում եմ տեսնել, թե ինչքան փող կա մեջը: Անձանոթը քաղցր ժպտաց:

— Դու տարօրինակ մարդ ես,— անվրդով պատասխանեց նա:— Քո ճառը ինձ հրճվանք է պատճառում: Խնդրեմ, շարունակիր, այս առավոտ ես չեմ էլ շտապում:

— Ինչ որ պետք էր՝ արդեն ասացի,— պատասխանեց Ռոբինը զայրացած:— Բայց ես ուրիշ նորություն էլ ունեմ, որից դու դեռ անտեղյակ ես:

— Շատ ափսոս,— ասաց անձանոթը,— որ չեմ կարող քսակս ցույց տալ ամեն մի կոպիտ մարդու: Բացի դրանից, քսակիս ամեն մի շիլլինգն ինձ պետք է: Ուստի, ինչպես, ճանապարհ տուր ինձ:

Բայց Ռոբինը գամված մնաց իր տեղում և պահանջեց, որ օտարականը իսկույն հանձնի իր քսակը:

— Շատ բարի, բարեկամ,— մեղմաբարո պատասխան տվեց անձանոթ մարդը.— ես շատ հանգիստ լսեցի քո ամբողջ ճառը: Դա բոլորն է, ինչ ես կարող էի անել, իսկ այժմ պետք է շարունակեմ իմ ճամփան: Եվ նա էլի սկսեց քայլել մի ուրախ եղանակ երգելով:

— Կանգ առ, ասում եմ,— գոռաց Ռոբինը ջղայնացած, որովհետև նա գիտեր, որ թփերի հետևից Լիթլ Ջոնը լիաթոք կծիծաղի:

— Կանգնի՛ր, ասում եմ,— և նա բարձրացրեց իր մահակը:

— Օ՛,— ասաց անձանոթը, գլուխը թափ տալով:— Շատ եմ ցավում, բայց տեսնում եմ, որ ստիպված պիտի լինեմ դիմել սրիս օգնությանը: Իսկ ես կարծում էի, թե խաղաղասեր մարդ եմ:

Այս խոսքերի վրա նա դուրս քաշեց սուրը և զգաստ կանգնեց:

— Մի կողմ դիր սուրդ,— ասաց Ռոբինը:— Անտառից սրա նման մի ձող կտրիր և արի կարգին մենամարտենք:

Անձանոթն իրեն հատուկ դանդաղկոտությամբ մի պահ միտք արեց, ոտից գլուխ չափելով Ռոբինին: Հետո մի կողմ դրեց սուրը և դանդաղ քայլերով գնաց դեպի կաղնուտը, որտեղ մի ամուր փոքրիկ ծառ գտավ, առանց դժվարության քաշեց հանեց և, հանգիստ ու անվրդով տնկին մաքրելով, ետ դարձավ:

Այդ օրը, ջրի մոտ, երեքին էլ մի մեծ անակնկալ էր սպասում: Մենամարտը խիստ զարմացրեց անձանոթին, Ռոբինին ու Լիթլ Ջոնին: Օտարականը հանդիպել էր մի հակառակորդի, որը մեծ վարպետությամբ պատասխան հարվածներ էր տալիս: Խփելիս Ռոբինը տեսնում էր, որ անձանոթը կաղնու նման պինդ է, մինչդեռ Լիթլ Ջոնը թփերի հետևից նայում էր նրանց ու հրճվում անխոս:

Որոշ ժամանակ այդպես շարունակվեց մենամարտը: Փոշու ամպ էր բարձրացել նրանց շուրջը: Ռոբինը երեք ծանր հարված հասցրեց ալ շորերով մարդուն, բայց հաղթանդամ անձանոթը գետին չտապալվեց: Նա էլ իր հերթին երկու անգամ խփեց Ռոբինին և կռնատակին հասցրած երկրորդ հարվածը համարյա նրա հաշիվը փակեց: Ռոբինը գլորվեց փոշու մեջ, բայց իսկույն վեր թռավ պատասխան հարված տալու, երբ Լիթլ Ջոնը դուրս եկավ թփուտից:

— Կա՛ց,— գոռաց նա և բռնեց անծանոթի ձողից,— կա՛ց ասում եմ:

— Ո՛չ,— պատասխան տվեց անծանոթը անվրդով:— Միևնույն է, ես չեի խփելու քանի դեռ նա ընկած էր գետնին: Բայց եթե ձեզանից շատերը կան թփուտում թաքնված, դուրս կանչիր, և ես բոլորի հետ կմենամարտեմ:

— Ո՛չ, ոչ մի դեպքում,— մեջ ընկավ Ռոբինը,— դու լավ մարդ ես և լավ ջենթլմեն: Էլ չեմ մենամարտի քեզ հետ, իմ մարդիկ էլ նեղություն չեն տա քեզ:

— Թույլ տուր բաճկոնիդ վրայի փոշին թափ տամ, տեր իմ,— ասաց Լիթլ Ջոնը ժպտալով:

— Արդեն բավական թափ են տվել,— պատասխանեց Ռոբինը և գնաց առուն՝ ջուր խմելու և երեսն ու ձեռքերը լվանալու:

Ամբողջ ժամանակ անծանոթը ուշադիր նայում էր Ռոբինին և ունկնդրում նրա ձայնին:

— Եթե չեմ սխալվում,— ասաց նա, վերջապես, մեղմությամբ,— դու Բարնզոդեյի օրենքից դուրս համարվող հայտնի Ռոբին Յուդն ես:

— Ճի՛շտ է,— պատասխանեց Ռոբինը,— բայց այսօր իմ համբավը փոշու մեջ թավալվեց:

— Բայց ինչո՞ւ ես իսկույն չճանաչեցի քեզ,— շարունակեց անծանոթը:— Կարիք չկար այս մենամարտին, քանի որ ես այսօր քեզ գտնելու էի գալիս և կարծում էի, որ կհիշեմ դեմքդ ու ձայնդ: Մի՞թե դու ինձ չես ճանաչում, Ռոբ: Մի՞թե դու չես եղել Գեյմուուելլի կալվածում:

— Վա՛հ, Ուիլլ Գեյմուուելլ, իմ թանկագին վաղեմի բարեկամս, Ուիլլ Գեյմուուելլ,— բացականչեց Ռոբինը՝ բարեկամին սրտագին կրծքին սեղմելով:— Ինչ հիմարն էի, որ քեզ չճանաչեցի: Տարիներ առաջ մենք բաժանվեցինք, իսկ դու շատ ես փոխվել:

Նույնպիսի ջերմությամբ Ուիլլը ողջագուրեց իր հորեղբոր որդուն.

— Ես էլ քեզ չճանաչեցի,— ասաց նա,— դու բոլորովին նման չես այն պատանուն, որի հետ ես խաղում էի հին Շերվուդում, փոխվել և ուժեղացել ես:

— Իսկ ինչո՞ւ էիր ինձ ման գալիս,— հարցրեց Ռոբինը.— դու գիտես, որ ես օրենքից դուրս համարված մարդ եմ և վտանգավոր է ինձ հետ ընկերություն անել: Իսկ ինչպե՞ս թողեցիր հորեղբորս: Ի՞նչ լուր կա օրհորդ Մարիանից:

— Նախ պատասխանեմ քո վերջին հարցին,— ասաց Ուիլլը ծիծաղելով:— Նոթինգեմի նշանավոր դեպքից մի քանի շաբաթ անց տեսա օրհորդ Մարիանին: Նա խնդրեց, որ եթե երբևիցե տեսնեմ քեզ, ասեմ, որ թեև նա վերադառնալու է Էլեանոր թագուհու արքունիքը, բայց երբեք չի մոռանա կանաչ անտառում անցկացրած իր երջանիկ օրերը: Ծեր կալվածատիրոջ առողջությունը դեռ լավ է: Նա թաքուն հպարտանում է քո աղեղի հզորությամբ, հպարտանում է, որ նեղում ես շերիֆին, որին նա չի սիրում, թեև նա դրա մասին չի խոսել: Յորս սիրուցն է, որ ես էլ քեզ նման օրենքից դուրս մարդ դարձա: Նա մի մառանապետ ուներ, մի կոպիտ մարդ, որը երբ ես սովորում էի հեռու մի տեղ, դպրոցում, ամբողջ կալվածքի տերն ու տնօրենն էր դարձել: Յայրս չի գանգատվել՝ մտածելով, որ մարդը լավ ծառա չէ: Երբ ես

վերադարձա, սկզբում ինձ հետ բավական քաղաքավարի էր վարվում, իսկ կալվածատիրոջ հետ կոպիտ էր միայն այն ժամանակ, երբ ես տանը չէի լինում: Մի օր էլ, բաց լուսամուտից ականջիս աղմուկի ձայներ հասան: Կանգ առա և ականջ դրեցի: Ստոր ծառան հորս «գառամած խենթ» էր անվանում: «Խենթն ու սրիկան դու ես», գոռացի ես՝ լուսամուտից ներս թռչելով: Թեև միտք չունեի այդպես ուժեղ խփելու, բայց, դե բազուկներս հզոր են ու ես էլ շատ էի զայրացած, այնպես հասցրի, որ մարդը գլորվեց հատակին ու անշնչացավ: Ինձ թվում է, թե ես ջարդեցի նրա վիզը: Դրանից հետո տեսա, որ հորս սիրույն պետք է հեռանամ: Եվ այսպես հրաժեշտ տվեցի կալվածատիրոջն ու ասացի, թե ուզում եմ փնտրել քեզ Շերվուդի անտառում:

— Ազնվությամբ եմ ասում,— խոսեց Ռոբինը,— որպես օրենքից դուրս համարվող մարդ շատ բարեհամբույր տեսք ունեիր: Երբ քեզ տեսա, սիրուն շորեր հագած ճանապարհով գալիս, մի ուրախ եղանակ երգելով, մտքովս չանցավ, թե այս աշխարհում դու էլ թշնամի կունենաս: Եվ իրոք Լիթլ Ջոնին ասացի, որ քսակդ սրտիդ պես թեթև չի լինի:

— Միգուցե «գլխիս պես» ասացիր,— ծիծաղեց Ուիլլը:

— Իսկ սա մեծն Լիթլ Ջոնն է: Սեղմիր ձեռքը և խոստացիր, որ մի օր անտառում ընկերական մենամարտ կանենք:

— Խոսք եմ տալիս՝ ահա իմ ձեռքը,— ասաց Լիթլ Ջոնը սրտագին:— Ազգանունդ ինչպե՞ս է, նորից ասա:

— Պետք է փոխել,— ասաց Ռոբինը,— սպասիր մի քիչ մտածեմ: Ահ, գտա: Նա մեզ մոտ եկավ ալ շորերով, հենց դա էլ կլինի նրա անունը: Բարով եկար մեր կանաչ անտառը, Ուիլլ Սքարլեթ<sup>12</sup>:

— Օ՛, բարի գալուստ, Ուիլլ Սքարլեթին,— ասաց Լիթլ Ջոնը և երեքն էլ նորից ձեռք ձեռքի տվին ու երդվեցին հավատարիմ մնալ միմյանց և Ռոբին Յուդի մարդկանց՝ Շերվուդ անտառում:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈԲԻՆ ՅՈՒԴԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎԱՆԱԿԱՆ ԹԱԶԻՆ

Ամառը՝ երբ տերևները կանաչ են լինում և ծաղիկները՝ թարմ ու ցնծուն, Ռոբին Յուդը և բոլոր նրա զվարթ մարդիկ պատրաստ էին խաղալու: Եվ այսպես, ամեն տեսակ խաղերն ու մարզանքները ավելի ու ավելի հմուտ էին դարձնում նրանց: Եվ շուտով խումբը հռչակվեց ամբողջ Անգլիայում:

Երբ Ռոբինը լսում էր որևէ մեկի հմուտ զինավարժության մասին՝ սովորաբար գտնում էր այդ մարդուն և ուժերը փորձում նրա հետ մենամարտելով, իսկ դա միշտ չէ, որ Ռոբինի համար ուրախ վախճան էր ունենում: Եթե նրան դուր գար այդ մարդը, նա առաջարկում էր ծառայության մտնել Շերվուդ անտառի խիզախ մարդկանց մոտ:

---

<sup>12</sup> Սքարլեթ անգլերեն նշանակում է ալ:

Մի օր, փորձնական նետաձգությունից հետո, Ռոբին Յուդը բարձր գնահատեց Լիթլ Ջոնի վարպետությունը և ասաց, որ երբեք նրանից լավ նետաձգի չի հանդիպել:

Այս խոսքի վրա Ուիլլ Սքարլեթը քահ-քահ ծիծաղեց ու ասաց.

— Թաք անունով մի ճգնավոր է ապրում Ֆաունթեյնզ վանքում, որը կարող է հաղթել նրան էլ, քեզ էլ:

— Ես ո՛չ կուտեմ, ո՛չ էլ կխմեմ մինչև որ այդ ճգնավորին չտեսնեմ,— ասաց Ռոբինը:

Եվ իսկույն սկսեց զինվել այս նոր արկածի համար: Գլխին պողպատե սաղավարտ դրեց, Լինքոլն կանաչի տակից օղագրահ հագավ, կողքից կախեց սուրը, ձեռքն առավ երկար աղեղն ու նետը:

Այսպես Ռոբինն ուրախ-ուրախ ճամփա ընկավ և, ոլոր-մոլոր նեղ արահետներով անցնելուց հետո, հասավ մի կանաչ, լայն բացատ, որի եզրով մի գետակ էր հոսում: Հանդարտ հոսող հաճելի մի գետակ էր դա, սակայն միջնամասում բավականին խորն էր թվում: Ռոբինը ոտքերը թրջել չէր ուզում ու նստեց ափին հանգիստ առնելու:

Թփի տակ հանգիստ նստած էր, երբ մյուս ափից մի ուրախ երգ հասավ ականջին: Շատ չանցած երկու տաք-տաք վիճող մարդկանց ձայներ լսվեցին: Մեկը գովում էր պուդինգը<sup>13</sup>, մյուսը՝ մսակարկանդակը: Ռոբինը ապշած լսում էր, որովհետև ձայները զարմանալիորեն նման էին իրար:

Հետո մյուս ափի թփերը բացվեցին և գաղտնիքը պարզվեց: Խոսողն ու երգողը միևնույն մարդն էր երկար սքեմ հագած մի վանական: Գլխին ասպետի սաղավարտ կար, ձեռքին՝ մի մեծ մսակարկանդակ: Վանականը նստեց ջրի ափին: Վեճն ավարտվել էր: Հաղթանակը մսակարկանդակն էր տարել:

Չովանալու համար նա նաև հանեց սաղավարտը գլխից, որ խնձորի նման կլոր էր ու ողորկ: Նրա այտերն էլ ողորկ էին ու կարմիր, իսկ մանր խաժ աչքերը զավեշտական մի փայլ ունեին: Նա այնքան հաղթանդամ էր, որ կարող էր ամեն մեկի հետ մենամարտել: Նստելուց նրա սքեմը բացվեց և տակից մի սուր երևաց, որը Ռոբինի սրից փոքր չէր: Վանականը սկսեց խժռել իր կարկանդակը:

Երբ Ռոբինը, որը շատ քաղցած էր, տեսավ այս տեսարանը, ձեռքն առավ իր աղեղն ու մի նետ արձակեց:

— Հե՛յ, վանական,— բղավեց նա,— տար ինձ մյուս ափը, եթե ոչ պատասխանատու չեմ քո կյանքի համար:

Ողջույնի այս եղանակը խիստ զարմացրեց վանականին, և նա ձեռքը տարավ սրին: Ապա բարձրացրեց գլուխը և տեսավ Ռոբինի նետը:

— Ցած դիր աղեղդ, բարեկամ,— բղավեց նա:— Զեզ կանցկացնեմ այս ափը: Մեր պարտքն է օգնել միմյանց, և քո սքանչելի նետը վկայում է, որ դու ուշադրության արժանի մարդ ես:

---

<sup>13</sup> Քաղցրեղեն (Օ. Թ.):

Այս խոսքի վրա վանականը դանդաղ վեր կացավ, մի կողմ դրեց կարկանդակը, սքեմս ու սուրը և անցավ գետակը:

Հենց որ Ռոբինը նստեց նրա լայն մեջքին, վանականը նորից ջուրը մտավ և անխոս հասավ մյուս ափը:

Ճգնավորի մեջքից իջնելով, Ռոբինն ասաց.

— Շատ շնորհակալ եմ, բարի ճգնավոր:

— Ասում ես, շա՛տ շնորհակալ ես,— կրկնեց մյուսը սուրը դուրս քաշելով:— Հիմա իմ հերթն է քեզանից պահանջելու անել այն, ինչ ես արեցի: Կարճ ասած, որոյակ իմ, դու ինձ կրկին ետ ես տանելու, քանի որ գործ ունեմ մյուս ափին:

Վանականը շատ հանգիստ էր խոսում, բայց այնպես հանկարծակի դուրս քաշեց իր թուրը, որ Ռոբինը ժամանակ էլ չունեցավ աղեղը ցած առնել ուսից:

— Ո՛վ բարի հայր, կտանեմ քեզ, բայց ոտքերս կթրջվեն,— սկսեց նա:

— Հո քո ոտքերն իմից լավը չե՞ն,— պատասխանեց դիմացինը:

— Ես քո ուժը չունեմ,— շարունակեց Ռոբինը,— այդ սաղավարտն ու սուրը բավականին ծանր են, բացի դրանից, դու էլ ես շատ ծանր:

— Մինչև որ խոսք չտաս, որ ջրից կանցկացնես ինձ, զենքս ցած չեմ դնի,— պատասխանեց դիմացինը հանգիստ:

— Համաձայն եմ,— ասաց Ռոբինը և վանականը մի կողմ դրեց սաղավարտն ու սուրը: Ռոբինը կռացրեց իր ջլապինդ մեջքը և, ինչպես խոստացել էր, շալակեց նրան:

Երբ խեղճ Ռոբինը, գեր վանականին շալակած, հասավ մյուս ափը, իջեցրեց նրան և իսկույն դուրս քաշեց իր սուրը:

— Ո՛վ բարի հայր,— ասաց նա,— հիմա էլ դու պիտի ինձ ետ տանես, թե չէ ազնիվ խոսք, կխփեմ:

— Դու խելոք ես, որոյակ իմ,— հանգիստ պատասխանեց վանականը, ես տեսնում եմ, որ գետակի ջրերը քո սիրտը չեն հովացրել: Այսպիսով, ես նորից պիտի կռացնեմ իմ մեջքը բռնադատողի առաջ ու ետ տանեմ քեզ:

Կրկին Ռոբինը հուզված ցնծալով բարձրացավ, սուրը ձեռքին պահած, որ պատրաստ կանգնի մյուս ափին: Բայց երբ հասան գետակի ամենախոր մասը, վանականը հանկարծ ցած զցեց Ռոբինին իր գնդիկ մեջքից:

— Դե, ա՛ռ քեզ,— ասաց նա,— դե գնա, սքանչելի բարեկամս, ուզում ես խեղդվիր, ուզում ես լող տուր:

Եվ նա անխոս հասավ իր ափը, մինչդեռ Ռոբինը մեծ դժվարությամբ դուրս եկավ ցամաք:

Ռոբինը կատաղել էր: Նա վերցրեց իր աղեղը և իրար հետևից արձակեց նետերը արժանավոր վանականի վրա: Բայց նա անվնաս մնաց, որովհետև օղագրահ էր հագել:

— Շարունակի՛ր, շարունակի՛ր, իմ լավ բարեկամ,— բղավեց նա ծիծաղելով,— շարունակիր նույն թափով:

Ռոբինը շարունակեց մինչև որ իր նետերը վերջացան: Հետո սկսեց գոռալ և անպատվել վանականին:

Ի պատասխան՝ վանականն առաջարկեց սրամարտել:

— Եթե ուզում ես սրամարտել, արի գետակի մեջտեղը,— ասաց վանականը ու սուրը բարձրացրած մտավ գետակը, հասավ մեջտեղը, ուր նրան դիմավորեց օրենքից դուրս համարվող խիզախ մարդը:

Երկարատև և կատաղի մի մենամարտ սկսվեց: Շատ ծանր հարվածներ փոխանակեցին, բայց յուրաքանչյուրը տեսավ, որ դիմացինը օղագրահ էր հագել, որը չէր կարելի ծակել:

Ժամանակ առ ժամանակ նրանք դադար էին տալիս շունչ առնելու համար և ատելությամբ լի հայացքներ փոխանակում. ո՛չ Ռոբենն էր երբևէ այդպիսի ուժեղ՝ հակառակորդի հանդիպել, ո՛չ էլ ճգնավորը: Այսպես նրանք երկար մենամարտեցին առանց միմյանց առաջ տեղի տալու:

Ի վերջո Ռոբինի ոտքը սայթաքեց մի կլոր քարի վրա և ընկավ ծնկաչոք: Բայց հակառակորդը սպասեց մինչև որ Ռոբինը կրկին ոտքի կանգնի:

— Իրոք,— ասաց օրենքից դուրս համարվող մարդը,— դու լավագույն սրամարտիկն ես, որ երբևիցե տեսել եմ: Ուզում եմ մի բան խնդրել քեզանից:

— Ի՞նչ բան,— ասաց վանականը:

— Թույլ տուր եղջրափողս հանեմ և երեք անգամ փչեմ:

— Փչի՛ր ինչքան ուզում ես,— ասաց վանականը:

Բալլադը պատմում է, որ երբ Ռոբինը հանեց իր փողը և փչեց երեք անգամ, արձագանքը հասավ մոտակա բարձունքներին:

Իսկույն հիսունի չափ աղեղնազեն յոմեններ վազեցին դեպի գետակը:

— Սրանք ո՛ւմ մարդիկ են,— հարցրեց վանականը:

— Իմ մարդիկ են,— ասաց Ռոբին Յուդը, տեսնելով, որ հիմա էլ ծիծաղելու իր հերթն է եկել:

Խնդրելու հերթը հիմա էլ վանականին հասավ:

— Թույլ տուր մատներս տանեմ բերանս և երեք անգամ շվացնեմ:

Ռոբինը համաձայնվեց, և վանականը ձեռքը տարավ բերանը և երեք անգամ զիչ սուլեց: Հիսուն խոշոր գամփռներ այնպես արագ սուրացին ու հասան գետափ, որ Ռոբինի մարդկանց հետ գրեթե միաժամանակ արդեն պատրաստ կանգնած էին գետակի հակառակ ափին: Շները կատաղի հայացք ունեին:

— Զո ամեն մի մարդու դիմաց մի շուն, իսկ ինքս՝ քո դեմ դուրս կգամ,— բղավեց վանականը:

Դրան հաջորդեց մի տարօրինակ և հիմար ճակատամարտ: Սթյուբլին, Մաչը, Լիթլ Ջոնը և օրենքից դուրս համարվող մյուս մարդիկ սկսեցին արձակել իրենց նետերը դեպի հակառակ ափը, սակայն շները, որոնց վանականը վարժեցրել էր, ճարակորեն խուսափում էին նետերից, հետո վազում էին, գտնում և բերաններն առած ետ բերում դրանք:

— Կյանքումս այսպիսի շներ տեսած չկամ,— բացականչեց Լիթլ Ջոնը ապուշ կտրած:

— Հավաքի՛ր շներդ, վանական Թաք,— բղավեց Ուիլլ Սքարլեթը, որը այդ ժամանակ եկել էր մարտավայրը և կուշտ ծիծաղում էր տեսարանի վրա:

— Վանական Թա՛ք,— զարմանքով բացականչեց Ռոբինը:— Մի՞թե դու վանական Թաքն ես: Ուրեմն ես քո բարեկամն եմ, որովհետև ես քեզ էի փնտրում:

— Ես Ֆաունթինզ Դեյլցի մի աղքատ վանական եմ,— պատասխանեց դիմացինը, շներին սուլելով:— Իմ անունը վանական Թաք է: Յոթ տարի ես այստեղ եմ ապրում, կիրակի օրերը քարոզ եմ կարդում, պսակում, կնքում և թաղում մարդկանց, իսկ հարկ եղած ժամանակ էլ՝ կռվում: Դեռ չեմ հանդիպել ինձանից ուժեղ յոմենի: Բայց դու հզոր հակառակորդ ես: Ես ուրախ կլինեի իմանալու քո անունը:

— Նրա անունը Ռոբին Յուդ է, օրենքից դուրս համարված մի մարդ, որը այս անվան կնունքի ժամանակ քո օգնականն էր,— ասաց Ուիլլ Սքարլեթը՝ հայացքը զցելով երկու հակառակորդների թրջված շորերին: Այս կատակի վրա խումբը քահ-քահ ծիծաղեց:

— Ռոբին Յո՛ւդ,— բացականչեց վանականը:— Դու իրո՞ք այդ հայտնի յոմենն ես: Այդ դեպքում դու ինձ շատ ես դուր գալիս: Ես շատ եմ լսել քո ուրախ գործերի մասին:

— Թե որ այդպես է, քո շներին հետո՞ վերցրած արի մեզ հետ կանաչ անտառ,— ասաց Ռոբինը ուրախացած:— Դու մեզ հարկավոր ես: Քեզ գտնելու համար է, որ եկել եմ այստեղ: Շերվուդ անտառում մենք քեզ համար մենաստան կսարքենք, և դու մեզ հեռու կպահես չար փորձանքներից: Կմիանա՞ս մեր խմբին:

— Դե իհարկե, կմիանամ,— ուրախությամբ հավանություն տվեց վանականը:— Ես նորից կանցնեմ այս գետակը և ձեզ հետ կգամ փառավոր կանաչ անտառը ու որպես մի աղքատ վանական հավատարմորեն կծառայեմ ձեզ:

Եվ այսպես, վանական Թաքը միացավ Ռոբինի խմբին: Նա լավ անտառաբնակ էր և հմուտ խոհարար:

## ԳԼՈՒԽ ՅՈՒՅԵՐՈՐԴ

### ԱԼԼԱՆ-Է-ԴԵՅԼԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

Այդ երեկո, ուրախ մարդկանց համար ճաշ պատրաստելիս, վանական Թաքն ու Մաչը՝ ջրաղացպանի որդին, լավ բարեկամացան: Թաքը շատ ուրախացավ, իմանալով, որ անտառում ապրում էր այնպիսի մեկը, որ շերիֆի նման մարդու խոհարարն էր եղել: Իսկ Մաչը շատ զարմացավ վանականի խոհարարական գիտելիքների վրա: Ու նրանք միասին աշխատեցին վաղեմի բարեկամների պես, ու այնպիսի սքանչելի ճաշեր պատրաստեցին, որ Ռոբին Յուդը և նրա խիզախ մարդիկ սովորականից ավելի կերան:

Այդ երեկո Ռոբինը անտառ գնաց բարձր տրամադրությամբ: Այս անգամ, հակառակ իր սովորության, նա չկանգնեցրեց առաջին իսկ պատահած անցորդին՝ հետը մենամարտելու համար: Դրա փոխարեն ինչ-որ երգի հնչուններ լսելով, թաքնվեց ծառի հետևը՝ սպասելով երգչին:

Գուցե նա հիշեց նաև, թե մի քանի օր դրանից առաջ, երբ Ուիլլ Սքարլեթը քայլում էր ուրախ-ուրախ երգելով՝ ինչպես էր նրան կանգնեցրել ճանապարհի վրա:

Ուիլլի նման այս մարդն էլ ալ շորեր էր հագել, թեև այնքան գեղեցիկ տեսք չուներ: Ազնվադեմ և հաղթանդամ մի յոմեն էր, որի ձայնը Ուիլլինից շատ ավելի քաղցր էր հնչում: Թափառական երգչի էր նման, որովհետև ձեռքին մի տավիղ կար, որը նվագում էր և քաղցր տենորով մի ուրախ սիրերգ էր երգում:

Ռոբինը չխանգարեց նրան:

— Այս գիշեր չեմ ուզում նեղել մի երիտասարդ սիրահարի,— ասաց նա ինքն իրեն, միտք անելով Մարիանի մասին:

Եվ Ռոբինը վերադարձավ իր խումբը և պատմեց ընկերներին իր հանդիպած երգչի մասին:

— Եթե սրանից հետո ձեզանից որևէ մեկը տեսնի նրան,— ասաց նա,— ինձ մոտ բերեք: Ուզում եմ խոսել հետը:

Հաջորդ օրը Լիթլ Ջոնը և Մաչը՝ ջրաղացպանի որդին, գնացին անտառ և պատահեցին այդ նույն երիտասարդին: Ենթադրեցին, թե նա նույն երիտասարդն է, քանի որ ալ շորեր էր հագել և ձեռքին տավիղ կար: Բայց այժմ նա հեկեկալով գալիս էր, իսկ ալ շորերը պատառոտված էին: Լիթլ Ջոնն ու Մաչը՝ ջրաղացպանի որդին, առաջ գնացին:

— Հե՛յ, մի թրջիր գետինը արցունքներով,— ասաց Լիթլ Ջոնը,— թե չէ բուրբու հողացավ կստանանք:

Երբ երիտասարդը տեսավ նրանց՝ կռացրեց իր աղեղը և մի նետ հանեց:

— Հեռո՛ւ քաշվեցեք, հեռո՛ւ,— ասաց նա,— ի՞նչ եք ուզում:

— Մի կողմ դիր աղեղդ,— ասաց Մաչը,— մենք քեզ վնաս չենք տա, բայց դու պետք է ներկայանաս մեր գլխավորին:

Երգիչը մի կողմ դրեց աղեղը, և նրան տարան Ռոբին Ջոնի մոտ:

— Դե՛,— ասաց Ռոբինը, տեսնելով նրա մռայլ դեմքը,— ասա մի տեսնեմ, դու այն մարդը չես, որ երեկ այնքան ուրախ երգում էիր քո սիրեցյալի մասին:

— Ես եմ, որ կամ, ո՛վ բարի պարոն,— պատասխանեց նա տխուր-տրտում,— բայց հիմա տրամադրությունս ուրիշ է:

— Արա պատմությունդ,— ասաց Ռոբինը բարության,— գուցե ես կարողանամ օգնել քեզ: Իսկ ի՞նչ է եղել: Իմ անունը Ռոբին Ջոնը չլինի թե որ չօգնեմ քեզ, եթե, իհարկե, դա իմ ուժերից վեր չլինի:

— Վայ թե աշխարհում ոչ ոք չկարողանա օգնել ինձ,— ասաց անծանոթը:— Բայց ես կանեմ իմ պատմությունը: Ե-րեկ ես մի հարսնացու ունեի և ուզում էի ամուսնանալ նրա հետ: Բայց աղջկան խլեցին ինձանից և տարան մի անառիկ բերդ, որտեղ նա այսօր ծերունի մի ասպետի հարսնացուն է լինելու: Իսկ ես առանց նրա կյանք չունեմ:

— Օ,— բացականչեց Ռոբինը, բարկացած հայացքով:— Հապա ինչպե՞ս է այդ թույլ տալիս ծերունի ասպետը:

— Ով տեր, հենց բանն էլ այդ է: Նորմանները տեր ու տնօրինություն են անում մեր երկրում և այնպիսի մենաշնորհ են վայելում, որ ոչ ոք չի կարող ընդդիմանալ նրանց: Այս գառամած ասպետն ուզում էր տիրանալ այն հողերին, որտեղ իմ լեդին էր ապրում: Մինչդեռ եղբայրը ասում էր, որ իր քրոջը անունն է հարկավոր և նա ու ծերունի ասպետը այսօր նշանակել են իրենց ամուսնության օրը:

— Այո, բայց...— սկսեց Ռոբինը:

— Մինչև վերջ լսեցեք ինձ, ո՛վ տեր,— ասաց անծանոթը:— Միգուցե դուք կարծում եք, որ ես այնքան խիզախ չեմ, որ կռվի մեջ մտնեմ: Ո՛չ, ես գնացի նրա ապարանքը և պահանջեցի իմ սիրեցյալին, բայց ասպետը ծիծաղեց վրաս և իր մարդկանց պատվիրեց, որ ինձ ծեծեն: Ես նրանց բոլորի հետ չկարողացա մենամարտել: Ինձ մի լավ ծեծեցին և ճամփու դրին:

— Իսկ աղջիկը քեզ սիրո՞ւմ է,— հարցրեց Ռոբին Յուդը:

— Ազնիվ խոսք, նա ինձ շատ է սիրում,— ասաց երգիչը:— Ես մի փոքր մատանի ունեմ, որը նա է ինձ նվիրել և յոթը երկար տարիներ պահել եմ մոտս:

— Անունդ ի՞նչ է,— հարցրեց Ռոբին Յուդը:

— Անունս Ալլան-Է-Դեյլ է,— պատասխան տվեց երիտասարդը:

— Իսկ ի՞նչ կտաս ինձ, Ալլան-Է-Դեյլ, եթե ես օգնեմ հետ բերելու քո սիրածին,— ասաց Ռոբին Յուդը:

— Ընդամենը հինգ շիլլինգ ունեմ, ուրիշ դրամ չկա մոտս,— ասաց Ալլանը:— Բայց դու Ռոբին Յուդն ես, չե՞:

Ռոբինը գլխով արեց:

— Ուրեմն միայն դու կարող ես օգնել ինձ,— ասաց Ալլան-Է-Դեյլ:— Եվ եթե ետ բերես իմ սիրածին, երդվում եմ որ մինչև կյանքիս վերջը քո հավատարիմ ծառան կլինեմ:

— Արդեն համոզվեցինք, որ հավատարիմ ես, պատասխանեց Ռոբինը,— և ուրախությամբ կօգնենք քեզ: Բայց որտե՞ղ է լինելու այդ հարսանիքը և ե՞րբ:

— Փլիմփթոնի եկեղեցում, այս տեղից մոտ հինգ մղոն հեռու էր, ցերեկը ժամը երեքին:

— Ուրեմն մենք պետք է գնանք Փլիմփթոն,— ասաց Ռոբինը և հրամաններ արձակեց զեներալի նման:— Ուիլլ Սթյուարթի, քսանչորս հաղթանդամ մարդկանց հետ միասին ժամը երեքի մոտ կգնաս Փլիմփթոնի եկեղեցի: Մաչ, բարի ընկեր, մի բան պատրաստիր այս երիտասարդի համար, սոված կլինի: Ուիլլ Սքարլեթ, հարսանեկան

շորեր հազցրու նրան: Իսկ դու, վանական Թաք, պատրաստ կլինես եկեղեցում:  
Գուցե ավելի լավ կլինի, որ դու բոլորից առաջ գնաս:

Ապա, դառնալով թախծոտ սիրահարին, այսպես ասաց.

— Ժպտա՛, Ալլան: Նայի՛ր, արևը դեռ գեղիթին չի հասել, բայց նախքան մայր մտնելը քո լեղին քեզ հետ կլինի:

Եղջերափողը շրթներին տարավ օրենքից դուրս համարված մարդկանց գլխավորը և ուժգին փչեց: Ձայնի վրա բոլոր կողմերից դուրս թռան կանաչ հազած բազմաթիվ մարդիկ, կապարճները՝ ուսերին և աղեղները՝ ձեռներին:

— Տղե՛րք, ո՛վ է ուզում գնալ հարսանիքի,— հարցրեց Ռոբինը ժպտալով:

— Բոլորս էլ ուզում ենք,— պատասխանեցին մարդիկ միաձայն և նույնիսկ խեղճ Ալլան-Է-Դեյրը ժպտաց նրանց խանդավառության վրա:

— Ուրեմն բոլորդ էլ ճիշտ ժամին կգաք,— ծիծաղեց Ռոբինը,— որովհետև Շերֆուդի եպիսկոպոսը մեզ չի սպասելու:

Այդ օրը Չերվորդի գեր եպիսկոպոսը, շքեղ հագնված, եկել էր Փլիմփթոնի եկեղեցին, որը պսակի արարողության առթիվ զարդարված էր ծաղիկներով:

Յյուրերը արդեն սկսել էին հավաքվել, երբ եպիսկոպոսը տեսավ, թե ինչպես կանաչ հազած մի երգիչ անվարան քայլեց դեպի դուռը և ներս նայեց: Այդ Ռոբին Յուդն էր, ձեռքին՝ Ալլանի տավիղը:

— Բարեկամ, ո՛վ ես դու,— հարցրեց եպիսկոպոսը զայրալից,— և ի՞նչ գործ ունես այստեղ, որ եկել ես տավիղդ առած:

— Ես թափառաշրջիկ մի տավղահար եմ,— պատասխանեց Ռոբինը հեզությամբ,— հույս ունեմ, որ այսօրվա հարսանիքին նվագելու առիթ կունենամ:

— Դու ի՞նչ կարող ես նվագել, հարցրեց եպիսկոպոսը:

— Ես շատ ուրախ եղանակներ կարող եմ նվագել,— պատասխանեց Ռոբինը:— Ուրեմն բարով ես եկել, ով սքանչելի երգիչ,— ասաց եպիսկոպոսը:— Ես երաժշտության սիրահար եմ և եթե կարողանաս լավ նվագել, մեր հարսանիքը շատ հաճելի կանցնի: Մոտ արի, նվագիր, որ տեսնենք վարպետությունդ:

— Ո՛չ, ես չեմ նվագի մինչև հարսն ու փեսան չգան:

— Կամքը քոնն է,— ասաց եպիսկոպոսը.— բայց տես, նրանք գալիս են արդեն:

Ալ և ծիրանի շորեր հազած տասը նետաձիգ երևացին ծառուղում: Սրանց հետևից դանդաղաքայլ առաջանում էր ասպետը՝ ձեռնափայտին հենվելով:

Իսկ նրանց հետևից, եղբոր թևին հենված, գեղանի մի օրիորդ էր գալիս: Նրա վարսերը շողում էին ոսկու նման, իսկ աչքերը կարծես կապուտակ մանուշակներ լինեին: Նրա դեմքը շառագունել էր, ասես լաց էր եղել: Բայց խրոխտ էր քայլվածքը: Նրան երկու աղջիկ էին ուղեկցում միայն, մեկը հարսի զգեստն էր պահում՝ հետևի կողմից, մյուսը ծաղկեփունջ էր տանում:

Եպիսկոպոսը շտապով հագավ իր շուրջառը և կազմ ու պատրաստ սպասում էր դիմավորելու նրանց:

Բայց Ռոբինը ուշադրություն չդարձրեց նրան: Թողեց, որ ասպետն ու նրա տասը նետաձիգներն անցնեն, հետո մոտեցավ հարսին և կանգնեց մյուս կողմը:

— Սրտաանդամներ, լեդի,— ասաց նա հարսին մեղմ ձայնով,— կա մի ուրիշ երգիչ, որի երգը գուցե ձեզ ավելի դուր գա:

Լեդին վախեցած նայեց նրան, բայց երգչի հայացքում այնպիսի մի ազնվություն ու բարություն կարդաց, որ ուրախացավ և երախտագիտական մի հայացք գցեց նրա վրա:

— Դե կորի՛ր, խենթ,— ասաց եղբայրը զայրացած:

— Ո՛չ, ես բարի բախտ կբերեմ հարսին, եթե նրա հետ միասին ներս մտնեմ եկեղեցու դռնից,— ասաց Ռոբինը՝ ծիծաղելով:

Եվ այսպես, հարսի հետ միասին մտավ եկեղեցի:

— Դե, նվագի՛ր, բարեկամ,— հրամայեց եպիսկոպոսը.

— Հաճույքով,— ասաց Ռոբինը,— միայն թույլ տուր, որ նախ գործիքը ընտրեմ: Ես սիրում եմ տավիղը, բայց կարծում եմ, որ տեղ կա, ուր եղջերափողը աշխարհի ամենաուրախ մեղեդին է նվագում:

Եվ նա հանեց եղջերափողը իր կանաչ թիկնոցի տակից և երեք անգամ փչեց:

— Բռնեցեք նրան,— գոռաց եպիսկոպոսը,— դրանք Ռոբին Յուդի խաղերն են:

Ծերունի ասպետի տասը նետաձիգներն առաջ նետվեցին՝ բայց նրանց կասեցրեց վախեցած ամբոխը, որը լցրել էր եկեղեցին: Մինչ այդ Ռոբինը մոտեցավ խորանին:

— Կանգնեցե՛ք ձեր տեղերում,— գոռաց Ռոբինը բարձրացնելով իր աղեղը,— ով որ առաջինը մոտենա, կմեռնի տեղն ու տեղը: Բոլոր հարսանիքի եկածները թող նստեն իրենց տեղը: Հարսանիք կլինի, քանի որ բոլորս էլ եկեղեցի ենք եկել: Բայց հարսը պետք է ընտրի իր սիրած փեսային:

Այա քսանչորս առաջնակարգ նետաձիգներ ներս մտան եկեղեցու դռնից՝ Ուիլլ Սթյուարթի գլխավորությամբ: Նրանք գերի վերցրին ծերունի ասպետի տասը նետաձիգներին, հարսի զայրացած եղբորը և պահակախմբի մյուս մարդկանց:

Հետո ներս մտավ Ալլան-Է-Դեյլը, շքեղ հագնված Ուիլլ Սքարլեթի՝ քավորի, հետ միասին: Եվ նրանք դանդաղ շարժվեցին դեպի խորանը:

— Դե՛, օրիորդ,— դիմեց Ռոբինը հարսին,— ասացեք, ո՞ւմ հետ էիք ուզում ամուսնանալ, որ շարունակենք հարսանիքը:

Աղջիկը ոչինչ չխոսեց, այլ ցնծագին ժպտաց, անխոս մոլոնեցավ Ալլանին, փարվեց նրա վզին և երջանկությունից արտասվեց:

— Ահա նրա իսկական սերը,— ասաց Ռոբինը,— երիտասարդ Ալլանը և ոչ թե ծեր ասպետը: Հոյակապ ընտրությունն արեց: Եվ մենք դեռ այստեղ հավատարիմ սիրահարները պետք է պսակվեն: Դե՛, միլորդ եպիսկոպոս, սկսենք արարողությունը:

— Ես գիտեմ քեզ, գո՛ղ ավագակ,— բղավեց եպիսկոպոսը:— Ես չեմ պսակի նրանց, քանի որ պսակվողների անունները պետք է երեք անգամ հայտարարել եկեղեցում, այսպես է մեր երկրի օրենքը:

Ու նա փակեց գիրքը և նստեց վրան:

— Մո՛տ եկ, Լիթ Ջոն,— ասաց Ռոբինը և եպիսկոպոսի շուրջառը հանեց ու հագցրեց յոմենին:

Եպիսկոպոսը կարճ էր ու գեր, իսկ Ջիթ Ջոնը երկար ու բարակ: Շուրջառը կախ էր ընկած Լիթ Ջոնի ուսերից: Նա ծիծաղելի տեսք էր ընդունել և մարդիկ սկսեցին ծիծաղել:

— Իսկապես,— ասաց Ռոբինը,— դու լավագույն եպիսկոպոսն ես, որին ես երբևիցե հանդիպել եմ կյանքումս: Դե՛, հայտարարիր պսակվողների անունները:

Եվ Լիթ Ջոնը երեք անգամ հայտարարեց պսակվողների՝ աղջկա և Ալլան-Է-Դեյլի անունները:

— Դա բավական չէ,— ասաց Ռոբինը,— քո շուրջառը այնքան կարճ է, որ դու ավելի երկար պետք է խոսես:

Ապա Լիթ Ջոնը չորս, հինգ, վեց, յոթ անգամ եկեղեցում հայտարարեց պսակվող զույգի անունները:

— Բավական է,— ասաց Ռոբինը,— այժմ ես տեսնում եմ եկեղեցու ծայրում արժանավոր մի վանականի, որը Ջերֆորդի միլորդ եպիսկոպոսից էլ լավ ծիսակատարություն կանի: Միլորդ եպիսկոպոսն ականատես կլինի, իսկ դու, բարի վանական, սկսիր արարողությունը:

Եվ այսպես, վանական Թաքը, որ ամբողջ ժամանակ կանգնած էր եկեղեցու հետնամասում, առաջ անցավ: Ալլանն ու աղջիկը ծնկի եկան վանականի առաջ, և նա սկսեց պսակի արարողությունը:

Երբ նա հարցրեց, թե ո՞վ է այս աղջկա կնքահայրը, Ռոբինն առաջ անցավ և բարձրաձայն պատասխանեց,

—Ես եմ, ես՝ Բարնզդեյլի և Շերվուդի Ռոբին Ջոնը: Եվ այսպես զույգը ամուսնացած հայտարարվեց: Օրհնեցին նրանց և հաղթանդամ յոմեններից յուրաքանչյուրը, սկսած Ռոբին Ջոնից՝ համբուրեց հարսին:

Եվ այսպես, ավարտվեց Ալլան-Է-Դեյլի ուրախ ամուսնության պատմությունը:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՓՐԿԵՑԻՆ ԱՅՐԻ ԿՆՈՋ ԵՐԵՔ ՈՐԴԻՆԵՐԻՆ

Փլիմփթոնի եկեղեցուց դուրս եկած հարսնուհիներն ուրախ էին, բայց տեղում մնացած գերիները այնքան էլ ուրախ չէին:

Արդեն ուշ էր, բայց այդ գիշեր ոչ ոք չէր հանդգնել ազատ արձակել նրանց՝ երկյուղ կրելով Ռոբին Ջոնի մարդկանցից. այնպես որ միայն հաջորդ առավոտյան նրանց

բաց թողեցին: Եպիսկոպոսն ու ծեր ասպետն այնքան էին զայրացել, որ գնացին ուղիղ Նոթինգեմ, խնդրելու, որ շերիֆը մարդիկ տա իրենց:

Շերիֆը չէր ուզում կրկին անգամ երես առ երես հանդիպել Ռոբին Յուդին: Եպիսկոպոսն ու ծեր ասպետը երդվեցին գնալ ուղիղ արքայի մոտ, եթե նա չօգնի իրենց, և շերիֆը ստիպված եղավ համաձայնել:

Մոտ հարյուր ընտրյալ մարդիկ՝ արքայական անտառապահներ և սրամարտիկներ, ի մի եկան և գնացին ուղիղ անտառ, որտեղ նրանք անակնկալ հարձակվեցին օրենքից դուրս հայտարարված մի քանի մարդկանց վրա, որոնք դուրս էին եկել որսի: Բայց չկարողացան շրջապատել նրանց, որովհետև օրենքից դուրս համարվող մարդիկ, ծառերի հետևից նետեր արձակելով, արագորեն նահանջեցին:

Սակայն, փախուստի պահին, Ռոբին Յուդի մարդկանցից մեկը սայթաքեց ու ընկավ, մյուս երկուսը իսկույն կանգ առան նրան օգնելու: Դրանք այրի կնոջ երեք զավակներն էին՝ Սթաուլթ Ուիլլը, Լեսթերը և Ջոնը: Դա շատ անհաջող մի հապաղում եղավ նրանց համար, որովհետև շերիֆի մարդկանցից մի խումբ կտրեց ճանապարհը և շուտով բոլոր կողմերից շրջապատեցին նրանց: Բայց պաշարվածները կատաղորեն կռվեցին՝ երկուսին սպանեցին և երեքին վիրավորեցին:

Անտառապահները կատաղեցին: Նրանք ուզում էին սպանել նրանց, բայց շերիֆը ձայն տվեց.

— Կանգնեցե՛ք, կապոտեցե՛ք ավազակներին: Մենք պետք է հետևենք օրենքին և զցենք նրանց քաղաքային բանտը: Բայց նրանց համար ես խոստանում եմ այն ամենամեծ կախաղանը, որ երբևիցե տեսել է Նոթինգեմը:

Այսպիսով նրանք կապեցին այրի կնոջ երեք որդիներին և տարան Նոթինգեմ:

Ռոբին Յուդը իր մարդկանց հետ չէր, ոչ էլ մոտակայքումն էր, և մի որոշ ժամանակ կռվի մասին ոչինչ չիմացավ: Բայց այդ երեկո, տուն վերադառնալիս, նա պատահեց այրուն, որը ողբալով գալիս էր ճանապարհով:

— Ի՞նչ նորութուն կա, ո՛վ բարի կին.— հարցրեց Ռոբինը սիրալիր: Նա սիրում էր այրուն:

— Աստված պահի քեզ, Ռոբին,— ասաց կինը,— Աստված պահի քեզ իմ երեք որդիների ճակատագրից: Շերիֆը գերի տարավ նրանց և նրանք մահվան են դատապարտված: Շերիֆն անողորմ մարդ է,— շարունակեց հեզ մայրը:

— Ի՞նչ ես ասում, Սթաուլթ Ուիլլը, Լեսթե՞րը և Մերի Ջոնը, իմ խմբի ամենահին և խիզախագույն բարեկամները: Դա լինելու բան չի: Ո՞ր օրն են կախելու:

— Վաղը առավոտ,— պատասխանեց կինը լաց լինելով.

— Օ՛, ճիշտ ժամանակին հայտնեցիր,— ասաց Ռոբինը:— Էհ, լավ եմ հիշում հին օրերը, երբ դու ինձ հաց ու ջուր էիր տալիս: Մի՛ վախեցիր, ո՛վ բարի կին:

Պառավը նետվեց գետնին և փաթաթվեց Ռոբինի ծնկներով:

— Ես քեզ մեծ վտանգի առաջ եմ կանգնեցնում,— հեկեկաց նա,— բայց և այնպես քաջ գիտեմ, որ դու խիզախ և հավատարիմ սիրտ ունես: Աստված օրհնի քեզ, ո՛վ բարի Ռոբին:

Ռոբինը հորդորեց նրան, որ տուն գնա և խոստացած փրկել նրա երեք որդիներին:

Ապա գնաց իր մարդկանց մոտ և ծանոթացավ միջադեպի մանրամասնություններին :

— Տղերք, մենք պետք է ազատենք այրու երեք որդիներին,— ասաց Ռոբինը:

Խումբը սկսեց պատրաստություն տեսնել, մինչդեռ Ռոբինը առանձնացավ, ծրագրելով, թե ինչպես կարելի է ամենալավ ձևով փախցնել նրանց: Հանկարծ նկատեց մի ուխտավորի, որը համարձակ քայլերով մոտեցավ Ռոբինին և խնդրեց նրա օգնությունը, գիտեր, որ Ռոբինը սովորաբար օգնում է խեղճ ուխտավորներին :

— Հեյ, հիմար ծերուկ, ի՞նչ նորություն կա,— ասաց Ռոբինը:— Քեզ եմ հարցնում, ի՞նչ նորություն կա:

— Նոթինգեմում երեք մարդու մահվան են դատապարտել,— պատասխանեց ուխտավորը:— Սրանից էլ մեծ նորություն:

Մի լավ միտք ծագեց Ռոբինի գլխում:

— Ծերուկ, արի փոխենք մեր շորերը,— ասաց նա,— և ես քեզ քառասուն արծաթ շիլլինգ կտամ:

— Օ՛, քո շորերը լավն են,— գոչեց ուխտավորը,— իսկ իմը՝ հին: Չի կարելի ծերուկիս այդպես հեզել:

— Իսկ ես չեմ հեզնում: Արի փոխենք մեր շորերը: Ա՛ռ քեզ քսան ոսկի:

Ուխտավորը համաձայնեց: Եվ Ռոբինը դրեց ծերունու գլխարկը, հագավ նրա սև, կապույտ ու կարմիր կարկատաններով կտրած թիկնոցը և հնամաշ ոտնամանները:

Այդ օրը, իրարից բաժանվելիս, երկուսն էլ ծիծաղելի տեսք էին ընդունել և Ռոբինը այնպես էր ծպտվել, որ ոչ ոք չէր կարող ճանաչել նրան:

Հաջորդ օրը ամբողջ Նոթինգեմը վաղ առավոտից ոտքի վրա էր, և, հենց որ դարպասները բացվեցին, մոտակայքում բնակվող մարդիկ սկսեցին ներս թափվել, որովհետև երեք մարդու կախաղան բարձրացնելը մի արտասովոր դեպք էր:

Ուխտավորի շորերով ծպտված՝ Ռոբին Հուդը առաջինը մտավ դարպասով: Նա այնպես էր ման գալիս քաղաքում, կարծես կյանքում առաջին անգամն էր լինում այնտեղ: Շատ չանցած նա հասավ շուկայի հրապարակը, որտեղ երեք կախաղան էր շինված:

— Որոյակ, ո՛ւմ համար են կանգնեցրել դրանք,— հարցրեց նա կողքին կանգնած մի բիրտ զինվորի:

— Ռոբին Հուդի երեք մարդկանց համար,— պատասխանեց զինվորը:— Իսկ Ռոբինի համար շատ ավելի բարձրն ենք սարքելու: Բայց նա այնքան խորամանկն է, որ էլ այստեղ չի գա:

— Բայց ասում են, թե նա խիզախ մարդ է,— ասաց ուխտավորը:

— Հա՛, հա՛, հա՛,— քրքջաց զինվորը,— նրա խիզախությունը անտառումն է անցնում և ոչ թե այստեղ:

— Ո՛վ է կախելու այդ երեք թշվառներին,— հարցրեց ուխտավորը:

— Շերիֆը դեռ չի որոշել, ահա հենց ինքն է իր ոտքով գալիս իր հարցերի պատասխանը տալու:

Շերիֆն ու իր պահակախումբը գոռոզ-գոռոզ եկան, կախադանը ստուգելու:

— Օ՛հ, աստված քեզ օգնական, ո՛վ բարի շերիֆ,— ասաց ուխտավորը:— Աստված օրհնի քեզ: Ի՞նչ կտաս մի խեղճ ծերունու, եթե նա քո այսօրվա դահիճը դառնա:

— Ո՛վ ես դու, ծերուկ,— հարցրեց շերիֆը:

— Մի խեղճ ծերունի ուխտավոր, բայց ես կարող եմ այդ մարդկանց խոստովանեցնել և կախել:

— Շատ բարի, պատասխանեց շերիֆը,— այսօրվա վարձատրությունը երեսուն պեննա կլինի, բացի դրանից, քեզ շորեր էլ կտամ:

— Աստված օրհնի քեզ,— ասաց ուխտավորը: Եվ զինվորի հետ միասին գնաց բանտ՝ երեք մարդկանց կախադանի նախապատրաստությունները տեսնելու:

Կեսօրվա մոտ բանտի դռները բացվեցին և դատապարտյալների թափորը դուրս եկավ: Ուխտավորի առաջնորդությամբ այրի կնոջ երեք որդիները, շրջապատված զինվորներով, անցան մարդկանց երկար շարանների միջով և հասան շուկայի հրապարակը:

Կախադանի, տակ կանգ առան: Ուխտավորը մեղմաձայն խոսեց նրանց հետ և երեք մարդիկ, ձեռները հետև կապած, բարձրացան պատվանդանի վրա:

Ամեն ինչ պատրաստ էր, և դահիճը շերիֆի հրամանին էր սպասում:

Անցավ մի քանի րոպե: Շերիֆը բարձրացրեց ձեռքը: Ռոբինը մոտեցավ պատվանդանի ծայրին: Ժողովուրդը քար կտրած կանգնած էր: Նրանք ուզում էին լսել դատապարտյալների վերջին խոսքը: Բայց հիմա Ռոբինի ձայնը առաջվա նման նվաղուն չէր: Նա շտկեց իր մեջքը սև թիկնոցի տակ:

— Լսիր, գոռոզ շերիֆ,— բղավեց նա,— ես կյանքումս դահիճ չեմ եղել ու հիմա էլ չեմ ուզում այդ արհեստը բանեցնել: Երեք խոսք ունեմ քեզ ասելու: Լա՛՛վ ականջ դիր:

Ասաց ու թիկնոցի տակից հանեց եղջերափողը ու փչեք երեք անգամ: Ապա քաշեց իր որսորդական դանակը: Եվս մի ակնթարթ, և Սթաուլթ Ուիլլը, Լեսթերը և Մերի Ջոնը նորից դարձան ազատ մարդիկ, ցած թռան պատվանդանից և խլեցին կախադանը հսկող զինվորների թրերը:

— Բռնեցեք դրանց: Ռոբին Յուդն է,— գոռաց Շերիֆը: — Հարյուր ֆունտ՝ նրան կենդանի կամ մեռած իմ ձեռքը հանձնողին:

— Ես երկու հարյուր եմ տալիս,— գոռաց գեր եպիսկոպոսը:

Բայց նրանց ձայները խլացան այն աղմուկի մեջ, որը բարձրացել էր Ռոբինի եղջերափողը հնչելուց հետո: Ռոբինը դուրս քաշեց իր սուրը և ցած թռավ պատվանդանից իր երեք մարդկանց հետ միասին: Պահակները շրջապատեցին նրանց, փորձելով զինաթափել: Այդ պահին հնչեց, Ուիլլ Սթյուարթի զրնգուն ձայնը «փրկություն», դրան հաջորդեց Լիթլ Ջոնի աղաղակը: Լինկոլն կանաչ հագած ութսունի չափ մարդիկ վրա վազեցին սարսափահար ամբոխի միջով: Թրերը քաշած՝ նրանք իսկույն պահակների վրա թափվեցին:

Մի կարճատև մարտ հաջորդեց դրան: Ապա պահակները նահանջեցին, իսկ Ռոբին Յուդի մարդիկ համախմբվեցին իրենց գլխավորի շուրջն ու դանդաղաքայլ բաց արեցին ճանապարհը:

— Բռնեցե՛ք դրանց, հանուն արքայի,— գոռաց շերիֆը: — Փակեցե՛ք դարպասները:

Այս վերջին հրամանից հետո վտանգը իրոք որ սաստկացավ: Բայց Ուիլլ Սքարլեթն ու Ալլան-Է-Դեյրը արդեն բռնել էին երկու դարպասապահներին: Դարպասները լայն բաց էին արվել և օրենքից դուրս համարվող մարդկանց խումբը քայլեց այդ ուղղությամբ:

Չինվորները փորձեցին ճեղքել նրանց շարքերի կենտրոնը, բայց նահանջող մարդիկ շուռ եկան և իրենց փառավոր աղեղներից այնքան շատ շեշտակի նետեր արձակեցին, որ հնարավոր եղավ մարտնչող կողմերի մեջ պատշաճ հեռավորություն պահպանել:

Եվ այսպես, հասան դարպասին ու դուրս եկան անտառի ճամփան: Չինվորները այլևս չհետապնդեցին նրանց:

Անսահման էր այրի կնոջ բերկրանքը, երբ կրկին տեսավ իր որդիներին, ևա շնորհակալություն հայտնեց Ռոբինին և օրինեց նրան արցունքների հեղեղով:

Այդ երեկո այնքան ախորժակով ընթրեցին նրանք, ասես իրենց կյանքում դեռ այդպիսի հաց չէին կերել:

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈՒԲԻՆ ՅՈՒԴԻՆ ԿՈՎԵՑ ՋԻՉԲՈՐՆՑԻ ԳԱՅԻ ՅԵՏ ԵՎ ՍՊԱՆԵՑ ՆՐԱՆ

Անցավ մի քանի շաբաթ այրի կնոջ որդիների հետ պատահած արկածից: Ռոբինի անվան ու գործերի հռչակը հասել էր Լոնդոն՝ արքայի ականջը և սա հրաման էր տվել շերիֆին՝ բռնել օրենքից դուրս համարվող մարդուն, այլապես կկորցնի իր պաշտոնը:

Բայց Ռոբինին բռնելու փորձերն ապարդյուն անցան:

Ջիզբորնցի Գայ անունով մի ասպետ կար, որը ծառայում էր արքայական բանակում: Նա լսել էր Ռոբինի և նրա գլխի համար տրվող վարձատրության մասին: Սըր Գայը արքայական ծառայության մեջ աչքի էր ընկնում իբրև լավագույն նետածիգ ու սրամարտիկ: Սակայն սև էր նրա հոգին:

Արքան թույլ տվեց նրան գնալ և որոնել օրենքից դուրս համարվող մարդուն և նա, արքայի հրամանը ձեռքին, ներկայացավ Նոթինգեմի շերիֆին:

— Ես եկել եմ Ռոբին Յուդին բռնելու,— ասաց նա,— և հույս ունեմ, որ կենդանի կամ մեռած ձեռք կզցեմ նրան:

— Մեծավ ուրախությամբ կօգնեմ ձեզ,— պատասխանեց շերիֆը:— Քանի մարդ էք ուզում ձեր տրամադրության տակ:

— Ոչ մի մարդ,— պատասխանեց Սըր Գայը,— ես մեն-մենակ պիտի գնամ ու բռնեմ այդ ավազակին: Բայց ձեր մարդկանց կազմ ու պատրաստ պահեցեք Բարնզդեյլում և երբ լսեք այս արձաթե փողի ձայնը՝ անհապաղ կգաք, որովհետև Ռոբինը իմ ձեռքում կլինի արդեն:

— Շատ լավ,— ասաց շերիֆը,— անպայման կանեմ,— և նա սկսեց հրամաններ արձակել, իսկ Ջիզբորնցի Գայը, ծպտվելով, արդեն ճանապարհ ընկավ:

Այնպես պատահեց, որ այդ նույն օրը Ուիլլ Սքարլեթն ու Լիթլ Ջոնը գնացել էին Բարնզդեյլ յոմեններից մի քանիսի համար լինելու կանաչ շորեր գնելու: Բայց քանի որ միասին գնալը վտանգավոր էր, նրանք քաղաքի մոտ բաժանվեցին: Ուիլլը անցավ դարպասով, իսկ Ջոնը սպասեց դրսում՝ բարձունքի վրա:

Որոշ ժամանակ անց նա նկատեց, որ Ուիլլը ետ է փախչում: Նրան հետապնդում էին շերիֆն ու վաթսուների չափ մարդիկ: Նա տեսավ, որ մարդկանցից մեկը հագիվ քսան ոտնաչափ էր հեռու Սքարլեթից: Դա Ուիլլիամ-Է-Թրենթն էր՝ շերիֆի մարդկանցից ամենաարագավազը: Լիթլ Ջոնը իսկույն վեր կացավ, պրկեց աղեղը և արձակեց իր անվրեպ նետը: Ուիլլիամ-Է-Թրենթը անշնչացած գետին տապալվեց:

Մյուսները զարմացած մի պահ կանգ առան, երբ մի նոր նետ սուրաց բարձունքից: Բայց երբ նայեցին վերև, տեսան Լիթլ Ջոնին և կատաղի ուրախության ճիչ արձակելով շուռ եկան նրա ուղղությամբ: Ուիլլ Սքարլեթը արդեն հասել էր բարձունքի գագաթը և այժմ մյուս կողմից ցած էր վազում:

— Ուիլլին միանալուց առաջ դեռ պետք է իմ վերջին նետը արձակեմ շերիֆի վրա,— ասաց Լիթլ Ջոնը: Բայց հենց այդ պահին նրա աղեղը կոտրվեց, իսկ զինվորները արդեն շատ էին մոտեցել: Նա չկարողացավ փախչել: Եվ Լիթլ Ջոնը բարձունքի գագաթը հասած առաջին տասը զինվորներին դիմավորեց իր ուժեղ բռունցքի ծանր հարվածներով: Բայց եթե հինգ մարդ երեքից ավելին կարող է անել, ապա քսանը մեկին կհաղթի ու կհաղթի: Նետածիզները Լիթլ Ջոնից, մի փոքր հեռու կանգնեցին և շրջապատեցին նրան՝ նետ ու աղեղները պատրաստ պահած:

— Դե՛, հանձնվի՛ր,— գոռաց շերիֆը,— հանձնվի՛ր, Լիթլ Ջոն կամ Ռեյնոլդ Գրինլիֆ: Յանձնվի՛ր, թե չէ այս նետերը կխրվեն քո սիրտը:

— Զո խոսքերը արդեն խրվեցին իմ սիրտը,— ասաց Լիթլ Ջոնը,— և ես հանձնվում եմ:

— Այսօր քեզ պետք է կախեն Բարնզդեյլի բարձր բլրի վրա: Խուժքը բլրով արագորեն ցած իջավ, որովհետև վախենում էր, թե օգնության կհասնեն Լիթլ Ջոնին: Բուրրը ցնծության մեջ էին. շերիֆը նրանց առատ գինի էր խոստացել: Նրանք հրճվում էին

Նաև, որ կախաղան պիտի հանեն Ռոբին Յուդից հետո մյուս ամենախիզախ ապօրենին:

Շտապ-շաապ կանգնեցրին կախաղանը և մի նոր պարան անցկացրին գերու վզին: Մարդիկ սպասում էին շերիֆի հրամանին:

— Պատրաստ եք,— բղավեց շերիֆը:— Մե՛կ, երկո՛ւ ... Բայց «երեքը»-ը դեռ շրթներից դուրս չեկած արծաթե փողի նվաղուն ձայնը հասավ բարձունքի վրայից:

— Ազնիվ խոսք, սա Ջիզբորնցի Սըր Գաի փող ձայնն է,— ասաց շերիֆը:— Նա ինդրել է, որ իսկույն պատասխանեմ իր կանչին: Անշուշտ նա բռնել է Ռոբին Յուդիին:

— Եթե բռնել է, ուրեմն այսօր իրոք մի բարեբախտ օր է,— պատասխանեց շերիֆի մարդկանցից մեկը:— Եկեք իջեցնենք այս մարդուն և մի ուրիշ կախաղան էլ սարքենք երկուսին միասին կախելու համար:

— Խիզախ միտք է,— ասաց շերիֆը:

— Ցած բերեք սրիկային և մինչև մեր վերադարձը թող կապված մնա կախաղանից:

Եվ այսպես Լիթլ Ջոնին կապեցին կախաղանից, մինչդեռ շերիֆն ու նրա մարդիկ գնացին Ռոբինին բերելու և կախաղան բարձրացնելու:

\*\*\*

Թողնենք Լիթլ Ջոնին ու շերիֆին իրենց տեղում և տեսնենք, թե ինչ պատահեց Ռոբին Յուդիին:

Այդ առավոտ նա և Լիթլ Ջոնը հանդիպել էին տարօրինակ մի յոմենի և նրանցից յուրաքանչյուրը ուզում էր առանձին մենամարտել նրա հետ: Բայց Ռոբինը գլխավորն էր, և նա չզիջեց: Ուստի Լիթլ Ջոնը մի փոքր նեղացած գնաց Բարնզդեյլ:

Մինչ այդ Ռոբինը մոտեցավ տարօրինակ արտաքինով օտարականին: Երբ մոտ եկավ, տեսավ որ խեղճ հագնված մի մարդ էր, որը իր մարմինը ծածկել էր ձիու մորթով: Ձիու գլխի մորթից սաղավարտ էր սարքել, իսկ պոչը տարօրինակ եռոտանու տեսք էր տվել նրան:

— Բարի լույս, ո՛վ բարի մարդ,— ուրախ-ուրախ ասաց Ռոբինը:— Ինձ թվում է, թե դու լավ նետաձիգ ես, քանի որ ձեռքիդ լավ աղեղ եմ տեսնում:

— Բավական լավն է, — պատասխանեց մյուսը,— բայց այս առավոտ նետաձգության մասին չեմ մտածում, որովհետև ճանապարհս կորցրել եմ և ուզում եմ գտնել:

— Ես քեզ կառաջնորդեմ անտառով,— ասաց Ռոբինը,— և դու կպատմես ինձ քո գործերից:

— Իսկ դու ո՞վ ես, որ իմ գործերից ես հարցնում,— հարց տվեց օտարականը կոպտությամբ:

— Ես արքայական անտառապահներից եմ,— պատասխանեց Ռոբինը,— և իմ պարտքն է պահպանել նրա եղջերուները տարօրինակ տեսքով անձանոթներից: »

— Ի՞նձ լսիր, եթե դու անտառապահ ես, ես պետք է մի ծառայություն խնդրեմ քեզանից,— ասաց մյուսը:— Ես արքայի գործով եմ եկել և ման եմ գալիս օրենքից դուրս համարվող մի մարդու: Նրան Ռոբին Յուդ եմ անվանում: Դու նրա մարդկանցից հո չե՞ս:

— Դե, իհարկե, ոչ,— ասաց Ռոբինը,— իսկ ինչո՞ւ ես ուզում գտնել նրան:

— Դա ուրիշ պատմություն է: Ես ավելի շուտ ուզում եմ գտնել այդ խրոխտ մարդուն,— քան արքայից ստանալ քառասուն ֆունտի պարգևատրությունը:

— Արի ինձ հետ, ո՛վ բարի յոմեն,— ասաց Ռոբինը,— և գուցե մի փոքր ավելի ուշ՝ օրվա ընթացքում, երբ Ռոբինը տանը լինի, կարողանամ քեզ ցույց տալ նրա թաքստոցը: Մինչ այդ արի մրցենք և տեսնենք, թե ով է ավելի վարպետ նետ արձակելու մեջ:

Անձանոթը համաձայնվեց և նրանք մի քանի նետ արձակեցին հեռվում դրված մի թիրախի: Ռոբինի նետը շատ ավելի լավ էր դիպչում:

— Այսպիսի նետածգություն կյանքումս տեսած չկամ,— գոչեց անձանոթը:— Դու գուցե և Ռոբին Յուդից էլ լավ ես արձակում: Բայց դեռ անունդ չասացիր ինձ:

— Չեմ ասի, մինչև որ քոնը չասես:

— Կասեմ: Ես Ջիզբորնցի Գայն եմ,— հպարտությամբ ասաց անձանոթը:

Ռոբինը մի հանգիստ հայացք գցեց նրա վրա.

— Ինձ թվում է, թե անունդ լսել եմ: Այդ դու չե՞ս, որ մարդկանց կախաղան ես բարձրացնում ապրուստդ ապահովելու համար:

— Այո, բայց միայն Ռոբին Յուդի նման օրենքից դուրս համարվող մարդկանց:

— Իսկ Ռոբին Յուդը քեզ ի՞նչ վնաս է տվել:

— Նա մեծ ճանապարհի ավազակ է,— ասաց Սըր Գայը:

— Մի՞թե նա միշտ հարուստներից չի խլել՝ աղքատներին տալու համար: Մի՞թե նա պաշտպան չի կանգնում կանանց ու երեխաներին, թույլերին ու անօգնականներին: Մի՞թե նրա խոշորագույն ոճիրը արքայի մի քանի եղջերուները խփելը չէ:

— Դու շատ երկար ես ճառում,— ասաց Սըր Գայը անհամբեր:— Վայ թե Ռոբինի խմբից լինես:

— Ես ասացի, որ չեմ,— պատասխանեց Ռոբինը:— Բայց եթե քեզ պիտի օգնեմ, որ նրան բռնես, ապա հայտնիր ինձ ծրագիրդ:

— Տեսնո՞ւմ ես այս արձաթե փողը,— ասաց խոսակիցը:— Երբ Ռոբինը ձեռքս ընկնի, փչելու եմ և շերիֆն ու նրա մարդիկ իսկույն ինձ մոտ են գալու: Եթե ցույց տաս Ռոբին Յուդի տեղը՝ քառասուն ֆունտի կեսը քոնն է:

— Ես չեմ օգնի քեզ մարդ կախելու համար, եթե մինչև իսկ տասն անգամ քառասուն ֆունտ էլ տալու լինես,— ասաց օրենքից դուրս համարվող մարդը: — Բայց և այնպես քեզ ցույց կտամ Ռոբինի տեղը. իսկ դրա համար սուրը կվարձատրի ինձ: Ես ինքս եմ Շերվուդի և Բարնզոդեյլի Ռոբին Յուդը:

— Որ այդպես է, ա՛ն քեզ,— ասաց սըր Գայը, արագ դուրս քաշելով իր սուրը: Ղեռ Ռոբինը սրամարտի չէր էլ պատրաստվել, երբ Գայը խփեց նրան: Ռոբինը հարվածից խուսափեց և դուրս քաշեց իր սեփական սուրը:

— Նենգություն է,— ասաց նա զայրացած,— միամիտ մարդուն հարվածելը:

Էլ ոչինչ չխոսեցին: Մենամարտը սկսեց ու երկու ժամ տևեց: Շերվուդ անտառում քչերն էին տեսել այդպիսի կատաղի մենամարտ: Մենամարտողները ատելությամբ էին նայում իրար: Մեկն իր կյանքի համար էր կռվում, մյուսը՝ վարձատրության և արքայի շնորհին արժանանալու համար:

Հանկարծ Ռոբինի ոտքը սայթաքեց ծառի արմատի վրա: Սըր Գայը փոխանակ սպասելու, որ հակառակորդը վեր կենա, հանկարծ խփեց ընկած մարդուն և վիրավորեց նրա ձախ կողքը:

Բայց Ռոբինը նորից վեր թռավ և մի ծանր ու շեշտակի հարված հասցրեց հակառակորդին: Եվ Ջիզբորնցի սըր Գայը տապալվեց՝ Ռոբինի սուրը կոկորդին խրված: Օրենքից դուրս համարվող մարդը մի տխուր հայացք գցեց սպանվածի վրա:

— Դու ինքդ եղար դրա պատճառը,— ասաց նա:— Ես չէի ուզում քեզ սպանել: Ռոբինի վերքը խոր չէր: Նա թաքցրեց դիակը թփերի մեջ, վրայից հանեց ձիու մորթին և ինքը հագավ, իսկ իր թիկնոցը գցեց սըր Գայի վրա: Ռոբինի կազմվածքը սըր Գայի նման էր, իսկ սաղավարտը ծածկում էր դեմքի մեծ մասը:

Հետո Ռոբինը վերցրեց արծաթե փողը ու մի զիլ փչեց: Այդ ազդանշանն էր, որ փրկեց Լիթլ Ջոնի կյանքը:

Շատ չանցած շերիֆի լավագույն նետաձիգներից մոտ քսան մարդ վազեցին եկան:

— Դուք մեզ կանչեցիք, սըր,— հարցրեցին նրանք Ռոբինին մոտենալով:

— Այո ,— ասաց նա, մոտենալով շերիֆին:

— Ի՞նչ նորություն կա, սըր Գայ,— հարցրեց պաշտոնյան:

— Ռոբին Յուդն ու Ջիզբորնցի Գայը մենամարտեցին և նա, ով հազել է Ռոբինի թիկնոցը, պառկած է այնտեղ թփերի տակ:

— Դա ամենահաճելի լուրն էր որ լսել եմ կյանքումս,— բացականչեց շերիֆը:— Թեև ես ուզում էի նրան կենդանի բռնել՝ կախաղան հանելու համար:

— Կախաղան հանելո՛ւ,— կրկնեց Ռոբինը:

— Այս մեր երջանիկ օրն է: Երբ դուք մեզանից հեռացաք՝ մենք բաց թողեցինք օրենքից դուրս համարվող մարդկանցից մեկին, կարծեմ Ուիլլ Սքարլեթին: Բայց հետո բռնեցինք մեկ ուրիշին, որը նրան օգնության էր եկել: Մենք հենց նրան կախաղան էինք հանում, երբ մեր ականջին հասավ ձեր փողի ձայնը:

— Իսկ ո՞վ էր այդ մյուսը,— հարցրեց օրենքից դուրս համարվող ծպտված մարդը:

— Էլ ո՞վ կարող է լինել,— ծիծաղեց շերիֆը:— Անտառի լավագույն մարդը Ռոբին Յուդից հետո՝ Լիթլ Ջոն, Ռեյնուլդ Գրինլիֆ:

Շերիֆը չէր մոռանում Լիթլ Ջոնի անունը Նոթինգեմում իր հարկի տակ ապրած ժամանակից ի վեր:

«Լիթլ Ջոնը,— մտածեց Ռոբինը:— Իրոք որ փողը ժամանակին եմ փչել»:

— Բայց տեսնում եմ, որ վիրավորվել եք,— շարունակեց շերիֆը:— Մեկն ու մեկը այստեղ եկեք: Ջիզբորնցի սըր Գային տվեք ձեր ձի, իսկ մյուսներդ՝ թաղեցեք օրենքից դուրս համարվող այդ շանը հենց իր պառկած տեղում, որպեսզի շտապ վերադառնանք Բարնզոդեյլ՝ մյուսին կախելու համար:

Եվ այսպես, նրանք հեծան իրենց ձիերը: Վերադարձին Ռոբինը հարկադրված էր ուրախ զրույց անելու, մինչդեռ ամբողջ ճանապարհին նա մտորում էր Լիթլ Ջոնին փրկելու ամենալավ ծրագիրը:

— Մի շնորհ եմ խնդրում, շերիֆ,— ասաց նա, երբ հասան քաղաքի դարպասներին:

— Իսկ դա ի՞նչ է, որ շնորհի արժանի լինի, սըր:

— Ձեր ոսկին չեմ ուզում, ես բավարարված եմ հաջող մենամարտով: Բայց հիմա, որ ես սպանել եմ գլխավորին, թույլ տուր վերջ տամ այդ մարդուն ևս, որ ամեն ոք ասի, թե Ջիզբորնցի Գայը մի օրում սպանեց Անգլիայում օրենքից դուրս համարվող երկու ամենամեծ մարդկանց:

— Կամքը ձերն է,— ասաց շերիֆը,— եթե նույնիսկ կրկնակի վարձատրություն խնդրեք, այն էլ կտամ: Ռոբին Յուդին բռնելը ամեն մարդու գործ չէ:

— Ո՛չ, շերիֆ,— պատասխանեց Ռոբինը:— Ճիշտ է, որ Ռոբինին ոչ ոք չի բռնել երեկ և չէր էլ կարող բռնել վաղը:

Այս խոսքերի վրա նա մոտեցավ Լիթլ Ջոնին, որը դեռևս կապված էր կախաղանին և ասաց շերիֆի մարդկանց:

— Դե, ետ կանգնեցեք, մինչև որ ես խոստովանեցնեմ սրան:

Եվ նա փութաց կռանալ և կտրել Լիթլ Ջոնի պարանները ու նրան տալ սըր Գայի աղեղն ու նետերը, որոնք հետև էր վերցրել:

— Այդ ես եմ, Ռոբինը,— փսփսաց նա) բայց Լիթլ Ջոնը արդեն ճանաչել էր նրան:

Յետո Ռոբինը երեք անգամ փչեց իր եղջերափողը, կռացրեց աղեղը և ապշահար շերիֆն ու նրա մարդիկ դեռ չէին էլ հասցրել զենք առնելու ձեռքները, երբ նետերը իրար հետևից տեղացին նրանց վրա:

Մեկ էլ հանկարծ նետերի մի ուրիշ տեղատարափ հաջորդեց դրան. այս անգամ դարպասներից ու պարիսպների վրայից: Ուրիշ Սքարլեթն ու Ուրիշ Սթյուարթին արդեն ծրագրել էին ընկերոջ փրկությունը: Նրանք վրա հասան ճիշտ ժամանակին: Շերիֆի բարոյալքված մարդիկ ընկրկեցին, մինչդեռ Ռոբինն ու Լիթլ Ջոնը անվնաս կանգնած էին կախաղանի տակ և իրար հետևից արձակում էին իրենց նետերն ու ծիծաղում թշնամու վրա:

Ապա նրանք միացան իրենց ընկերներին և շտապեցին լայնարձակ կանաչ անտառը՝ հանգիստ առնելու: Մի օրվա համար այդքան մարզանքը բավական էր:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻԱՆԸ ԵԿԱԿ ՇԵՐԿՈՒԴ ԱՆՏԱՌԸ ԵՎ ՌՈՔԻՆ ՅՈՒԴԸ ՆԵՐԿԱՅԱՑԱԿ ԷԼԵԱՆՈՐ ԹԱԳՈՒՅՈՒՆ

Այս դեպքից մի փոքր անց Ռոբինը որոշեց փորձել իր շնորհքը որսորդության մեջ, և քանի որ չգիտեր թե ում կհանդիպի անտառում, մեկնելուց առաջ ծպտվեց: Չբոսանքի ժամանակ վաղորոյան անդորրը հիշեցրեց նրան անցած գնացած օրերը, երբ Մարիանի հետ միասին ման էր գալիս այս բացատներում: Ինչքան քաղցր և ինչքան հեռավոր թվացին նրան այդ օրերը: Նա միտք արեց իր պատանեկության գեղանի ընկերուհու մասին և շատ ուզեց լսել նրա հստակ ձայնը, նրա կարկաչուն ծիծաղը և տեսնել նրա վառվառն աչքերը:

Մի եղջերու մտավ բացատը և սկսեց հանգիստ արածել: Որսորդը ուշքի եկավ: Նա պրկեց իր աղեղը և ուզում էր արձակել նետը, երբ բացատի մյուս ծայրից մի ուրիշ նետ խրվեց կենդանու մարմինը և նա գետին տապալվեց:

Ապա փարթամ շորեր հագած մի սիրունիկ մանկլավիկ դուրս թռավ թփերի հետևից և վազեց դեպի վիրավոր կենդանին: Հավանորեն դա նետածիզն էր, որովհետև նրա ձեռքին աղեղ կար, իսկ կողքից սուր էր կախված, թեև նա շատ էր երիտասարդ:

Ռոբինը կենդանուն մոտեցավ հակառակ կողմից:

— Հե՛յ, տղա,— բղավեց նա,— ո՞վ է քեզ իրավունք տվել խփելու արքայի եղջերուին:

— Ես այնքան իրավունք ունեմ, որքան արքան ինքը,— պատասխանեց մանկլավիկը:— Իսկ ո՞վ է քեզ իրավունք տվել ինձ հարցաքննելու: Հեռացի՛ր այստեղից,— հրամայեց պատանին:

Նրա ձայնը Ռոբինին շատ զարմացրեց: Սա վերհիշեք հին-հին օրերը: Ուշադիր նայեց մանկլավիկին, որը մի շեշտակի և անվեհեր պատասխան հայացք գցեց Ռոբինի վրա:

—Ո՞վ ես դու, որոյակ իմ,— հարցրեց Ռոբինը:

—Ես քո որոյակը չեմ: Ես ունեմ իմ սեփական անունը,— պատասխան տվեց պատանին:

—Օ՛, քնքուշ տղա, ես տեսնում եմ, որ մենք, անտառի մարդիկս պետք է քեզ քաղաքավարություն սովորեցնենք,— ասաց Ռոբինը:

—Բայց ոչ այն դեպքում, եթե անտառի ներկայացուցիչը դու ես,— գոչեց մանկլավիկը քաշելով իր սուրը,— դե հանի՛ր սուրդ և պաշտպանվի՛ր:

Մանկլավիկը սուրը դուրս քաշեց: Ռոբինը բարկացավ, բայց ստիպված եղավ հանելու իր սուրը: Բայց նա չէր ուզում իր ամբողջ ուժը գործադրել երեխայի դեմ: Քառորդ ժամ մենամարտելուց հետո մանկլավիկը շատ հոգնեց և նրա այտերին հրապուրիչ կարմիր վարդեր երևացին:

Մինչ այդ Ռոբինի բարի տրամադրությունը վերադարձել էր և նա ժպտում էր մենամարտելիս:

Պատանին, նկատելով Ռոբինի ժպիտը, զայրացավ և փորձեց ավելի ուժեղացնել իր հարվածները: Ռոբինն ավելի ու ավելի էր ուրախ ժպտում, բայց մենամարտին վերջ տալու համար, թույլ տվեց, որ մանկլավիկը մի թեթև վիրավորի իր դաստակը:

— Դե, բարեկամ, բավարարվեցի,— հարցրեց Ռոբինը:

— Այս, միանգամայն,— պատասխանեց մանկլավիկը: — Գուցե հիմա կասես անունդ:

— Ես Ռիչարդ Փարթինգտոնն եմ, նորին գերագանցություն Էլեանոր թագուհու մանկլավիկը,—պատասխանեց պատանին:

Նրա ձայնը մի անգամ ևս խիստ հուզեց Ռոբինին:

— Իսկ ինչո՞ւ ես մենակ եկել, ո՞վ տեր Փարթինգտոն:

— Անտառապահ, ես ման եմ գալիս Ռոբին Յուդին՝ օրենքից դուրս համարվող մարդուն, որի համար թագուհու ներումն եմ բերում: Չե՞ս ասի, թե որտեղ կարող եմ գտնել նրան:

Եվ, սպասելով իր պատասխանին, նա մի փոքրիկ թաշկինակով սրբեց իր սուրը և նորից տեղը դրեց: Այդ պահին օրենքից դուրս համարվող մարդը նկատեց ոսկեծույլ նետի փայլը:

— Ա՛, հիմա արդեն ճանաչեցի քեզ,— հրճվանքով բացադանչեց Ռոբինը:— Ես եմ նվաճել այդ ոսկեծույլ նետը շերիֆի մարտախաղում և դու այն օրհորդն ես, որին նվիրաբերեցի: Դու օրհորդ Մարիանն ես:

— Մի՞թե դու...— կարկամեց օրհորդը, որ իրոք Մարիանն էր,— Ռոբինն ես:

— Ես եմ, որ կամ,— ասաց նա ցնծազին: Եվ նա գրկեց պատանի մանկլավիկին ու այնքան երջանիկ զգաց իրեն:

— Բայց Ռոբին,— արտասվեց նա,— ես չճանաչեցի քեզ և կոպտեցի ու վիրավորեցի:

— Ոչինչ,— պատասխանեց նա ծիծաղելով,— քանի որ այդ վերջն է, որ քեզ բերեց ինձ մոտ՝ ես միշտ էլ սիրով պիտի հիշեմ այն: Աղջիկը մի փոքրիկ թաշկինակով կապեց տղայի վիրավոր դաստակը և ասաց.

— Յիմա արդեն կապաքինվի,— ու Ռոբինը համոզված էր, որ նա ճշմարիտ էր խոսում, որովհետև ամբողջ կյանքում դեռ երբեք իրեն այդքան երջանիկ չէր զգացել:

Նրանք զրուցեցին այնքան երկար, որ արևն արդեն սկսել էր մայր մտնել. նոր միայն կռահեցին, որ շատ ժամանակ էր անցել:

— Ես վատ տնատեր եմ,— ասաց Ռոբինը, ոտքի ելնելով:— Ես քեզ նույնիսկ իմ վայրի հյուղակը չիրավիրեցի:

— Իսկ ես էլ վատ մանկլավիկ եմ,— պատասխանեց Մարիանը,— որովհետև մոռացել եմ, որ ես Ռիչարդ Փարթինգտոնն եմ և որ իրոք Էլեանոր թագուհուց ներում եմ բերել քեզ համար:

Ու այսպես, բացատրով վերադառնալիս, նա պատմեց Ռոբինին, թե ինչպես նրա աղեղի համբավը Լոնդոն էր հասել՝ Էեանոր թագուհու ականջը: Եվ թագուհին

այսպես էր ասել. «Ես ուզում եմ տեսնել այդ խիզախ յոմենին և ականատես լինել նրա աղեղի վարպետությանը»:

Եվ թագուհին ներում էր խոստացել նրան՝ պայմանով, որ հաջորդ մարտախաղին նա և իր նետաձիգներից չորսը գային Լոնդոն և իր կողմից մասնակցեին մրցմանը՝ արքա Յարրիի ընտրած մարդկանց դեմ:

Այսպես գրուցելով նրանք հասան օրենքից դուրս համարվող մարդու թաքստոցը, և հենց որ Ռոբինը ուժգին փչեց իր փողը՝ ամբողջ խումբը հավաքվեց:

Ուիլլ Սքարլեթը իսկույն ճանաչեց գեղանի Մարիանին, երկու ձեռքերով բռնեց նրան և սրտանց համբուրեց նրա այտերը: Հետո մի կողմ քաշեց Ռոբինին և մեղմ խոսեց նրա հետ: Վերջում, դառնալով խմբին հայտարարեց,

— Ուրախ մարդիկ, այսօր խումբը ողջունում է իր տիրուհուն՝ օրհորդ Մարիանին, որը մեր տիրոջ՝ Ռոբին Յուդի, հարսնացուն է:

Օրենքից դուրս համարվող բոլոր մարդիկ ողջունեցին ամոթից շիկնած, բայց երջանիկ Մարիանին: Նա մի նոր ընկերուհու գտավ հանձին Ալլան-Է-Դեյլի քաղցրադեմ կնոջ: Երեկոյան կանացի շորերը նրան ավելի չքնաղ էին դարձրել, երբ նա նստեց Ռոբինի աջ կողմը:

Բարի գալուստի մի մեծ խրախճանք էին կազմակերպել, որին ներկա էին Ռոբինն ու իր բոլոր մարդիկ:

Ընթրիքից հետո Ալլանը քաղցր մեղեդիներ երգեց ի պատիվ չքնաղ հյուրի, որը նստած էր Ռոբինի կողքին՝ ոսկեծույլ նետը իր սև մագերում խրած: Բոլոր մյուսները, սկսած Ուիլլ Սքարլեթի բարիտոնից մինչև ճգնավոր Թաքի բամբ բասը, ձայնակցեցին նրան՝ խմբերգ կազմելով:

Ապա Ռոբինը խնդրեց Մարիանին, որ նա կրկին հայտարարի թագուհու պատգամը, որից հետո յոմենները խմեցին թագուհու և նրա մանկլավիկի կենացը:

— Դուք լսեցիք նորին գերազանցության ցանկությունը,— ասաց Ռոբինը:— Ուրեմն միայն չորս մարդ է գալու ինձ հետ. և ես ընտրում եմ Լիթլ Ջոնին, Ուիլլ Սթյուարթին, Ուիլլ Սքարլեթին, Ալլան-Է-Դեյլին: Տիկին Դեյլը կարող է ուղեկցել իր ամուսնուն: Առավոտյան վաղ դուրս ենք գալու: Մեր բացակայության ժամանակ խմբի հրամանատարությունը հանձնում եմ Մաչին և այրու երեք որդիներին՝ Սթաուեր Ուիլլին, Լեսթերին և Ջոնին:

Ռոբինի հրամանները ընդունեցին հավանության բացականշություններով: Նորից կենացներ առաջարկեցին, որից հետո խումբը գնաց հանգիստ առնելու:

\*\*\*

Հաջորդ առավոտյան յոթ հոգուց բաղկացած խումբը ճամփա ընկավ: Օրենքից դուրս համարվող մարդիկ նրանց ուղեկցեցին մինչև անտառի ծայրը: Մի գեղեցիկ տեսարան էր բացվել: Յոմենները լինքոլն կանաչ էին հագել, իսկ Ռոբինը՝ ալ կարմիր:

Ճանապարհորդությունը դեպի Լոնդոն անցավ առանց միջադեպի: Սրանք ժամանակին հասան պալատ և սպասեցին թագուհու ընդունելությանը:

Ռոբինին ու նրա մարդկանց տեղ տվեցին պալատում և նրանց ժամանումը այնպես գաղտնի պահեցին, որ ոչ ոք չիմացավ թագուհու հյուրերի մասին:

Այդ օրը արքան, իր ընտրած մարդկանց հետ միասին, գնաց մարտախաղի վայրը ստուգելու: Նա շատ էր հպարտանում իր նետաձիգներով:

Թագուհին, ընդունարանում նստած, զրուցում էր իր լեդիների հետ, երբ Մարիանը ներս մտավ և խոսելու համար սպասեց թագուհու թույլտվությանը:

— Օ՛, արդյոք սա միլեդի Մարիանն է, թե մանկլավիկ Ռիչարդ Փարթինգթոնը,— ասաց թագուհին ժպտադեմ:

— Երկուսն էլ, ձերդ գերազանցություն: Ռիչարդը գտավ այն մարդուն, որին դուք ցանկանում էիք տեսնել, իսկ Մարիանը նրան պալատ բերեց:

— Հապա որտե՞ղ է նա,— հարցրեց Էլեանոր թագուհին:

— Ձեր ընդունելությանն են սպասում նա և նրա մարդկանցից չորսը ու մի տիկին, որի հարսանիքի մասին մի ուրիշ անգամ հետաքրքիր մի պատմություն կպատմեմ:

Թագուհին շտապում էր տեսնել նրան, ուստի Մարիանը հրամայեց կանչել խմբին: Ռոբին Հուդն ու նրա մարդիկ ներս մտան:

Թագուհին շատ զարմացավ և միաժամանակ ուրախացավ տեսնելով, որ օրենքից դուրս համարվող մարդիկ, չնայած անտառում անցկացրած իրենց վայրի կյանքին, բարեկիրթ մարդու տեսք ունեին:

Ռոբինը չէր մոռացել այն քնքուշ շարժումները, որ մայրն էր սովորեցրել իրեն: Նա առաջ անցավ, խոնարհվեց թագուհու առջև և ասաց,

— Ահա ես՝ Ռոբին Հուդը և իմ ընտրյալ մարդիկ: Ես եկել եմ ձերդ գերազանցության հրամանի համաձայն՝ ձերդ գերազանցությանը ծառայելու մարտախաղում:

— Բարով եք եկել, Լոքսլեցի,— ասաց թագուհին ժպտադեմ:— Ճիշտ ժամանակին եք եկել և՛ դուք, և՛ ձեր անվեհեր յոմենները:

Ապա Ռոբինը հերթով ներկայացրեց իր մարդկանց և յուրաքանչյուրը խոնարհվեց թագուհու առջև: Թագուհին նրանցից ամեն մեկին ողջունեց բարի խոսքերով: Թագուհին համբուրեց տիկին Դեյլիի այտը և առաջարկեց նրան մնալ պալատում՝ արքունի կանանց հետ, քանի դեռ նրանք քաղաքում էին մնալու: Ապա խմբի մարդկանց առաջարկեց հանգստանալ երկարատև ճանապարհորդությունից հետո: Հոյակապ գինիներով և բազմատեսակ ուտեստեղենով հյուրասիրեցին նրանց: Եվ ճաշկերույթի ընթացքում թագուհին կրկին խոսեց մարտախաղի մասին:

Ռոբինն ու նրա մարդիկ թագուհուն սրտանց խոստացան նրա կողմից մասնակցել մարտախաղին: Ապա ներկաներին պատմեցին իրենց ուրախ արկածներից, իսկ ունկնդիրները կուշտ ծիծաղեցին դրանց վրա: Թագուհուն շատ դուր եկավ Փլիմփթոն եկեղեցու հարսանիքի պատմությունը և նա Ալլան-Է-Դեյլին առաջարկեց երգել:

Մի քնար բերեցին Ալլանի համար և նա քաղցրաբար երգեց հյուսիսի երգերը, իսկ թագուհին ու նրա լեդիները լուռ լսեցին մինչև վերջ:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՕՐԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ ՅԱՄԱՐԿՈՂ ՄԱՐԴԻԿ ԱՐՁԱԿԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՆԵՏԵՐԸ ԱՐՔԱ ՅԱՐՐԻԻ ՄԱՐՏԱԽԱՂՈՒՄ

Մեծ նետաձգության առավոտը Լոնդոնի յուրաքանչյուր բնակիչ համակված էր անհամբերության տենդով: Շրջանի բոլոր մարդիկ նույնպես վեր էին կացել վաղ առավոտյան. նրանք մեկնեցին Ֆինզբերի դաշտը, որ երեք կողմից շրջապատվում էր նստարաններով: Դաշտի կենտրոնում գետեղված էին արքայական զույգի և ազնվականների օթյակները:

Դաշտի մի ծայրում տասը երփներանգ տաղավարներ էին պատրաստած արքայի նետաձիգների զանազան խմբերի համար: Ամեն խումբ իր խմբապետն ուներ:

Արքան շատ էր հպարտանում իր նետաձիգներով և այս մարտախաղը կազմակերպել էր նրանց վարպետությունը ցուցադրելու համար:

Յանդիսականները սպասում ու դատողություններ էին անում իրենց սիրած նետաձիգների հավանական հաջողության մասին: Մինչ այդ լորդերն ու լեդիները դանդաղաքայլ մտնում էին մրցադաշտ ու գրավում իրենց տեղերը: Շատ չանցած, շեփորները ազդարարեցին նորին գերազանցությունների մուտքը:

Երբ արքան ու թագուհին բազմեցին իրենց գահերի վրա արքայական օթյակում, մուկներով և առաջ եկավ և նրա շեփորի զիլ հնչյունը աղմկահույզ ամբոխին լռեցրեց: Նետաձիգները կանգնեցին մրցադաշտի երկու կողմերում, մինչդեռ խմբապետները, ի նշան հատուկ բարեհաճության, շարվեցին արքայական օթյակի մոտ:

Ապա արքան հրամայեց տասը թիրախ հաստատել:

— Իսկ ի՞նչ պարգևատրություն է լինելու,— հարցրեց թագուհին:

— Մուկներով կհայտնի,— պատասխանեց արքան:

— Առաջին մրցանակը քառասուն ոսկի ֆունտ պարունակող մի քսակ է լինելու, երկրորդը՝ քառասուն արծաթ պեննա պարունակող քսակ, իսկ երրորդը՝ արծաթե մի փող: Բացի դրանից, հաղթողներին առատ զինի և ուտելիք կտրվի:

Մուկներովը նորից առաջ անցավ և հայտարարեց կանոններն ու մրցանակները: Մրցմանը կարող էին մասնակցել բոլոր ցանկացողները: Յուրաքանչյուր արքայական նետաձիգ երեք նետ պետք է արձակեր իր խմբի թիրախին և այսպիսով կընտրվեր ամեն մի խմբի լավագույն նետաձիգը:

Այնուհետև ընտրված այս տասը նետաձիգները պետք է մասնակցեին կամավոր մրցությանը և կրկին երեքական նետ արձակեին: Իսկ այս երկրորդ մրցությանը կարող էր մասնակցել ամեն մի նետաձիգ: Ազատ մրցման արդյունքները պետք է որոշեին մարտախաղի ելքը:

Ամբոխը կրկին աղաղակեց ի նշան մրցման կանոնների և մրցանակների հավանության:

Նետաձգությունը միաժամանակ սկսվեց բոլոր թիրախների վրա և հրամայեցին մրցման ժամանակ լռություն պահպանել: Բոլոր նետաձիգները երեք անգամ նշան բռնեցին թիրախներին: Անհնար է նկարագրել այդ առավուտվա նետաձգության գեղեցկությունը:

Ի վերջո, յուրաքանչյուր խմբի լավագույն նետաձիգները ընտրվեցին: Հաղթողները ողջունեցին արքային և թագուհուն ու գնացին իրենց տաղավարները՝ հանգիստ առնելու և իրենց աղեղները մրցմանը պատրաստելու համար: Մինչ այդ մրցադաշտը մաքրեցին և մի նոր թիրախ տեղադրեցին կամավոր մրցման համար: Արքայի հրամանով մուկետիկը նորից ի լուր բոլորի հայտնեց, որ ամեն մարդ իրավունք ուներ փորձելու իր վարպետությունը ազատ մրցմանը և ստանալ ամբողջ Անգլիայում լավագույն նետաձգի կոչումը: Բայց ընդամենը տասներկու մարդ ցուցակագրվեց:

— Սրանք երևի խիզախ մարդիկ են, որ ուզում են մրցել իմ նետաձիգների հետ,— ասաց արքան:

— Կարծո՞ւմ եք, որ ձեր ընտրած տասը մարդիկ Անգլիայի լավագույն նետաձիգներն են,— հարցրեց թագուհին:

— Այո, և նույնիսկ ամբողջ աշխարհում,— պատասխանեց արքան,— և ես ուրախությամբ գրազ կգամ հինգ հարյուր ֆունտի վրա:

— Կարծում եմ, որ գրազը կընդունեմ, եթե մի շնորհ անեք,— ասաց թագուհին:

— Իսկ ի՞նչ շնորհ եք պահանջում,— հարցրեց արքան:

— Եթե ես գտնեմ հինգ նետաձիգ, որոնք գերազանցեն ձեր մարդկանց, նրանց լրիվ ներում կշնորհե՞ք:

— Իհարկե,— ասաց արքան:— Բայց դա անիմաստ բան է, քանի որ իմ նետաձիգները մրցակից չունեն:

— Ձերդ գերազանցություն,— ասաց թագուհին ժպտալով,— ես ընդունում եմ հինգ հարյուր ֆունտի ձեր գրազը:

— Շատ բարի,— ասաց արքան ծիծաղելով:— Իսկ ինչո՞ւ է այսօրվա մրցությունը ձեզ այդքան հետաքրքրում:

— Ես հայտնաբերել եմ հինգ մարդու, որոնք կարող են մրցել ձեր ընտրած ամեն մի նետաձգի հետ,— ասաց թագուհին:

— Եկեք փորձենք նրանց վարպետությունը,— առաջարկեց արքան:

— Ի՞նչ կասեք, եթե մենք սկզբում որոշենք թիրախի տեղը և ապա իմ հինգ լավագույն նետաձիգները մրցեն ձեր անհայտ չեմպիոնների հետ:

— Համաձայն եմ,— պատասխանեց թագուհին:

Ապա նա իր մոտ կանչեց օրհորդ Մարիանին և ինչ-որ բան շշուշու նրան ցածրաձայն: Մարիանը գնաց:

Արքայական տասը լավագույն նետաձիգներն առաջ եկան և նրանց կողքին կանգնեցին տասներկու կամավոր մասնակիցներ: Դաշտում նորից լռություն տիրեց, և բոլոր աչքերը հետևում էին նետերի թռիչքին: Կամավորները ճիշտ խփեցին, բայց և այնպես արքայական նետաձիգները ավելի վարպետ դուրս եկան:

Մունետիկը նորից առաջ եկավ և մրցանակը շահողների անունը հայտնելու փոխարեն, հայտարարություն արեց ավարտական մրցության մասին. «Նորին գերազանցություն արքան հայտնում է, որ բոլոր հինգ հաղթողները նորից պետք է արձակեն իրենց նետերը մրցելով թագուհու ընտրած հինգ մարդկանց հետ, որոնք դեռ այսօրվա մարտախաղին չեն մասնակցել:

Հանդիսատեսները մնացին զարմացած: «Ուլքե՞ր էին թագուհու ընտրած մարդիկ»,— հարցնում էր ամեն ոք: Ապա դաշտի հեռավոր ծայրի դարպասը բացվեց և մի հեծյալ լեդիի հետևից ներս մտան հինգ մարդ և մրցադաշտի միջով քայլեցին դեպի արքայական օթյակը: Լեդիին իսկույն ևեթ ճանաչեցին. Մարիան Ֆիցուլթրոն էր՝ թագուհու լեդիներից: Բայց տղամարդկանց ոչ ոք չէր ճանաչում: Չորսը հագնված էին լինքով կանաչ, իսկ հինգերորդը, որը հավանորեն առաջնորդն էր, ալ շորեր ուներ հագին: Սրանց զենքերն էին մի-մի ամուր աղեղ, նոր նետերի մի կապարձ և մի կարճ որսորդական դանակ: Երբ փոքրիկ խումբը հասավ այն օթյակին, ուր արքան և թագուհին էին նստած, յոմենները ողջունեցին նրանց: Մինչ այդ Մարիանը իջավ ձիուց:

— Ձերդ գերազանցություն, — ասաց նա դիմելով թագուհուն, — սրանք այն մարդիկ են, որոնց հետևից ինձ ուղարկեցիք և որոնք այժմ եկել են մարտախաղի՝ ձեր կողմից մասնակցելու համար:

— Լոքսլեցի, — հնչեց թագուհու հստակ ձայնը, — ես շնորհակալություն եմ հայտնում ձեզ և ձեր մարդկանց այս ծառայության համար: Իմացեք, որ ես գրագ եմ եկել արքայի հետ, որ դուք գերազանցելու եք նրա ընտրած հինգ լավագույն նետաձիգներին:

Արքան, դառնալով թագուհուն, հարցրեց:

— Ուլքե՞ր են այս մարդիկ, որոնց այստեղ եք բերել: Այդ պահին Յերֆորդի գեր եպիսկոպոսը մոտեցավ ու խոսեց զայրույթից կարմրած:

— Ներեցեք, ձերդ գերազանցություն, — ասաց նա, — բայց ես ճանաչում եմ այս մարդկանց: Դրանք օրենքից դուրս են համարված: Ալ շորեր հագած մարդը Ռորին Յուդն է: Մյուսները՝ Լիթլ Ջոնը, Ուիլլ Սթյուարթին, Ուիլլ Սքարլեթը և Ալլան-Է— Դեյլն են: Բոլորն էլ հայտնի են իրենց չար գործերով:

Արքան մեծապես զայրացավ: Նրան քաջ հայտնի էր Ռորին Յուդի անունը:

— Ճի՞շտ է այս ամենը, — հարցրեց նա:

— Այո՛, միլորդ, — պատասխանեց թագուհին: — Բայց մի մոռացեք, որ ներման մասին ինձ արքայական խոստում եք տվել:

— Խոստմանս տերը կլինեմ, — ասաց արքան. — բայց իմացած եղեք, շնորհում եմ միայն քառասուն օր, որից հետո օրենքից դուրս հայտարարված մարդիկ պետք է մտածեն իրենց անվտանգության մասին:

Ապա, դառնալով իր հինգ հաղթողներին, որոնք մոտ էին եկել, ասաց,

— Դուք լսեցի՞ք, իմ մարդիկ, որ թագուհին ընտրել է Շերվուդի և Բարնզդեյլի մի քանի կամավոր նետաձիգների, որոնք պետք է մրցեն ձեզ հետ: Եթե դուք նրանցից ավելի հաջող խփեք, մեծ պարգևներ եք ստանալու: Բայց եթե տանուլ տաք, մրցանակները շնորհելու եմ Ռոբին Յուդին և իր մարդկանց՝ իմ արքայական խոսքի համաձայն:

«Ռոբին Յուդն ու նրա մարդիկ» խոսքը թռավ մրցադաշտով մեկ և ամեն ոք ջանում էր առաջ անցնել և տեսնել այդ հռչակավոր մարդկանց:

Մի այլ թիրախ հաստատեցին առայժմ նույն հեռավորության վրա, որտեղ վերջինս էր նշանակված, և որոշվեց, որ տասը նետաձիգները պետք է հերթով երեքական նետ արձակեն:

Արքայի մարդկանցից չորսը հերթով պրկեցին իրենց նետերը, յուրաքանչյուրն առանձին մրցելով Ուիլլ Սքարլեթի, Ալլան-Է-Դեյլի, Ուիլլ Սթյուարթի և Լիթլ Ջոնի հետ: Շատ անգամ ճիշտ նշանին խփեցին: Յանդիսատեսները ծափահարությունների տարափով ողջունում էին նրանց հաջողությունը: Ալլան-Է-Դեյլն ու Լիթլ Ջոնը շահեցին, իսկ Ուիլլ Սքարլեթն ու Ուիլլ Սթյուարթին պարտություն կրեցին: Վերջին երկու մրցողներն էին Ռոբին Յուդն ու Գիլբերթը՝ արքայի լավագույն նետաձիգներից մեկը:

Գիլբերթը առաջ անցավ և մեկը մյուսի հետևից դանդաղ արձակեց իր նետերը: Նրա նետը բոլորից հաջող դիպավ, բայց էլի մի փոքր շեղվեց կենտրոնից:

— Յիսուսի՛ր է, Գիլբերթ,— ասաց Ռոբին Յուդը:— Դու արժանավոր մրցակից ես: — Եվ այսպես խոսելիս նա իրար հետևից արձակեց իր երեք նետերը:

Դրան հաջորդեցին որոտընդոստ ծափահարություններ, քանի որ Ռոբինի արձակած երեք նետերն էլ դիպել էին ճիշտ ամենափոքրիկ կենտրոնին, որը մինչ այդ դեռ նետ չէր տեսել: Իսկ հեռվից այնպես էր թվում, թե երեք նետերը մի խոշոր նետ էին դարձել: Չարմանքից և զայրույթից արքան տեղից վեր թռավ:

— Գիլբերթը դեռ չի պարտված,— գոչեց նա:— Չէ՛ որ նա էլ երեք անգամ դիպցրեց նշանին: Ըստ նետաձգության կանոնների, պետք է երկրորդ անգամ փորձել:

— Թույլ տվեք որոշել թիրախը երկրորդ նետաձգության համար,— ասաց Ռոբինը:

Արքան տվեց իր համաձայնությունը: Ռոբինը դիմեց կանաչ անտառի հինավուրց հնարներից մեկին: Թիրախի փոխարեն նա վերցրեց մի բարակ սպիտակ ձող և խրեց գետնի մեջ:

— Ահա, բարեկամ Գիլբերթ, մի գուցե դրան դիպցնես,— ուրախ-ուրախ ասաց նա:

— Այստեղից դեռ կարգին չեմ էլ տեսնում նշանը, էլ ինչպե՛ս ես պահանջում, որ նետով խփեմ,— ասաց Գիլբերթը.— բայց, հանուն արքայի պատվի, պետք է փորձել:

Գիլբերթի վերջին նետը վրիպեց և սուրաց բարակ սպիտակ ձողիկի կողքով: Դրանից հետո Ռոբինը վերադարձավ իր տեղը, ընտրեց նետը, պրկեց իր փառավոր երկար աղեղը և բաց թողեց նետը, որը շեշտակի սլացավ՝ ճանապարհին հաղթանակի մեղեդի շվացնելով: Ձողիկը երկու կտոր եղավ, ասես որսորդական դանակով կիսված:

— Իրավ եմ ասում, քո նետի մեջ սատանա է նստած,— գոչեց Գիլբերթը,— ես այսպիսի նետածգի կյանքումս չեմ հանդիպել:

— Դու դեռ պիտի գաս կանաչ անտառ մեր ուրախ տղաներին տեսնելու, պատասխանեց Ռոբինը հրճվանքով:

Մինչդեռ արքան՝ խիստ զայրացած՝ դատավորներին հրամայեց բաշխել մրցանակները և, առանց թագուհու հետ խոսելու, հեծավ իր ձին և մեկնեց դաշտից՝ իր որդիների և ազնվականների ուղեկցությամբ: Դրանից հետո թագուհին խնդրեց, որ օրենքից դուրս համարվող մարդիկ մոտ գան: Նրանք մոտ եկան և ծնկի իջան թագուհու առջև:

— Դուք ինձ սքանչելի ծառայեցիք,— ասաց նա,—բայց ափսոսում եմ, որ արքան զայրացավ: Սակայն երկյուղ մի կրեք: Նա իր խոսքի տերն է: Իսկ ինչ վերաբերվում է ձեր մրցանակներին, ապա դրանց վրա մի հատ էլ եմ ավելացնում, դա իմ սեփական մրցանակն է՝ գրագը, որ ես շահեցի նորին գերազանցություն արքայից: Այս դրամով Լոնդոնից գնեցեք ձեր խմբի համար լավագույն սրերը կոչեցեք թագուհու անունով ու այդ սրերով երդվեք սատար լինել բոլոր աղքատներին, անօգնականներին ու կանանց, որոնք հանդիպեն ձեր ճանապարհին:

— Երդվում ենք,— միաբերան պատասխանեցին հինգ յոմենները: Ապա թագուհին հինգին էլ մեկնեց իր ձեռքը, որ համբուրեն, և հեռացավ դաշտից՝ արքունիքի լեդիների ուղեկցությամբ:

Դրանից հետո արքայական նետածիգները շրջապատեցին Ռոբինին և նրա մարդկանց: Նրանք ուզում էին մի լավ տեսնել այն մարդկանց, որոնց մասին այնքան շատ էին լսել: Նրանց հետևից հանդիսատեսների մի հոծ ամբոխ էր գալիս: Նրանք էլ էին ուզում տեսնել օրենքից դուրս համարված մարդկանց:

Յետո դատավորները մոտեցան ու, ըստ արքայի հրամանի, հայտարարեցին յուրաքանչյուրի մրցանակը:

Ռոբինին տվեցին քառասուն ոսկի ֆունտ պարունակող քսակը: Լիթլ Ջոնը ստացավ քառասուն արծաթե պեննաները, իսկ Ալլան-Է-Դեյրը՝ գեղեցիկ արծաթե փողը: Երբ հերթը եկավ գինուն ու ուտելիքին, Ռոբինն ասաց,

— Ո՛չ, կանաչ անտառից այսքան հեռու մենք գինու ու ուտելիքի կարիք չունենք: Գիլբերթն ու մյուսները բավականին լավ խփեցին: Այնպես որ միսն ու խմիչքը թող նրանց տրվի, եթե համաձայնվեն ընդունել այն մեզանից:

— Մեծ ուրախությամբ,— պատասխանեց Գիլբերթը:

— Դուք բոլորդ էլ լավ մարդիկ եք և մենք կիսմենք նետածգության այն մեծագույն օրվա կենացը, որ Անգլիան երբևիցե տեսել է կամ կտեսնի:

Եվ այսպես ավարտվեց արքայի մարտախաղը, որի պատմությունը բերնեբերան անցել ու հասել է մեր օրերը:

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈՒԲԻՆ ՅՈՒՐԸ ՅԱՆԴԻՊԵՑ ԼԻՑԻ ՍԸՐ ՌԻԶԱՐԴԻՆ

Անցավ ևս մի քանի ամիս: Ամռանը հաջորդեց պայծառ գարունը: Մի ուրիշ ամառ էլ անցավ նույնքան արագ, բայց և այնպես ո՛չ արքան, ո՛չ էլ շերիֆը կամ եպիսկոպոսը չէին կարողանում բռնել օրենքից դուրս համարվող մարդկանց: Ժամանակ առ ժամանակ խումբն ավելանում էր ընտիր մարդկանցով և հիմա արդեն նրանք հարյուր քառասուն հոգի էին դարձել: Առաջվա նման թեթևացնում էին հարուստների քսակները, օգնում՝ աղքատներին և խնջույք անում արքայի եղջերուներով:

Այդ ժամանակներում Յարրի թագավորը մեռավ և գահ բարձրացավ նրա ժառանգորդը՝ Ռիչարդ Առյուծասիրտը:

Ռոբինն ու նրա մարդիկ, երկար վիճելուց հետո, որոշեցին դառնալ հավատարիմ հպատակներ և խնդրել նոր արքային, որ իրենց արքայական անտառապահներ կարգի: Ու այսպես, Ուիլլ Սքարլեթին, Ուիլլ Սթյուրթլիին և Լիթլ Ջոնին ուղարկեցին Լոնդոն՝ օրիորդ Մարիանի մոտ այդ պատգամով: Բայց նրանք շուտով վերադարձան իրենց հետ մի վատ լուր բերելով: Նոր արքան գնացել էր խաչակրաց արշավանքի, իսկ իր եղբայրը Ջոն իշխանը, դաժան և ուխտադրուժ մարդ էր: Նա իր թաթը դնում էր բուրդ այն հողերի վրա, որոնք հեշտ էր բռնագրավել: Այդ հողերի հետ նա տիրացավ նաև Յանթինգոնի կոմսի կալվածքներին: Կոմսը, որը Ռոբինի հին թշնամին էր ու Մարիանի հայրը, վերջերս էր վախճանվել:

Մարիանը դժվարին կացության մեջ էր: Նրա կալվածքները զավթել էին, ինքը կորցրել էր թագուհու հովանավորությունը, իսկ չար իշխան Ջոնը իր սիրատածումներով հանգիստ չէր տալիս նրան: Նա կարծում էր, թե քանի որ օրիորդը անպաշտպան է, ապա կարող է նրան տանել իր ապարանքներից մեկը:

Ռոբինը ոչինչ չգիտեր այդ վտանգի մասին, որովհետև իր մարդիկ պատմել էին միայն Յանթինգոնի կալվածքի զավթման մասին: Բայց և այնպես նա խիստ մտահոգված էր օրիորդ Մարիանի ապահովությամբ և դա մշտապես զբաղեցնում էր նրա միտքը:

Վաղ աշնանային մի առավոտ Ռոբինը զբոսնում էր մի փոքրիկ բացատում՝ սովորականի պես մտածելով Մարիանի մասին: Յանկարծ ծառերի միջից մի վայրի ու կատաղած եղջերու դուրս պրծավ և հարձակվեց նրա վրա: Յարձակումը այնքան անակնկալ էր, որ Ռոբինը ժամանակ չունեցավ աղեղը քաշելու: Նա ցատկեց մոտակա ծառի հետևը, հանեց աղեղը և մի նետ պատրաստեց:

Սակայն, մի պահ անց, եղջերուն շուռ եկավ և նայեց բացատի ձախ կողմի թփերին: Մի քնքուշ ձեռք ետ քաշեց այդ թփերը և մանկավիկի փոքրիկ կերպարանքը երևաց բացվածքից: Օրիորդ Մարիանն էր այդ, որը եկել էր կանաչ անտառը:

Առաջ անցավ նա և կանգնեց եղջերուի հետ մի ուղիղ գծի վրա, այնպես որ Ռոբինը չկարողացավ արձակել իր նետը: Կատաղած կենդանին վազեց իր այս նոր զոհի վրա այնքան արագ և այնպես մոտիկից, որ աղջիկը չկարողացավ պաշտպանվել: Երբ եղջերուն հարձակվեց վրան, նա մի կողմ ուստնեց, բայց եղջուրներից ստացած հարվածը ցած գցեց աղջկան: Կատաղի կենդանու եղջուրները արդեն շատ էին մոտեցել նրան, երբ Մարիանը անակնկալ հարձակումից գունատված և ահաբեկված, փորձեց վեր կենալ և դուրս քաշել սուրը:

— Պառկիր, Մարիան,— բղավեց Ռոբինը, և աղջիկը բնագոյաբար հնազանդվեց: Զենց այդ պահին Ռոբինի նետը սուրաց նրա գլխի վրայով և մեծ թափով խրվեց եղջերուի ճակատի մեջտեղը: Անշնչացած կենդանին ընկավ ուշակորույս աղջկա վրա:

Մի ակնթարթում Ռոբինը հասավ աղջկան ու վրայից դեն գցեց եղջերուին: Նա իր հուժկու բազուկներով գրկեց Մարիանին և իսկույն գետափ տարավ:

Աղջկա դեմքին սառը ջուր շաղ տվեց և աղջիկը շուտով ուշքի եկավ:

— Որտե՞ղ եմ ես,— հարցրեց նա:

— Դուք Շերվուդումն եք, սիրելի օրհորդ:

Աղջիկը բաց արեց աչքերը և նստեց.

— Կարծեմ դուք ինձ փրկեցիք անակնկալ վտանգից, սըր,— ասաց նա:

Ու ճանաչեց Ռոբինին, մի երջանիկ ժպիտ ողողեց նրա դեմքը, նա գլուխը դրեց Ռոբինի ուսին:

— Օ՛հ, Ռոբին, այդ դո՞ւ ես:

— Այո, փառք Աստծո, որ այստեղ էի և կարողացա օգնության հասնել:

Ռոբինի ձայնը, լի հորդ զգացումներով, հոգու խորքից էր գալիս:

— Երդվում եմ, թանկագին Մարիան, երբեք քեզ մենակ չթողնել:

Մի պահ նրանք լուռ մնացին, աղջկա գլուխը հանգչում էր Ռոբինի կրծքի վրա: Ապա Ռոբինը խնդրեց պատմել Լոնդոնից և իր կյանքից:

Եվ Մարիանը պատմեց, թե ինչպես իշխանը զավթել էր հոր հողերը և հանգիստ չէր տալիս նրան՝ իր սիրատածումներով:

— Ահա և բոլորը, Ռոբին,— ավարտեց նա,— ահա թե ինչու ես մանկավիհի զգեստ հագած եկա կանաչ անտառը, քեզ մոտ:

— Թող վկա լինի այս սուրը, որ Էլեանոր թագուհին է տվել,— ասաց Ռոբինը,— երդվում եմ, որ իշխան Ջոնը և նրա բոլոր զորքերը ոչ մի վնաս չեն կարող հասցնել քեզ:

Եվ այսպես Մարիանը ապաստանեց Շերվուդ անտառում. յոմենների ամբողջ խումբը սրտագին ողջունեց նրան:

Մինչ այդ, Լիթլ Ջոնը, Մաչը՝ ջրաղացպանի որդին, և Ուիլլ Սքարլեթը գնացել էին Բարնզդեյլի ճանապարհը զննելու:

Զագիվ էր մի քանի րոպե անցել, երբ նրանք նկատեցին խղճուկ ձի հեծած մի ասպետի:

Ձիավորը ասպետի հնամաշ շորեր էր հագել: Նրա գլուխը կախ էր ընկել կրծքին:

Լիթլ Ջոնը մոտեցավ ասպետին և հրամայեց, որ կանգ առնի, որովհետև արտաքինից դժվար է դատել քսակի պարունակության մասին:

— Իմ պետը ճաշի է հրավիրում ձեզ այսօր,— ասաց օրենքից դուրս համարվող մարդը:

— Ո՛չ, ո՛վ բարի մարդ,— պատասխանեց ասպետը,— ինձ ծանր վիշտ է համակել. չեմ կարող խնջույքի սեղան նստել: Բայց ո՛վ է ձեր պետը, ուզում եմ շնորհակալություն հայտնել նրան:

— Ռոբին Յուդը,— ասաց Լիթլ Ջոնը, ձեռքը տանելով ասպետի ձիու սանձին:

Նկատելով, որ ուրիշ երկու հոգի էլ են մոտենում իրենց, ասպետը անտարբեր պատասխանեց.

— Պարզ է, որ ես ձեր հրավերը անկարող եմ մերժել: Գնանք, գալիս եմ ձեզ հետ, բարեկամներ:

Եվ օրենքից դուրս համարվող մարդիկ ասպետին տարան կանաչ անտառ իրենք թաքստոցը:

Մարիանը դեռ չէր փոխել մանկավիհի զգեստը, երբ խումբը երևաց: Նա ճանաչեց գերուն. Լիցի սըր Ռիչարդն էր, որին հաճախ էր տեսել արքունիքում: Նա ուզում էր անմիջապես հեռանալ վախենալով, որ սըր Ռիչարդը կճանաչի իրեն: Բայց Ռոբինը առաջարկեց մնալ և այդ օրը հանդես գալ մանկավիհի դերում: Մարիանը համաձայնվեց:

— Բարի գալուստ, սըր ասպետ,— ասաց Ռոբինը:— Ժաման ակին եկաք, հենց ճաշի էինք պատրաստվում:

— Աստված պահի ձեզ և ձեր խմբին, շնորհակալ եմ բարի Ռոբին,— պատասխանեց ասպետը:— Ես էլ ձեզ հետ ճաշի կնստեմ:

Ասպետի ձին տարան, իսկ ինքը մի կողմ դրեց զենքերը, լվաց երեսն ու ձեռքերը և Ռոբինի մարդկանց հետ միասին նստեց ճոխ սեղանի շուրջը: Իսկ Մարիանը, Ռոբինի թիկունքում կանգնած, լցնում էր նրա և հյուրի գավաթները:

Ճաշից հետո, պատասխանելով Ռոբինի հարցերին, ասպետն իր պատմությունն արեց:

— Ես սաքսոնցի մի ասպետ եմ և միշտ խաղաղ կյանք եմ վարել: Իմ անունը Լիցի սըր Ռիչարդ է և ես ապրում եմ ապարանքներից մեկում՝ Նոթինգեմի դարպասներից ոչ այնքան հեռու: Այդ ապարանքը պատկանել է հորս, նրա հորն ու նրա պապին: Մի քանի տարի առաջ ես հարուստ մարդ էի: Բայց հիմա իմ ամբողջ ունեցվածքը կինս, որդիս և տասը արծաթե պեննա են:

— Ինչպե՞ս պատահեց, որ կորցրիք ձեր հարստությունը,— հարցրեց Ռոբինը:

— Ռիչարդ արքայի հետ գնացի խաչակրաց արշավանքի: Վերադարձիս՝ որդիս մեծացել էր արդեն: Հազիվ քսաներկու տարեկան էր նա, բայց ասպետի կրթություն էր ստացել և մասնակցում էր մարտախաղերին: Եվ այդ կամավոր մրցախաղերից մեկում պատահաբար սպանեց մի ասպետի: Չավակիս փրկելու համար ստիպված եղա վաճառել իմ հողերը: Բայց դա էլ չբավականացրեց և ես Հերֆորդի միլորդից բարձր տոկոսով դրամ փոխ առա:

— Շատ արժանավոր եպիսկոպոս է,— նկատեց Ռոբինը հեգնանքով:— Իսկ ինչքա՞ն պարտք ունեք:

— Չորս հարյուր ֆունտ,— պատասխանեց սըր Ռիչարդը:

— Լցրեք բաժակը մի անգամ էլ, սըր ասպետ, — ասաց Ռոբինը և, դառնալով Մարիանին, ինչ-որ բան շշուշաց: Սա գլխով արեց, ապա մի կողմ կանչեց Լիթ Ջոնին և Ուիլլ Սքարլեթին և շուկով խոսեց նրանց հետ: Նրանք էլ օրենքից դուրս համարվող մյուս մարդկանց հետ խորհրդակցեցին: Ապա գնացին մոտակա քարայրը և շուտով վերադարձան ոսկու մի քսակով, ուր չորս հարյուր ոսկեդրամ կար ու հանձնեցին ապշահար ասպետին:

— Վերցրեք այս դրամը, սըր ասպետ, և մարեցեք եպիսկոպոսի պարտքը,— ասաց Ռոբինը:— Ո՛հ, ոչ մի շնորհակալություն: Դուք ձեր պարտքի տեղն եք փոխում միայն: Միայն թե մենք ձեր հանդեպ այնքան խիստ չենք լինի, որքան քրիստոնյա եպիսկոպոսն է եղել:

Սըր Ռիչարդի աչքերը ողողվեցին արտասուքով, երբ նա փորձեց շնորհակալություն հայտնել օրենքից դուրս համարվող մարդկանց: Մինչ այդ, անձավից եկավ Մաչը՝ ջրաղացպանի որդին, որը շքեղ հագուստներ էր բերում ասպետին:

— Մի լավ ձի էլ պարզեիր նրան,— ասաց Մարիանը մեղմ ձայնով,— արժանավոր մարդ է: Ես լավ եմ ճանաչում:

Ձի էլ տվեցին ասպետին: Ռոբինը իր մարդկանցից մեկին հրամայեց ուղեկցել ասպետին մինչև նրա ապարանքը:

Սըր Ռիչարդը մի հանգիստ գիշեր անցկացրեց: Հաջորդ առավոտ, երբ նա հեծավ իր ձին՝ բոլորովին ուրիշ մարդ էր դարձել:

Սրտագին շնորհակալություն հայտնեց Ռոբին Ռոդին ու նրա ուրախ մարդկանց, և խոստացավ մի տարուց հատուցել իր պարտքը: Նա խնդրեց նաև, որ իրեն իսկական ընկեր համարեն: Հետո, Ռոբինի մարդկանցից մեկի ուղեկցությամբ, իր ձին քառատրոփ քշեց անտառի լռին խավարի միջով:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀՅՈՒՐԱՍԻՐԵՑԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Մի քանի օր անց Ռոբին Հուդը լսեց, որ Հերֆորդի միլորդ եպիսկոպոսը մտադիր է մի առավոտ իրենց ճանապարհով անցնել: Լրաբերը օրենքից դուրս համարվող մարդկանցից էր, Ռոբինի դեմքը պայծառացավ այդ լուրը լսելիս:

— Վաղուց եմ տենչացել միլորդին ճաշի հրավիրել մեր կանաչ անտառը և սա շատ հարմար առիթ է: Դե՛, տղերք, մի թմբլիկ եղջերու մորթեցեք: Այսօր ինձ հետ ճաշի է նստելու Հերֆորդի եպիսկոպոսը, և նա առատ վարձատրություն կտա այդ ճաշկերույթի համար:

— Սովորականի նման այստե՞ղ ենք ճաշելու,— հարցրեց Մաչը՝ ջրաղացպանի որդին:

— Մի շատ զավեշտական խաղ ենք խաղալու եպիսկոպոսի գլխին: Ճաշը կպատրաստենք մեծ ճանապարհի եզրին և բոլոր ուղիները կզննենք սպասելով եպիսկոպոսի գալուստ:

Այսպես Ռոբինը հրամաններ տվեց և նրա մարդիկ ցրվեցին անտառով մեկ: Ուիլլ Սթյուարթի և Լիթլ Ջոնի գլխավորությամբ խմբի մի մասը հսկելու էր մյուս ճանապարհները, իսկ Ռոբին Յուդը, իր մարդկանցից վեցի, դրանց թվում Ուիլլ Սթյուարթի և Մաչի հետ միասին, գնաց մեծ ճանապարհով: Ծիծաղելի տեսք էին ստացել Ռոբինի մարդիկ. նրանք հովվի շորեր էին հագել, իսկ երեսներին այնքան կեղտ կար, որ անհնար էր նրանց ճանաչել:

Իսկույն մի եղջերու խփեցին, դրեցին մարմանդ խարույկի վրա ու սկսեցին մեծ պատրաստություն տեսնել, հենց այդ պահին տեսան, որ ճանապարհով հեծյալների մի խումբ էր արշավում իրենց կողմը: Գոռոզ եպիսկոպոսն էր՝ տասը զինված մարդկանց ուղեկցությամբ: Հովիվներին նկատվելուն պես ձին նրանց մոտ քշեց:

— Հեյ, բարեկամներ, ովքե՞ր եք դուք և ո՞վ է ձեզ արքայի եղջերուներին որսալու իրավունք տվել,— հարցրեց նա:

— Մենք հովիվներ ենք,— պատասխանեց Ռոբին Յուդը:

— Դուք շատ աղքատ հովիվներ եք երևում: Իսկ ինչո՞ւ, սովորականի պես, ոչխարի միս չեք ուտում:

— Միլորդ, սա մեր տոնական օրերից մեկն է և մենք վճռել ենք մի եղջերու մորթել և ինչույք անել: Այստեղ շատ եղջերուներ կան:

— Խոսք եմ տալիս, որ արքան կիմանա այս բոլորը: Ո՞վ է որսացել եղջերուն:

— Դեռ մի ձեր անունը հայտնեցեք, միլորդ,— ասաց Ռոբինը,— ես պետք է իմանամ, թե ում հետ եմ խոսում:

— Բարեկամ, դու խոսում ես Հերֆորդի միլորդ եպիսկոպոսի հետ,— ասաց թիկնապահներից մեկը զայրացած:— Այնպես որ քեզ մի քիչ կարգի բեր:

— Եթե հոգևորական է, ուրեմն ոչ թե մեր, այլ իր հոտերի մասին թող հոգ տանի,— պատասխան տվեց Ուիլլ Սթյուարթը:

— Դուք գլխով պիտի հատուցեք ձեր վերաբերմունքի համար,— բղավեց եպիսկոպոսը:— Թողեք ձեր խփած եղջերուն և հետևիցս եկեք, պետք է իսկույն ներկայանաք Նոթինգեմի շերիֆին:

— Ներեցեք, միլորդ, հետևեցեք մեզ, — ասաց Ռոբինը:

— Ավազակներ,— բղավեց եպիսկոպոսը,— ես ձեզ կներեմ այն ժամանակ, երբ կախաղանի վրա ճոճվելիս կլինեք: Բռնեցե՛ք դրանց,— հրամայեց նա իր մարդկանց:

Բայց Ռոբինը արդեն ցատկել էր մոտակա ծառի հետևը: Հին թիկնոցի տակից նա հանեց իր եղջերափողը և փչեց, կանչեց իր խմբին:

Եղջերափողը տեսնելուն պես եպիսկոպոսը ճանաչեց Ռոբինին: Նա ետ դարձրեց ձին և փորձեց փախչել, բայց իր մարդիկ կասեցրին ճանապարհը: Համարյա նույն պահին ճամփի եզրերի թփերը բացվեցին և Ռոբինի մարդիկ դուրս եկան: Մի կողմից Լիթլ

Ջոնի մարդիկ երևացին, իսկ մյուս կողմից՝ Ռիլլ Սթյուարթիինը: Եվս մի պահ, և գեր եպիսկոպոսը գերի դարձավ և սկսեց գուժ արդեսել օրենքից դուրս հայտարարված մարդկանցից:

— Չենք ների,— պատասխանեց Ռոբինը,— բայց ես քեզ հետ ավելի լավ կվերաբերվեմ, քան դու՝ ինձ հետ: Ես արդեն ասել եմ, որ ճաշկերույթի սեղան զգեն. դու էլ մեզ հետ պիտի սեղան նստես:

Ու եպիսկոպոսին տարան անտառ՝ խփած եղջերուն նրա ձիու թամբին դրած: Իսկ Ռոբինն ու նրա մարդիկ առաջնորդեցին ամբողջ խումբը անտառի բացատներով, մինչև որ հասան մի բաց տեղ՝ Բարնզդեյլի մոտ:

Այստեղ Ռոբինը եպիսկոպոսին առաջարկեց նստել և հանգիստ առնել: Մաչը՝ ջրաղացպանի որդին, սկսեց կրակի վրա խորովել եղջերուին: Եպիսկոպոսը շատ էր քաղցած և ուրախացավ, երբ նրան առաջարկեցին ճաշել: Ռոբինը նրան նստեցրեց ամենապատվավոր տեղը՝ իր կողքին: Կարմիր գինի բերեցին: Սթյուարթին լցնում էր եպիսկոպոսի գավաթը: Բացօթյա ճաշը շատ հաճելի էր անցնում, Ռոբինի մարդիկ բարձարածայն քրքջում էին, և նույնիսկ եպիսկոպոսն էր ծիծաղում նրանց շարժումների վրա: Բայց երբ երեկոն իջավ և ատաբերեց շերիֆի անտառային արկածի պատմությունը:

— Շատ կուշտ ճաշեցի, ո՛վ իմ հյուրընկալ,— ասաց նա Ռոբինին:— Դե այժմ ասա, թե ի՞նչ եմ պարտք քեզ և թույլ տուր շարունակեմ իմ ճանապարհը:

— Իրոք, միլորդ, ձեր ընկերությունը ինձ այնքան դուր եկավ, որ չգիտեմ ինչ ուզեմ այս ճաշի համար,— պատասխանեց Ռոբինը:

— Ինձ տվեք ձեր քսակը, միլորդ,— ասաց Լիթլ Ջոնը:— Մի տեսնենք, թե ի՞նչ կա այնտեղ:

Եպիսկոպոսը վախեցավ: Հենց այդ առավոտն էր ստացել սըր Ռիչարդի պարտքը և տուն էր տանում:

— Միայն մի քանի արծաթե դրամ ունեմ,— ասաց նա:— Իսկ քսակի ոսկին եկեղեցու համար է: Ես վստահ եմ, իմ լավ բարեկամներ, որ ձեռք չեք տա այդ քսակին:

Մինչ այդ Լիթլ Ջոնը արդեն վերցրել էր եպիսկոպոսի քսակը: Չորս հարյուր ոսկեդրամ կար այնտեղ: Դա նույն այն գումարն էր, որը Ռոբինն այդ օրը տվել էր սըր Ռիչարդին:

— Ա՛հ,— ասաց Ռոբինը:— Ես մտաբերեցի իմ մի ընկերոջը, որի պարտքը եկեղեցուն ուղիղ այսքան է: Այնպես որ, մենք քեզանից ոչինչ չենք վերցնի: Միայն դու մեզ կտաս այս գումարը՝ իմ ընկերոջը օգնած լինելու համար:

— Ո՛չ, ո չ,— առարկեց եպիսկոպոսը,— դա արդար չէ: Այն եղջերուն, որ կերանք մի՞թե արքայինը չէր: Ես աղքատ մարդ եմ:

— Իհա՛րկե, աղքատ ես,— պատասխանեց Ռոբինը բարկացած:— Դու Հերֆորդի եպիսկոպոսը չե՞ս: Եվ մի՞թե ամբողջ շրջանը չի տրտնջում քո բռնություններից: Ո՛վ չգիտե քո դաժանության մասին դեպի ընչազուրկ մարդիկ: Դո՛ւ, որ ճնշելու փոխարեն պարտավոր ես օգնել նրանց: Էլ չեմ ասում, թե ինչպես հալածեցիր ինձ ու իմ հորը:

Բայց ես վերցնում եմ այս դրամը նրանց սիրույն, որոնց դու կեղեքել ու ճնշել ես և քեզանից շատ ավելի լավ կօգտագործեմ այն: Այսքանը. իսկ այժմ արի երգենք կամ պարենք: Նվագիր տավիդդ, Ալլան: Կարծես մեր հարգարժան հյուրը թախծում է: Ի՞նչ կկամենաք, միլորդ, ե՞րգ թե պար:

— Ոչ մի բան,— ասաց եպիսկոպոսը:

— Այդ դեպքում մենք կօգնենք ձեզ,— ասաց Լիթլ Ջոնը և երկու կողմերից բռնեցին գեր եկեղեցականին ու սկսեցին պարել Ալլանի նվագած աշխույժ եղանակի տակ: Ամբողջ խումբը նստած քահ-քահ ծիծաղում էր նրանց վրա:

Վերջում Լիթլ Ջոնը բարձրացրեց նրան և տարավ դրեց ձիու վրա՝ երեսը պոչի կողմը ու կապեց: Ապա ձիերին առաջնորդեց գլխավոր ուղին և Նոթինգեմ ճանապարհեց եպիսկոպոսին ավելի մեռած, քան կենդանի:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ ԳՆԱՑ ՕՐԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ ՅԱՄԱՐՎՈՂ ՍԱՐԴԿԱՆՑ ՈՐՍԱԼՈՒ

Եպիսկոպոսին տված դասից հետո Ռոբինը կարծում էր, թե նա այնքան վախեցած կլինի, որ էլ երկար ժամանակ անտառում չի երևա: Հաջորդ առավոտ, օրենքից դուրս համարվող մարդը աներկյուղ զբոսնում էր գլխավոր ճանապարհի վրա: Բայց հազիվ էր մի կես մղոն անցել, երբ ճանապարհի ոլորապտույտում հանդիպեց եպիսկոպոսին:

Հերժորդի միլորդի հպարտությունը այնքան էր վիրավորվել, որ իսկույն մի մեծ զինված ջոկատ էր հավաքել շերիֆի մարդկանցից, կրկնապատկելով այն վարձատրությունը, որ տրվելու էր Ռոբին Յուդին բռնելու համար: Եվ այժմ խումբը գալիս էր նրա հետևից: Չարմանքի առաջին ցնցումից հետո եպիսկոպոսը բղավեց և ձին քշեց օրենքից դուրս համարվող մարդու վրա:

Ռոբինի համար արդեն շատ ուշ էր եկած ճանապարհով ետ դառնալը, բայց նա թռավ ճամփի մի կողմը, թաքնվեց թփերի հետևն ու հանկարծ անհետացավ:

— Նրա հետևի՛ց,— բղավեց եպիսկոպոսը:—Մի քանիսդ շրջապատեցեք անտառը, իսկ մնացածներս կհսկենք գլխավոր ճանապարհը և մյուս կողմից կկտրենք նրա ուղին:

Ճիշտն ասած, եպիսկոպոսը վախենում էր հեռու գնալ գլխավոր ճանապարհից:

Այդտեղից մոտ մի մղոն հեռու, անտառի մյուս եզրին մի փոքրիկ հյուղակ կար: Այրի կնոջ հյուղակն էր այդ: Ռոբինը հիշեց, որ դա է իր միակ փրկությունը:

Թափով վազելով և թփերի մեջ թաքնվելով, նա շուտով դուրս եկավ հյուղակի հետևում և փոքրիկ լուսամուտից ներս նայեց:

Այրի կինը, որը նստած էր, տազնապի մի ճիչ արձակեց:

— Չայն մի հանիր, ես եմ, Ռոբին Յուդը: Որտե՞ղ են որդիներդ:

— Զեզ հետ պետք է լինեն, Ռոբին: Դու ավելի լավ կհմանաս: Չէ՞ որ դու էիր նրանց փրկողը:

— Դե որ այդպես է, երախտահատույց եղիր,— ասաց Ռոբինը:— Եպիսկոպոսը իր մարդկանցով հետապնդում է ինձ:

— Ես բոլորին էլ կխաբեմ,— արագ պատասխան տվեց կինը:— Արի, Ռոբին, փոխենք մեր շորերը:

— Լա՛վ,— ասաց Ռոբինը,— լուսամուտից տուր քո գորշ շրջագգեստը և մյուս շորերդ, իսկ ես քեզ կտամ իմ կանաչ զգեստը, աղեղն ու նետերը:— Ռոբինը մի կողմից խոսում, մյուս կողմից արագ փոխանակում էր իր շորերը պառավ կնոջ հետ: Եվս մի պահ, և նա ոտից գլուխ ծայտված էր:

Շուտով եպիսկոպոսն ու նրա մարդիկ վազեցին եկան և, տեսնելով հյուղակն ու պառավ կնոջը, կանգ առան: Եպիսկոպոսը իր մարդկանցից մեկին հրամայեց հարցուփորձ անել կնոջը:

— Չերֆորդի միլորդ եպիսկոպոսն ուզում է իմանալ, թե դու տեսե՞լ ես Ռոբին Յուդին,— հարցրեց զինվորը:

— Ռոբինը իմ հյուղակումն է,— պատասխանեց պառավ կինը,— բայց նրան չեք կարող կենդանի բռնել:

— Դա մեր գործն է,— ասաց եպիսկոպոսը հաղթական: — Դե՛, մտքը հյուղակը,— հրամայեց նա իր մարդկանց:— Եթե կարիք լինի՝ այրեցեք այն: Բացի վարձատրությունից, ես մի լիքը քսակ ոսկեդրամ եմ տալու այն մարդուն, որ կենդանի բռնի անօրենին:

Մինչ այդ պառավ կինը դանդաղ քայլերով հեռու գնաց: Երբ խմբից բավականին հեռացել էր և հասել անտառի եզրին սկսեց արագ թափով վազել:

— Այն ո՞վ է,— բղավեց Լիթլ Ջոնը, որը թաքնված էր թփերում:

— Այսքան արագավազ կին կյանքումս տեսած չկամ: Վատ չի լինի, եթե մի նետ արձակեմ նրա գլխի վրայով և տեսնեմ, թե ով է այդ:

— Օ՛, սպասիր, սպասիր,— բղավեց կինը:— Այդ ես եմ Ռոբին Յուդը: Կանչիր յոմեններին և շտապիր ինձ մոտ: Մի անգամ էլ պիտի հանդիպենք Չերֆորդի միլորդին: Լիթլ Ջոնը դեռ ծիծաղում էր Ռոբինի շորերի վրա, երբ նա փչեց փողը:

— Դե, տիկին Ռոբին,— ասաց նա ծիծաղելով,— առաջնորդիր մեզ, մենք կհետևենք քեզ:

Մինչ այդ, եպիսկոպոսը, որը այրի կնոջ հյուղակի հետևամասումն էր գտնվում, կատաղել էր: Սա չէր ուզում այրել տունը, իսկ նրա մարդիկ չէին կարողանում բացել նրա ամուր դուռը:

— Ջարդեցեք դուռը, ջարդեցե՛ք,— գոռում էր նա,— տեսնեմ, թե ո՞վ առաջինը կբռնի Ռոբին Յուդ կոչվող դավաճանին:

Ի վերջո դուռը բաց արեցին, բայց հիմա էլ վախենում էին Ռոբինի դիպուկ նետերից և սիրտ չէին անում ներս մտնել:

— Ահա նա,— բղավեց զինվորներից մեկը:— Ես տեսնում եմ նրան անկյունում:  
Սպանեցեք:

— Ո՛չ,— ասաց եպիսկոպոսը,— եթե կարող եք կենդանի բռնեցեք: Ամենամեծ  
կախաղանը նրա համար ենք կանգնեցնելու:

Բայց եպիսկոպոսի ուրախությունը կարճատև եղավ: Ճանապարհով գալիս էր  
ցնցոտիներ հագած պառավ կինը, որը շատ զայրացավ տեսնելով, որ հյուղակի դուռը  
ջարդել էին:

Եպիսկոպոսը, լսելով նրա եռանդուն բողոքները, բղավեց.

— Դրան էլ բռնեցեք: Դրան էլ ենք քաղաք տանելու՝ Ռոբին Յուդի հետ միասին:

— Շատ ես շտապում, միլորդ,— պատասխանեց պառավը և ծափ զարկեց:

Այդ ազդանշանի վրա հյուղակի բոլոր կողմերից բազմաթիվ մարդիկ դուրս թռան՝  
աղեղները ձեռներին: Եպիսկոպոսը տեսավ, որ ծուղակն էին ընկել, բայց որոշեց  
կռվի բռնվել:

— Ավագակներ, եթե ձեզանից որևէ մեկը մոտենա ինձ, իմ մարդկանց կիրամայեմ,  
որ սպանեն ձեր գլխավորին, Ռոբին Յուդին,— բղավեց եպիսկոպոսը:— Այստեղ է նա,  
իմ մարդկանց հսկողության տակ:

— Յետաքրքիր է տեսնել, թե դա ի՞նչ Ռոբին Յուդ է,— լսվեց մի հստակ ձայն և  
օրենքից դուրս համարվող մարդկանց գլխավորի վրայից ցած ընկավ այրի կնոջ  
շրջագգեստը և նա, ժպիտը դեմքին, առաջ եկավ:

— Ես այստեղ եմ, միլորդ, թույլ տուր մի տեսնեմ, թե այդ ո՞վ է քո հսկողության տակ:

Յետո պառավ այրին Ռոբինի շորերով դուրս եկավ հյուղակից: Եվ Ռոբինը հրամայեց  
եպիսկոպոսին, որ կնոջը տա ոսկու այն քսակը, որ նա նախատեսել էր իր գլխի  
համար:

— Նախ ես ուզում եմ քեզ կախաղանի վրա տեսնել,— գոռաց կատաղած  
եպիսկոպոսը:— Բռնեցե՛ք նրան, ի՛մ մարդիկ:

— Դեռ սպասի՛ր,— գոչեց Ռոբինը,— դեռ կտեսնես, թե ոնց ես մեր ձեռքն ընկնում:

Եվ արձակեց մի անակնկալ նետ, որը սուրաց եպիսկոպոսի գլխի վրայով ու թոցրեց  
նրա գլխարկը՝ ճաղատ գլուխը մերկացնելով:

— Օգնեցե՛ք, մարդասպանություն և,— գոռաց եպիսկոպոսը: Նրա դեմքը իր  
ճակատի գույնն էր ստացել:

— Էլ նետ չարձակեք, առե՛ք ձեր ոսկու քսակը:

Ու առանց որևէ խոսքի եպիսկոպոսը ուզեց ետ դառնալ: Նրա մարդիկ, որ մնացել  
էին առանց առաջնորդի, նահանջեցին նրա հետևից շրջապատված յոմենների  
պատրաստ պահած նետ ու աղեղներով:

Այսպես վերջացավ օրենքից դուրս համարվող մարդկանց այն որսը, որ Յերֆորդի  
եպիսկոպոսն էր ձեռնարկել Շերվուդ անտառում:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅԻՆԳԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇԵՐԻՖԸ ՄԻ ԱՅԼ ՄԱՐՏԱԽԱՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ

Շերիֆը այնքան էր մտահոգվել Ռոբին Յուդի հարածուն հզորությամբ, որ նա մի շատ անհեթեթ միջոցի դիմեց: Գնաց Լոնդոն իր հոգսը արքային պատմելու և էլի զորք վերցնելու համար, որ բռնի օրենքից դուրս համարվող մարդկանց: Արքա Ռիչարդը խաչակրաց արշավանքից դեռ չէր վերադարձել, իսկ իշխան Ջոնը զայրույթով լսեց նրա պատմությունը ու ետ ուղարկեց նրան՝ առանց որևէ օգնության:

Եվ այսպես շերիֆը վերադարձավ մտահոգված ավելի, քան երբևէ: Ճանապարհին նա մի նոր միտք հղացավ:

Վերադարձին նրան դուստրը դիմավորեց: Զորը լսելուց հետո նա պատմեց իր նոր ծրագրի մասին:

— Մենք կարող ենք էլի մի կամավոր մարտախաղ կազմակերպել և արքա Զարրիի նման ընդհանուր ներում շնորհել: Մի գուցե այդ մրցումը հրապուրի Ռոբին Յուդին ու նրա մարդկանց, որից հետո...

Շերիֆին շատ դուր եկավ աղջկա ծրագիրը: Առանց ժամանակ կորցնելու, նույն աշնանը տոնավաճառի ժամանակ, մի մարտախաղ հայտարարեց, որին բոլոր ցանկացողները կարող էին մասնակցել: Առաջին մրցանակը ոսկեգլուխ մի նետ էր: Զմուտ նետածիգների համար շատ ուրիշ հարուստ պարգևներ էլ կային:

Լուրը շատ շուտով հասավ անտառ՝ Ռոբին Յուդին:

—Դե՛, տղերք, պատրաստվեցեք,— ասաց նա,— գնալու ենք տոնավաճառ և փորձելու ենք մեր վարպետությունը:

Ապա Ռոբինի մարդկանցից մեկը ասաց, որ նրան լավ հայտնի է այդ մրցման նպատակը: Դա մի ծուղակ է՝ Ռոբինի մարդկանց համար:

Բայց Ռոբին Յուդին դուր չեկան նրա խոսքերը: Նա ասաց, որ ինքը չի վախենում ծուղակից, այլ ուզում է մասնակցել մարտախաղին և փորձել իր վարպետությունը:

Ապա Լիթլ Ջոնը ասաց, թե իրենք ինչպես կարող են ծպտվել:

— Կթողնենք մեր լինքուն կանաչ զգեստները,— ասաց նա,— և գույն-գույն շորեր կհագնենք. մեկը՝ սպիտակ, մյուսը՝ կարմիր, մի ուրիշը՝ դեղին, մի չորրորդը՝ կապույտ: Եվ այսպիսով նրանք մեզ չեն ճանաչի:

Այդ ծրագիրը բոլորին էլ դուր եկավ: Առանց ժամանակ կորցնելու նրանք սկսեցին պատրաստություն տեսնել: Օրիորդ Մարիանն ու տիկին Դեյլը, ճգնավոր Թաքի օգնությամբ, երփներանգ զգեստներ պատրաստեցին: Եվ երբ տոնավաճառի օրը նրանք հագան այդ շորերը, մյուս գյուղացիներից չէին տարբերվում:

Նրանք դուրս եկան մեծ ճանապարհը ուրիշ շատ խիզախ մարդկանց հետ միասին և ուղղվեցին դեպի Նոթինգեմի լայնաբաց դարպասները:

Ամբողջ խումբը հրճվանքով անցավ դարպասների միջով: Ռոբինի մարդիկ մյուսների պես բարձրաձայն քրքջում ու զրուցում էին: Իսկ շերիֆի մարդիկ, մոտերքը կանգնած, փնտրում էին անտառապահի նմանվող մարդկանց, բայց ապարդյուն:

Մուսետիկը հայտարարեց մրցման կանոնները և, շատ չանցած, նետաձգությունը սկսվեց: Ռոբինն ընտրել էր իր մարդկանցից հինգին՝ մարտախաղին մասնակցելու համար: Մյուսները խառնվել էին ամբոխի հետ, կամ հսկում էին դարպասները: Այդ հինգը Լիթ Ջոնը, Ուիլլ Սքարլեթը, Ուիլլ Սթյուարթին, Մաչը և Ալլան-Է-Դեյլն էին:

Ռոբինի մարդիկ հիանալի դիպցրին թիրախին: Մյուս մասնակիցները նույնպես ցույց տվեցին իրենց վարպետությունը, հատկապես Գիլբերթը, որը մասնակիցների թվումն էր և մյուսներից ավելի հաջող դիպցրեց նշանին: Վերջում մնացին Գիլբերթն ու Ռոբինը՝ ոսկեգլուխ նետի մրցանակի համար: Բայց Գիլբերթը տարվեց:

Ամբողջ մրցման ընթացքում Ռոբինը ոչ մի բառ չփոխանակեց իր մարդկանց հետ, ասես նրանք բոլորովին անձանոթ լինեին: Բայց նման հոյակապ նետաձգություն չէր կարող չմատնել մասնակիցներին:

Շերիֆը կռահեց, որ հաղթանակ տանողը պետք է որ Ռոբին Յուզը լինի և հրամայեց շրջապատել խումբը: Բայց Ռոբինի մարդիկ էլ նրա միտքը կռահեցին:

Շերիֆը առաջարկեց ամբոխին մի օղակ կազմել և ապա մրցանակը նվիրել հաղթողին: Երբ Ռոբինը ստացավ մրցանակը ու շուռ եկավ, շերիֆը բռնեց նրա օձիքից և կանչեց իր մարդկանց, որ բանտարկեն նրան:

Յենց այդ պահին շերիֆը մի այնպիսի հարված ստացավ գլխին, որ իսկույն բաց թողեց Ռոբինին: Շուռ եկավ ու տեսավ, որ խփողը Լիթ Ջոնն էր:

— Ա՛հ, ավազակ Գրինլիֆ, վերջապես ընկար ձեռքս,— ասաց նա, Լիթ Ջոնի վրա խուժելով:

Բայց հենց այդ պահին մի հարված էլ ստացավ:

— Սա էլ քո նախկին ծառաներից մեկ ուրիշն է,— ասաց մի ծանոթ ձայն: Դա Մաչն էր՝ ջրաղացպանի որդին:

Մինչ այդ կռիվը ծավալվել էր, սակայն շերիֆի մարդիկ չկարողացան հարձակվել օրենքից դուրս համարվածների վրա, քանի որ ամբոխի մեջ չէին կարող տարբերել նրան: Իսկ Ռոբինի մարդիկ հետևի կողմից հարձակվեցին զինվորների վրա և մի կատաղի ճակատամարտ սկսվեց:

Յետո Ռոբինի եղջերափողի զիլ ձայնը նահանջի նշան տվեց: Մերձակա դարպասի պահապաններից երկուսը փորձեցին փակել այն, բայց նրանց նետահարեցին և անտառը դիմեցին: Իրենց անվրեպ նետերի շնորհիվ նրանք կարողացան որոշ հեռավորություն պաշտպանել՝ իրենց և հարձակվող զինվորների միջև:

Բայց այդ օրը կռիվը հեշտ չանցավ, զինվորները լավ էին կռվում և կրկակոխ հետապնդում էին Ռոբինի մարդկանց: Շատերը վիրավորվեցին: Շերիֆի մարդկանցից հինգը սպանվեցին, մյուսները՝ վիրավորվողին: Իսկ Ռոբինի մարդկանցից չորսը ծանր վերքեր ստացան:

Ապա Լիթ Ջոնը, որը մենամարտում էր իր գլխավորի կողքին, հանկարծ առաջ ընկավ: Մի նետ խոցեց նրա ծունկը: Ռոբինը վերցրեց հսկային և մոտ մի մղոն ճանապարհ տարավ նրան: Ռոբինին փոխարինեց մի այլ մարդ, որ հսկային իր մեջքին առավ: Շուտով հասան անտառի ապաստարանը:

Շերիֆի մարդիկ էլ չհետևեցին նրանց: Իսկ Ռոբինի մարդիկ Լիթ Ջոնին և մյուս չորս վիրավորներին շտապով տարան անտառով՝ ճգնավոր Թաքի մեկուսարանը, ուր նրանց վերքերը կապեցին: Ամենախոր վերքը Լիթ Ջոնինն էր, բայց ասացին, որ երկու-երեք օրից կարող է ոտքի ելնել:

Երեկոյան տեսան, որ Ուիլլ Սթյուարթին ու օրիորդ Մարիանը չկամ: Երկյուղը պատեց Ռոբինին: Նա գիտեր, որ Մարիանը տոնավաճառ է գնացել: Նրա բացակայությունը վտանգի նշան էր, և Ռոբինը վախենում էր, որ Ուիլլ Սթյուարթին մի բան կլինի պատահած: Երևի շերիֆը բռնել էր Ուիլլին և միտք ուներ անհապաղ կախադանբարձրացնել նրան:

Բոլորը լրջորեն մտահոգված էին, բայց ոչինչ չասացին: Նրանք գիտեին, որ Ուիլլին փրկելու համար նորից պետք էր մենամարտել:

Մի քանի օր անց, երեկոյան, երբ շերիֆը, իր կինն ու աղջիկը ճաշի էին նստած, շերիֆն ասաց, որ Ուիլլ Սթյուարթին, որը իրոք ընկել էր նրա ձեռքը, պիտի կախեն:

— Նրան պիտի կախեն և շատ բարձր,— գոչեց նա,— և ոչ ոք օգնության չի հասնի նրան: Տեսնե՞ք, թե ով է այստեղի տերը: Ափսոսում եմ միայն, որ ոսկեգագաթ նետը դրանց տվեցինք:

Շերիֆն այսպես խոսում էր, երբ մեկ էլ հանկարծ պատուհանից մի նետ սուրաց և ընկավ նրա ափսեի վրա: Շերիֆը սարսափահար վեր թռավ:

Դա ոսկեգագաթ նետն էր, որին մի երկտող էր կապած: Այնտեղ գրված էր. «Սա այն մարդուց է, որը ստախոսներից մրցանակ չի վերցնում և որն այլևս ձեզ չի գթա: Ռ. Զ.»:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՓՐԿԵՑԻՆ ՈՒԻԼԼ ՍԹՅՈՒԹԼԻՒՆ

Պայծառ և արևոտ օր էր: Այդ օրը պետք է կախեին Ուիլլ Սթյուարթին: Շերիֆը հրաման էր տվել այդ օրը դարպասները փակ պահել:

Լույսը հազիվ էր բացվել, երբ Ռոբինը, տեսնելով, որ դարպասները փակ են, իր մարդկանց տեղափոխեց անտառի եզրը, որտեղից կարող էր հսկել արևելյան դարպաս տանող ճանապարհը: Ինքը վառվռուն ալ շորեր էր հագել, իսկ նրա մարդիկ՝ լինքոլն կանաչ: Բոլորը զինված էին սրերով և յուրաքանչյուրն ուներ իր աղեղը, իսկ կողքից կախած էր նոր նետերով լի կապարճը: Կանաչ շորերի վրայից, ճգնավորի նման, քղամիդներ էին հագել:

Չանկարծ մի ուխտավոր երևաց ճանապարհին: Այրի կնոջ որդիներից մեկին Սթաուլթ Ուիլլին ուղարկեցին, որ ուխտավորից տեղեկանա Նոթինգեմ քաղաքի դրության մասին:

Նա մոտեցավ ուխտավորին և ասաց,

— Ներողություն, կարո՞ղ եք մեզ ասել, թե ինչ նորություն կա Նոթինգեմում: Ճի՞շտ է, որ ուզում են այսօր օրենքից դուրս համարվող մի մարդու կախաղան բարձրացնել:

— Այո՛,— պատասխանեց ուղևորը տխուր-տրտում: — Ճիշտ է: Ես անցա հենց այն տեղով, ուր կախաղան էին կանգնեցրել: Շերիֆի ապարանքի մոտ էր: Օրենքից դուրս համարվող մի մարդու, Ուիլլ Սթյուարթի անունով, կեսօրին կախելու են: Չեմ ուզում դրա ականատեսը լինել: Եվ հեռացա քաղաքից:

Ուխտավորը ցածր ձայնով էր խոսում: Զանի որ վեղարը դեմքի մեծ մասը ծածկում էր, Սթաուլթ Ուիլլը չկարողացավ որոշել, թե ով է նա: Անծանոթը երիտասարդ էր թվում:

— Հապա ո՞վ պիտի խոստովանեցնի խեղճ մարդուն, եթե դու հեռացել ես քաղաքից,— հարցրեց Ուիլլը:

— Կարծում եք, որ ե՞ս պետք է անեմ այդ:

— Իհարկե, հապա էլ ո՞վ պետք է անի:

— Վայ թե էլ չկարողանամ վերադառնալ քաղաք, — ասաց ուխտավորը:— Այս առավոտ դռները փակ են:

— Եկեք ինձ հետ,— ասաց Սթաուլթ Ուիլլը,— և իմ տերը կօգնի ձեզ դարպասներով անցնելու:

Ուխտավորին առաջնորդեցին Ռոբին Հուդի մոտ ու նա պատմեց ինչ որ գիտեր քաղաքի դրության մասին: Նա իր խոսքն այսպես ավարտեց:

— Ինձ թվում է, որ մենք չպետք է փորձենք մտնել այս դարպասով, այնտեղ հսկողությունը ուժեղ է: Բայց արևմտյան դարպասից հարձակում չեն սպասում:

— Շնորհակալ եմ, ազնիվ ուխտավոր,— ասաց Ռոբինը:— Դուք ինձ լավ խորհուրդ տվեցիք և մենք կգնանք արևմտյան դարպասը:

Եվ այսպես, մարդիկ անխոս, բայց արագ քայլեցին դեպի արևմտյան դարպասը: Հետո նրանցից մեկը առաջ անցավ և շտապով մոտեցավ դարպասին: Մի ակնթարթում նա հետևի կողմից հարձակվեց դարպասապահի վրա, կապեց նրան և իլեց բանալիները:

Եվս մի պահ, և դարպասը բացվեց: Կամուրջը գցեցին: Խումբն այնքան արագ խուժեց քաղաք, որ ոչ ոք չիմացավ նրանց մուտքը:

Հենց այդ պահին բացվեցին նաև բանտի դռները և դատապարտյալ Ուիլլ Սթյուարթին դուրս եկավ: Նա նայեց աջ ու ձախ, բայց իր խմբից ոչ ոքի չտեսավ:

Ուիլլի ձեռքերը կապված էին մեջքին: Նա քայլեց զինվորների շարքերի միջով: Շերիֆն ու եպիսկոպոսը ձիերը հեծած հետևում էին թափորին:

Ի վերջո, կալանավորը հասավ կառափնարան և շերիֆը նշան արեց դահճին:

Բայց այդ պահին մի երիտասարդ ուխտավոր առաջ անցավ և ասաց.

— Թույլ տվեք գոնե մահից առաջ խոստովանեցնել նրան:

— Ո՛չ,— գոռաց շերիֆը,— թող շահն մահով մեռնի:

— Դուք, միլորդ Եպիսկոպոս, չեք կարող չմիջամտել դրան,— ասաց ուխտավորը:

Եպիսկոպոսն էլ, շերիֆի նման, ուզում էր, որ իսկույն կախեին կալանավորին, բայց վախենում էր ամբոխից: Եվ նա ինչ-որ բան փսփսաց շերիֆի ականջին, որը նշան արեց ուխտավորին :

— Դե շո՛ւտ արա, խոստովանեցրո՛ւ,— ասաց շերիֆը բարկացած:

Ապա, դառնալով զինվորին, հրամայեց.

—Աչալուրջ հետևեցեք ուխտավորին, գուցե ապօրեն մարդկանց ընկերն է: Բայց ուխտավորը ուշք չդարձրեց շերիֆի վերջին խոսքերին: Նա սկսեց ցածր ձայնով խոսել դատապարտյալի հետ:

Հանկարծ մի մարդ, ամբոխի և զինվորների միջից ճանապարհը բացելով, եկավ կախադանի մոտ:

— Ես ինդրում եմ, Ուիլլ, մեռնելուց առաջ հրաժեշտ տուր ընկերներիդ,— հնչեց Մաչի՝ ջրաղացպանի որդու, ծանոթ ձայնը:

Այդ խոսքերի վրա ուխտավորն անսպասելիորեն ետ քաշվեց: Շերիֆն իսկույն ճանաչեց խոսողին:

— Բռնեցե՛ք դրան,— գոռաց նա:— Դա խմբի մարդկանցից է, այն խոհարարն է, որ իմ արծաթե ափսեն գողացավ: Այսօր երկու հոգու ենք կախելու:

— Շատ ես շտապում, ով բարի շերիֆ,— պատասխանեց Մաչը:— Նախ բռնիր և հետո կախիր: Բայց մինչ այդ ես ուզում եմ զբաղեցնել իմ ընկերոջը:

Ու իր որսորդական դանակով Մաչը կտրեց պարանը և Սթյուլթին իսկույն կախադանից ցած թռավ:

— Դավաճանություն. բռնեցե՛ք ավազակներին,— գոռաց շերիֆը զայրույթից կարմրատակած:

Այս խոսքի վրա նա դուրս քաշեց իր սուրը և ուզեց վրա բերել Մաչի գլխին: Բայց նրա նախկին խոհարարը մի ակնթարթում անհետացավ ձիու փորի տակ և դուրս եկավ մյուս կողմից, իսկ շերիֆի սուրը ապարոյուն ճոճվեց օդում:

— Ո՛չ, սըր շերիֆ,— բղավեց նա:— Ինձ քո սուրը հարկավոր է այն ընկերոջ համար, որին ես զբաղեցրի:

Եվ նա իսկույն խլեց շերիֆի սուրը:

— Վերցրու, Սթյուլթի,— ասաց նա,— շերիֆը քեզ իր սեփական սուրն է տալիս: Մեջք-մեջքի կանգնիր ինձ հետ և մի հևար կանենք:

Մինչ այդ զինվորները սկսել էին ճակատամարտը: Եղջերափողի մի զիլ ձայն լսվեց: Դա այն ձայնն էր, որ ահաբեկում էր զինվորներին: Նետերն սկսեցին սուրալ օդում և Ռոբինն ու նրա մարդիկ դեն գցեցին իրենց քրամիդները, խուժեցին առաջ, բղավելով.

— Լոքսլեցի՛ն, լոքսլեցի՛ն, փրկու՛թյո՛ւն, փրկու՛թյո՛ւն:

Կատաղի ճակատամարտ սկսվեց: Ականատեսներից շատերը, որոնք վաղուց ատում էին շերիֆին և համակրում Ռոբինի մարդկանց, նույնպես մասնակցեցին կռվին՝ անցնելով Ռոբինի կողմը: Շերիֆի մարդիկ ընդհուպ շրջապատել էին դատապարտյալին, Մաչին և ուխտավորին: Անտառապահները մեծ դժվարությամբ ճեղքեցին այդ օղակը: Ռոբինը ճիշտ ժամանակին վրա հասավ ու փրկեց ուխտավորին և Ուիլլ Սթյուարթին՝ երկու զինավառ մարդկանց հարվածեց:

— Աստված պահի քեզ, տեր իմ,— բացականչեց Ուիլլ Սթյուարթին ցնծալով:— Հույս չունեի, որ մեկ էլ կտեսնեմ ձեզ:

— Փրկու՛թյո՛ւն,— կրկին գոչեցին Ռոբինի մարդիկ և զինվորները սկսեցին նահանջել: Բայց դեռ հաղթանակ չէին տարել, որովհետև զինվորները նահանջում էին խիտ շարքերով արևելյան դարպասի ուղղությամբ, նպատակ ունենալով Ռոբինի մարդկանց ծուղակի մեջ գցել քաղաքի պատերի տակ: Բայց Ռոբինի մարդիկ մեկ էլ հանկարծ շուռ եկան և դարձան դեպի արևմտյան դարպասը, որը խմբի անդամներից մեկի հսկողության տակ էր: Եվ նրանք անցան դարպասը՝ կամուրջի վրայով:

Չինվորները այնքան էին մոտեցել, որ Ռոբինի մարդիկ ժամանակ էլ չունեցան նորից փակելու դարպասը կամ բարձրացնելու կամուրջը:

Քաղաքի այս մասից անտառ տանող ճանապարհը գրեթե իսպառ ծառազուրկ էր: Ռոբինի մարդիկ հիմա էլ սկսեցին դեպի անտառ նահանջել՝ մի բարձրադիր բլրաշարքի վրայով: Ժամանակ առ ժամանակ ետ էին դառնում ու նետ արձակում: Նրանց հետ էր Սթյուարթին, որ երկու մարդու եռանդով էր կռվում: Նրանց հետ էր նաև փոքրամարմին ուխտավորը, որ քայլում էր Ռոբինի կողքից:

Ռոբինը փողը տարավ շրթներին, բայց այդ պահին թշնամու նետը խոցեց ձեռքը: Ուխտավորը մի ճիչ արձակեց և թռավ առաջ: Շերիֆը, որը ձիով գալիս էր իր մարդկանց հետևից, նույնպես նկատեց վերքը:

— Հա՛, ուրեմն միառժամանակ էլ նետ չես արձակի, ապօրենների գլխավոր,— գոռաց նա:

— Պառկի՛ր,— բղավեց Ռոբինը,— մի նետ եմ պահել քեզ համար: Ա՛ռ քեզ:

Եվ նա վերցրեց նույն այն նետը, որը վիրավորել էր իրեն ու արձակեց շերիֆի վրա: Սա սոսկումնահար կուչ եկավ ձիու վրա, բայց և այնպես նետը վիրավորեց նրան:

Ուխտավորը մի փոքրիկ սպիտակ թաշկինակ հանեց և փորձեց կապել Ռոբինի վերքը: Երբ Ռոբինը նայեց ուխտավորի ձեռքին, իսկույն ետ գցեց նրա վեղարը:

— Մարիան, դու այստե՛ղ,— բացականչեց նա:

Եվ իրոք նա օրհորդ Մարիանն էր, որը օգնել էր Ուիլլին փրկելու գործին:

— Ես պետք է գալի, Ռոբին,— ասաց նա պարզ ու շիտակ,— ուրիշ ելք չկար:

Այդ պահին Ուիլլ Սքարլեթը միջամտեց:

— Ծուղական ենք ընկել,— ասաց նա, մատը մեկնելով դեպի այն բարձունքի գագաթը, ուր նրանք շտապում էին:

Բարձունքի գորշ ապարանքից, բազմաթիվ զինված մարդիկ դուրս եկան և աղմուկ-աղաղակով վազեցին ցած՝ Ռոբինի մարդկանց վրա:

— Օ՛հ, ծուղական ընկանք:— Գոչեց խեղճ Մարիանը:

— Բա՛ց եղիր սիրելիս,— ասաց Ռոբինը, իր մոտ քաշելով աղջկան:

Ապա ճանաչեց Լիցի սըր Ռիչարդը ասպետին:

— Փրկություն Է գալիս, փրկություն Է,— գոչեց նա:

Եվ շուտով ուրախության բացականչություններ լսվեցին: Մեծ ցնծությամբ Ռոբինի մարդիկ վազեցին բարձունքով՝ դիմավորելու իրենց նոր ընկերներին: Եվ շուտով ամբողջ խումբը ապաստան գտավ ապարանքում:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ԼԻՑԻ ՍԸՐ ՌԻՉԱՐԴԸ ՀԱՏՈՒՑԵՑ ԻՐ ՊԱՐՏԸ

— Բա՛ց արեք դարպասները,— գոռաց շերիֆը ապարանքի պարսպի վրա կանգնած պահակներին:— Ասում եմ, բա՛ց արեք, արքայի անունից:

— Էդ ո՞վ ես, որ եկել ես իմ հողը ու դեռ այդպես գոռում ես,— հարցրեց բարձր մի ձայն և սըր Ռիչարդը երևաց պարսպի վրա:

— Դու ինձ լա՛վ ես ճանաչում, դավաճա՛ն ասպետ,— պատասխանեց շերիֆը,— դե շո՛ւտ, հանձնիր ինձ արքայի թշնամուն, որին դու հովանավորել ես օրենքը խախտելով:

— Հանգի՛ստ, սըր,— ասաց ասպետը:— Իմ այսօրվա արարքի համար ես միայն արքային պատասխան կտամ:

— Ես էլ եմ ծառայում արքային,— ասաց շերիֆը կատաղած:— Եվ եթե իսկույն ևեթ չհանձնես ապօրեն մարդկանց, ապա իմացած եղիր, որ ես պիտի հարձակվեմ և այրեմ ապարանքը:

— Դե, հապա մի ցո՛ւյց տուր ինձ արքայի հրամանը,— ասաց սըր Ռիչարդը:

— Իմ խոսքն արդեն բավական Է. մի՞թե ես Նոթինգեմի շերիֆը չեմ:

— Եթե դու ես, ուրեմն պետք Է իմանաս, որ առանց արքայի հրամանի իմ հողերում դու ոչ մի իշխանություն չունես:

Ու սըր Ռիչարդը հեռացավ պարսպի վրայից: Շերիֆը ստիպված եղավ ետ դառնալ:

«Արքայի հրամանը,— խոսում էր նա ինքն իրեն վերադարձի ճանապարհին,— շուտով իմ ձեռքին կլինի, ոչ միայն այդ հրամանը, այլև սրա կալվածքները: Ռիչարդ արքան արդեն վերադարձել է խաչակրաց արշավանքներից»:

Մինչ այդ ասպետը վերադարձել էր Ռոբին Յուդի մոտ. երկու բարեկամները ջերմագին ողջունեցին իրար:

— Շատ ուրախ եմ քեզ տեսնելուս համար, անվեհեր Ռոբին,— ասաց ասպետը գրկելով նրան:— Ես կրկին հարուստ եմ: Միտք ունեի այսօր անտառ գալ պարտքդ հատուցելու:

— Եվ դու իրոք հատուցեցիր,— ուրախ-ուրախ պատասխանեց Ռոբինը:

— Ո՛չ, սա ոչինչ, սա մի չնչին ծառայություն էր,— ասաց ասպետը:— Ես դրամի մասին էի ասում:

— Դրամը վերադարձրել եմ,— ասաց Ռոբինը,— ինքը Յերֆորդի միլորդը տվեց այն:

— Ամբո՛ղջ գումարը,— հարցրեց ասպետը:

— Ամբո՛ղջը,— պատասխանեց Ռոբինը:

Սըր Ռիչարդը ժպտաց և էլ ոչինչ չխոսեց: Մինչև ճաշ Ռոբինը հանգստացավ: Այդ ընթացքում կապեցին նրա վիրավոր ձեռքը և մյուս յոմենների վերքերը:

Ճաշին սըր Ռիչարդը Ռոբինին ներկայացրեց կնոջն ու որդուն. լեդին շատ ու շատ ուրախացավ տեսնելով Մարիանին, որին ճանաչում էր դեռ մանուկ հասակից: Դեռատի աղջիկը շատ նման էր հորը:

Խնջուկքը մի բերկրալի երևույթ էր բոլորի համար: Երկու երկար սեղան էր դրված, որի շուրջը երկու հարյուր մարդ էր նստած: Սեղանակիցները կերան, խմեցին ու երգեցին: Դրանցից հարյուր քառասունը լինելու կանաչ ունեին հագած և Ռոբին Յուդին անվանում էին իրենց գլխավորը:

Գիշերը անտառաբնակներն ապարանքում անցկացրին և հաջորդ օրը հրաժեշտ տվեցին տիրոջը: Սըր Ռիչարդը Ռոբինին մի կողմ քաշեց և կրկին խնդրեց, որ վերցնի չորս հարյուր ոսկին:

— Պահիր քեզ մոտ, որովհետև դա քո սեփականությունն է,— ասաց Ռոբինը,— եպիսկոպոսը պարտքդ մարել է արդեն:

Սըր Ռիչարդը շնորհակալություն հայտնեց նրան և խնդրեց, որ Ռոբինն ու նրա մարդիկ այցելեն իր գինանոցը: Եվ նրանք գինանոցում հարյուր քառասուն ամրակուռ նետեր տեսան և նետերով լեցուն հարյուր քառասուն կապարճ: Սըր Ռիչարդի կինը առաջ անցավ ու յուրաքանչյուր յոմենի նվիրեց մեկական աղեղ ու կապարճ:

Հաջորդ շաբաթ շերիֆը Լոնդոն գնաց և ընդունելություն խնդրեց Ռիչարդ Առյուծասիրտ արքայից: Արքան հենց նոր էր վերադարձել խաչակրաց արշավանքից և զբաղված էր երկրի ներքին գործերով, այնպես որ շերիֆին հեշտությամբ ընդունեց:

Շերիֆը պատմեց Ռոբին Յուդի և նրա մարդկանց մասին, թե ինչպես ամիսներ շարունակ օրենքից դուրս համարվող մարդիկ որսում էին արքայական եղջերուներին, թե ինչպես Ռոբինը իր շուրջն էր հավաքել երկրի լավագույն նետածիգներին և, ի վերջո, ինչպես Լիցի սըր Ռիչարդ դավաճան ասպետը փրկել էր Ռոբինի խմբին և մերժել էր նրանց իր ձեռքը մատնելու պահանջը:

Արքան ուշադրությամբ լսեց մինչև վերջ և ասաց,

— Ինձ թվում է, թե ես լսել եմ նույն այդ Ռոբին Յուդի և Նրա մարդկանց մասին և տեսել նրանց հմտությունը: Այդ նրանք չէի՞ն, որ Ֆինլանդիայի դաշտի արքայական մարտախաղին մասնակցեցին:

— Այո՛, ձերո՞ գերազանցություն, արքայական ներման շնորհիվ:

Արքան իսկույն հարց տվեց.

— Իսկ նրանք ինչպե՞ս եկան Նոթինգեմի տոնավաճառը. գաղտնի՞:

— Այո՛, ձերո՞ գերազանցություն:

— Իսկ դուք արգելել էիք, որ նրանք գային:

— Ո՛չ, ձերո՞ գերազանցություն, այսինքն...

— Ճի՛շտն ասացեք:

— Իհարկե մենք ներում հայտարարեցինք,— վերսկսեց շերիֆը,— բայց Նրա համար, որ այդ մարդիկ...

— Այնպես որ դա պարզապես դավաճանություն էր,— ասաց արքան զայրացած:

Շերիֆը լռեց և արքան շարունակեց խոսքը.

— Խոստանում եմք, միլորդ շերիֆ, հետաքննել այդ գործը: Օրենքից դուրս համարվող այդ մարդիկ պետք է իմանան, որ Անգլիան մի արքա ունի և որ այդ արքան հարգո՛ւմ է օրենքը:

Սրանով վերջացավ ընդունելությունը և շերիֆը վերադարձավ Նոթինգեմ:

Երկու շաբաթ հետո արքան ասպետների մի փոքր խմբով քշեց իր ձին Լիցի ապարանքը: Սըր Ռիչարդին հայտնեցին, որ հեծյալների մի խումբ է մոտենում: Յեծելախումբը գլխավորող բարձրահասակ ասպետին տեսնելուն պես նա իսկույն ճանաչեց իր արքային: Լայն բաց արեց ապարանքի դարպասները և ընդառաջ գնաց արքային, որի հետ նա մեկնել էր խաչակրաց արշավանքների:

Արքան ձիուց իջավ, ողջունեց ասպետին, իբրև զինակից եղբոր, և թև-թևի տված նրանք ապարանք մտան:

Յանգիստ առնելուց և ընթրելուց հետո, արքան հարցրեց ասպետին:

— Այս ի՞նչ եմ լսում, ասում են քո ապարանքը օրենքից դուրս համարվող մարդկանց ապաստանն է դարձել:

Եվ Լիցի սըր Ռիչարդը պատմեց այն ամենը, ինչ գիտեր օրենքից դուրս հայտարարված մարդկանց մասին:

Արքային շատ դուր եկավ պատմությունը: Նա հարցեր տվեց Ռոբին Յուդի, Նրա հոր, Ռոբինի թշնամիների և Նրա ապրելակերպի մասին:

— Ես ինքս պետք է տեսնեմ այդ քաջին,— ասաց արքա Ռիչարդը:— Իմ փոքր խումբը կմնա այստեղ, իսկ ես մեն-մենակ կգնամ կանաչ անտառ նրան հանդիպելու համար:

Բայց այդ հանդիպումը հաջորդ պատմվածքի նյութն է լինելու:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՔԱ ՌԻՉԱՐԴԸ ԵԿԱՎ ՇԵՐՎՈՒԴ ԱՆՏԱՌԸ

Մի ցուրտ երեկո էր, անձրև էր մաղում: Ճգնավոր Թաքը թողեց իր ուրախ խումբը և քաշվեց իր փոքրիկ մենաստանը: Այնտեղ նա մի լավ խարույկ վառեց, փոխեց իր թրջված շորերը ու նստեց ընթրիքի: Այդ պահին դրսից մի ձայն լսվեց, որը խնդրում էր բաց անել դուռը:

— Այդ ո՞վ է, որ այսքան ուշ է գալիս,— ասաց ճգնավորը:— Չլիսի՞ թե կարծում եք, որ սա պանդոկ է: Գնա քո ճանապարհով, բարեկամ, գինիս սառչում է:

Ապա մի բարկացած ձայն լսվեց:

— Չե՛յ, բա՛ց արա, ասում եմ:

— Գնա՛ ճանապարհովդ, ասացի,— պատասխանեց ճգնավորը:— Ես ոչինչ չեմ կարող անել ձեզ համար: Այստեղից հեռու չէ Գեյմուելլը, եթե գիտեք ճանապարհը:

— Բայց ես ճանապարհը չգիտեմ: Դրսում անձրև է, իսկ քո տունը՝ չոր: Դե բա՛ց արա, հերիք է խոսես:

Ի վերջո ճգնավոր Թաքը բաց արեց դուռը և դուրս եկավ ճամփորդին տեսնելու:

Նրա առաջ կանգնած էր մի բարձրահասակ ասպետ օղագրահը հագին և սաղավարտը գլխին: Ձին կանգնած էր կողքին:

— Ընթրելու բան ունե՞ք, եղբայր,— հարցրեց ասպետը: — Այս գիշերվա համար ես ձեզանից պետք է մի տեղ խնդրեմ և քնելուց առաջ մի քիչ ուտելիք:

— Նույնիսկ ձեր ձիու համար տեղ չունեմ, սըր ասպետ, իսկ ուտելու միայն հաց ու ջուր ունեմ:

— Ես զգում եմ, որ դրանից ավելի լավ ուտելիք ունեք և ես գիշերը պետք է ձեզ հետ անցկացնեմ: Ձիս կապեցեք մի ապահով տեղում:

Եվ, առանց ուրիշ խոսք ասելու, նա համարձակ մտավ Թաքի մենաստանը:

— Նստեցեք, սըր ասպետ,— ասաց Թաքը,— իսկ ես գնամ ձեր ձին կապեմ տան հետնամասում ու մի քիչ կեր ճարեմ նրա համար: Այս գիշեր իմ մահճակալի և ուտելիքի կեսը ձերն է, իսկ հետո մենք կտեսնենք, թե մեզանից ո՞վ է ավելի լավ մարդ և թե ո՞վ պիտի հրամաններ տա:

— Ուրախությամբ,— ասաց ասպետը ծիծաղելով:— Ես կարող եմ հատուցել ձեզ հարվածներով կամ ոսկով, որը որ ցանկանաք:

Ճգնավորը շուտով վերադարձավ և մի փոքր սեղան զցեց խարույկի մոտ:

— Այժմ, սըր ասպետ, մի կողմ դրեք ձեր սուրն ու սաղավարտը ու օգնեցեք սեղան զգելու, որովհետև ես շատ քաղցած եմ:

Ասպետը հնազանդվեց և երբ նա հանեց սաղավարտը, Թաքը տեսավ, որ նա կապույտ աչքերով և գեղեցիկ մազերով մի գեղադեմ տղամարդ է:

Այս ճգնաժամին ու հյուրը վրա ընկան գինու և ուտելիքին, իսկ ընթրիքի ժամանակ ասպետը շատ հետաքրքիր բաներ պատմեց: Պատմեց, թե ինչպես էր գնացել խաչակրաց արշավանքի, գերի ընկել և հաճախ վտանգի տակ դրել կյանքը: Բայց այդ բոլորի մասին նա այժմ շատ հանգիստ էր պատմում: Շուտով նրանք սկսեցին խոսել և ծիծաղել այնպես բարձրաձայն, որ կարծես մտերմագույն ընկերներ լինեին: Եվ այսպես ժամանակը արագ անցավ: Երկուսն էլ միասին պառկեցին քնելու՝ սեղանի երկու կողմերին:

Առավոտյան, նախաճաշից հետո, ճգնաժամի Թաքը ասաց ասպետին.

— Ես կարիք չունեմ ձեր ոսկուն, որի մասին գիշերը խոսեցիք, բայց դրա փոխարեն կօգնեմ, որ ճանապարհը գտնեք:

— Դե որ այդպես է, ասացեք, թե ինչպես կարող եմ գտնել Ռոբին Յուդին՝ օրենքից դուրս համարվող մարդուն: Նրան արքայի պատգամն եմ բերել,— ասաց ասպետը:— Երեկ ամբողջ օրը ման եկա նրան, բայց չգտա:

Ճգնաժամի Թաքը ասաց, որ նա բարեկամություն չի անում Ռոբինի խիզախ մարդկանց հետ:

— Ես ուզում եմ առանձին խոսել նրա հետ,— ասաց ասպետը:

— Եթե այդ է ամբողջը, գուցե ես կառաջնորդեմ ձեզ նրա թաքստոցը,— ասաց Թաքը:— Քանի որ ես այս անտառումն եմ ապրում՝ լսել եմ օրենքից դուրս համարվող մարդկանց մասին:

— Ես քեզ հետ կգնամ, եղբայր իմ,— ասաց ասպետը:

Եվ նրանք անխոս իրենց քայլերն ուղղեցին անտառ: Ասպետը հեծել էր իր ձին, իսկ Թաքը քայլում էր կողքից:

Շատ էին գնացել, երբ իրենց դիմացի թփերը հանկարծ բացվեցին և սևաթույր մազերով մի բարձրահասակ տղամարդ դուրս եկավ ճանապարհին ու ձեռքը մեկնեց ասպետի սանձին:

Ռոբին Յուդին էր այդ մարդը: Նա տեսել էր ճգնաժամի Թաքին ճանապարհին ու հասկացել էր նրա միտքը: Սակայն Թաքը ցույց չտվեց, որ ինքը ճանաչում է Ռոբինին:

— Կանգնեցե՛ք,— բղավեց Ռոբինը:

— Իսկ ո՞վ է ինձ հրամայում կանգնել,— հարցրեց ասպետը հանգիստ:

Ռոբինը ծափ տվեց և իսկույն թփերի հետևից տասը ուրիշ հաղթանդամ մարդիկ դուրս եկան ու կանգնեցին Ռոբինի կողքին:

— Մենք անտառի յոմեններից ենք, սըր ասպետ,— ասաց Ռոբինը:— Մեր լորդերի դաժանության հետևանքով, ստիպված ենք ապրել կղերականների և ձեզ նման խիզախ ասպետների օգնությամբ: Ուստի խնդրում ենք ձեր փողից մի քիչ տալ մեզ:

— Ես մի խեղճ ճգնավոր եմ, ո՛վ բարի սըր,— ասաց ճգնավոր Թաքը:

Ասպետը կրկին խոսեց:

— Բայց մենք արքայի սուրհանդակներից ենք,— ասաց նա.— ինքը նորին գերագանցությունը մոտակայքումն է և ուզում է խոսել Ռոբինի հետ:

— Աստված պահի արքային,— ասաց Ռոբինը:— Ես եմ Ռոբին Յուդը՝ արքայի միակ հավատարիմ հպատակը: Ես միայն նրա մի քանի եղջերուներն եմ որսացել, որովհետև քաղցած էի: Իմ կռիվը հոգևորականների և հողատերերի դեմ է, որոնք ճնշում են աղքատներին: Սակայն ես ուրախ եմ,— շարունակեց նա,— որ հանդիպել եմ ձեզ: Վերջում, ուզում եմ ասել, որ դուք կլինեք իմ բարեկամն ու սեղանակիցը:

— Իսկ ի՞նչ արժե այդ,— հարցրեց ասպետը, — որովհետև ինձ ասել են, որ ձեր խնջույքներից ոմանք շատ թանկ արժեն:

— Ո՛չ,— պատասխանեց Ռոբինը,— դուք արքայի մարդկանցից եք: Ինչքա՞ն դրամ կա ձեր քսակում:

— Միայն քառասուն ոսկեդրամ,— պատասխանեց ասպետը:

Ռոբինը վերցրեց քառասուն ֆունտը և հաշվեց: Կեսը տվեց իր մարդկանց: Մյուս կեսը վերադարձրեց ասպետին:

— Շնորհակալություն,— ասաց ասպետը ժպտալով,— դե այժմ առաջնորդեցեք մեզ ձեր կանաչ պանդոկը:

Ու այսպես, Ռոբինը քայլում էր ասպետի ձիու մի կողմից, իսկ ճգնավոր Թաքը՝ մյուս: Մարդիկ գնում էին առաջից և հետևից մինչև որ նրանք հասան բացատը՝ Բարնգոլեյի քարանձավների առաջ: Ապա Ռոբինը հանեց իր եղջերափողը և հնչեցրեց խմբի երեք ազդանշանները: Շուտով եկան մի խումբ յոմեններ իրենց խմբապետով, ապա մի՝ ուրիշը, հետո մի երրորդը և մի չորրորդը, մինչև որ հարյուր քառասուն մարդ հավաքվեց բացատում: Բոլորն էլ լինքուն կանաչ ունեին հագած: Ձեռներին նոր աղեղներ կային, իսկ կողքերից կարճ, շողշողուն սրեր էին կախված:

Սեղանն արդեն պատրաստ էր. նրա շուրջը բոլորելուց առաջ յուրաքանչյուր յոմեն ողջունեց իր գլխավորին:

Ռոբինի աջ կողմը կանգնած էր գեղադեմ ու գանգրահեր մի մանկլավիկ՝ նրա ու հյուրի գավաթները գինով լցնելու համար:

Ռոբին Յուդի ազդանշանով ճաշկերույթն սկսվեց: Սեղանը լեփ-լեցուն էր տեսակ-տեսակ ուտելիղենով, առատ գինով: Ժպիտ էր խաղում քաղցած յոմենների դեմքին: Առաջին բաժակը խմեցին արքայի կենացը:

Խնջույքից հետո Ռոբինը դարձավ իր հյուրին ու ասաց.

— Չիմա կտեսնեք, թե ինչ կյանք ենք վարում և կպատմեք արքային:

Ու նրա ազդանշանի վրա օրենքից դուրսն համարվող մարդիկ տեղներից ելան ու արկեցին իրենց աղեղները: Իսկ ասպետը շատ զարմացավ նրանց թիրախների փոքրության վրա: Ապա սկսվեց նետաձգությունը: Ռոբինի մարդիկ ցույց տվեցին իրենց փայլուն վարպետությունը: Ասպետը խանդավառված նրանց էր նայում: Մեկ էլ հանկարծ բացատում փողի զիլ ձայն լսվեց և հեռվում մի խումբ ասպետներ երևացին:

— Ի զե՛ն,— գոչեց Ռոբինը շուտափույթ ձեռքն առնելով իր սուրն ու աղեղը:

— Լիցի սըր Ռիչարդն է գալիս,— ասաց մի ուրիշը, երբ խումբը մոտեցավ:

Եվ դա իրոք այդպես էր: Երբ սըր Ռիչարդը մոտեցավ ասպետին, իջավ ձիուց և ծնկի եկավ նրա առաջ.

— Հուսով եմ, որ ձեր գերազանցությունը զենքի դիմելու կարիք չզգաց:

— Արքա՛ն,— բացականչեց Ուիլլ Սքարլեթը ծնկի գալով:

Մի պահ իրարանցում տիրեց:

— Արքա՛ն,— արձագանքեց Ռոբին Հուդը և մեկ մարդու պես բոլորը ծնկի իջան:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

### ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈԲԻՆ ՀՈՒԴՆ ՈՒ ՕՐԻՈՐԴ ՄԱՐԻԱՆՆ ԱՄՈՒՄՆԱՑԱՆ

— Ներեցեք մեզ, ձեր գերազանցություն,— ասաց Ռոբին Հուդը:— Ներեցեք իմ մարդկանց, նրանք մինչև ձեր կյանքի վերջը պատրաստ են ծառայելու ձեզ:

Ռիչարդ Առյուծասիրտը նայեց ծնկաչոք խմբին:

— Համամի՛տ եք ձեր գլխավորի ասածին,— հարցրեց նա:

— Այո , միլորդ արքա,— միաձայն գոչեցին հարյուր քառասուն յոմենները:

— Մեր կամքով չէ, որ մենք օրենքից դուրս մարդիկ ենք դարձել,— շարունակեց Ռոբինը:— Ճնշումն էր, որ մեզ ստիպեց լինել այդպիսին: Մենք միշտ էլ եղել ենք ձեր գերազանցության հավատարիմ մարդիկ և դիմադրել ենք միայն արքայի անհավատարիմ ծառաների հարստահարմանը: Մենք սպանել ենք ձեր եղջերուներին, թեթևացրել ենք քսակները այն հարուստ եկեղեցականների, որոնք իրենց հարստությունները կուտակել են չար արարքներով: Բայց մենք աղքատների բարեկամն ենք եղել և օգնել ենք այրի կանանց ու որբերին: Շնորհեցեք մեզ ձեր արքայական հովանավորությունը և մենք կթողնենք կանաչ անտառը և կհետևենք արքային:

Ռիչարդի աչքերը շողացին, երբ նա նայեց այդ հաղթահասակ մարդկանց, և նա ինքն իրեն ասաց, որ նրանցից արժանավոր արքայական պահակախումբ դուրս կգա:

— Երդվեցե՛ք,— ասաց նա իր հարուստ, թավ ձայնով: — Երդվեցեք բոլորդ, որ այսօրվանից ծառայելու եք արքային:

— Երդվում ենք,— մի անգամ ևս պատասխանեցին յոմենները միաձայն:

— Դե՛, վե՛ր կացեք, բարի Ռոբին,— ասաց արքա Ռիչարդը:— Բոլորիդ էլ ներում եմ շնորհում, որովհետև ձեզ պես նետաձիգներն ինձ դուր են գալիս: Բայց ես չեմ կարող թույլ տալ, որ ապրեք անտառում և խփեք իմ եղջերուներին, և ոչ էլ ձեր ձեռքը վերցնեք երկրի օրենքը: Ուստի սրանից հետո դուք կդառնաք արքայական նետաձիգներ և կլինեք իմ անձնական պահակախումբը: Ես ձեր օգնության կարիքն ունեմ մի քանի նորման բարոնների հետ որոշ վեճեր լուծելու համար: Իսկ ավելի ուշ՝ ձեր խմբի կեսը կվերադառնա այս անտառները, որպես արքայական անտառապահներ: Այժմ որտե՞ղ է օրենքից դուրս համարվող այն մարդը, որը հայտնի է որպես Լիթլ Ջոն: Թող առա՛ջ գա:

— Այստե՛ղ եմ, ձերդ գերագանցություն, — ասաց հսկան:

— Ո՛վ բարի Լիթլ Ջոն, — ասաց արքան: — Այսօրվանից դուք Նոթինգեմի շերիֆն եք և հույս ունեմ, որ նախկին շերիֆից ավելի լավ կծառայեք:

— Ես կանեմ այն ամենը, ինչ կկարողանամ, ձերդ գերագանցություն, — ասաց Լիթլ Ջոնը բերկրանքով ու զարմանքով:

— Սքարլեթ, առա՛ջ անցեք, — ասաց արքան դիմելով նրան, — ես լսել եմ ձեր պատմությունը. մեր երկուսի հայրերը բարեկամներ են եղել: Այժմ ընդունեցեք արքայական ներումը և վերադարձե՛ք ձեր պապենական կալվածները, որովհետև ձեր հայրը շատ է ծերացել:

Ապա արքան կանչեց Ուիլլ Սթյուարթին և նրան արքայական նետաձիգների գլխավոր նշանակեց:

— Իսկ ինչո՞վ կարող եմ ձեր երեկվա հյուրասիրությունը հատուցել, վանական Թաք, — հարցրեց արքան դառնալով վանականին: — Ինչպիսի՞ հարմար ու հանգիստ աշխատանք կուզենայիք անել:

— Ես հասարակ մարդ եմ և ուզածս միայն խաղաղ կյանքն է, — պատասխանեց Թաքը:

— Աշխարհում ամենամեծ բանն էք ուզում, եղբայր, — ասաց արքան: Ապա մի հայացք գցեց անտառապահների վրա:

— Ո՛վ է ձեզանից Ալլան-է-Դեյլը, — հարցրեց նա: Երբ Ալլանը առաջ եկավ, արքան այսպես ասաց նրան.

— Ուրեմն դո՛ւք եք այն երգիչը, որը Փիլիմփտոնում մի հարս է առևանգել: Վաղուց եմ լսել այդ պատմությունը: Ինչո՞վ եք բացատրում այդ:

— Միայն նրանով, որ սիրում էի նրան և նա էլ ինձ, ձերդ գերագանցություն, — պարզ ու շիտակ ասաց Ալլանը, — մինչդեռ նորման լորդը նրա հետ ուզում էր ամուսնանալ պարզապես նրա հողերի համար:

— Վաղվանից դուք ու տիկին Դեյլը կվերադառնաք այդ հողերը և կապրեք խաղաղ ու հավատարիմ: Իսկ եթե երբևէ ձեր տավղի կարիքն ունենամ, պետք է գաք ձեր տիկնոջ հետ: Խոսելով կանանց մասին, — շարունակեց արքան ու դարձավ Ռոբին Յուդին, որը անխոս կանգնած էր, — կարծեմ դուք մի սիրելի աղջիկ ունեիք, որը

ժամանակին արքունիքումն է ապրել: Ինչպե՞ս է պատահել, որ Մարիանին մոռացության եք տվել:

— Ո՛չ, ձերդ գերագանցություն,— շիկնելով ասաց սևաչյա մանկլավիկը առաջ անցնելով,— Ռոբինը ինձ չի մոռացել:

— Ա՛խ, այդպես,— ասաց արքան՝ կռանալով համբուրելու նրա փոքրիկ ձեռքը:— Եվ իրոք, ինչպես տեսա, Ռոբին Յուդիսն այստեղ ավելի լավ են սպասարկում, քան արքային՝ իր պալատում: Դուք կարծեմ Յանթինգթոնի հանգուցյալ կոմսի միակ զավակն եք:

— Այո՛, ձերդ գերագանցություն, թեև որոշ մարդիկ ասում են, որ Յանթինգթոնի օրինական կոմսը Ռոբին Յուդիսն է եղել: Բայց դա միևնույն է, որովհետև կալվածքները հիմա բռնագրավված են:

— Իսկույն պետք է տիրոջը վերադարձնել,— ասաց արքան,— այդ հողերը ես երկուսիդ եմ հանձնում: Առա՛ջ եկեք, Ռոբին Յուդի:

Ռոբինը ծնկի իջավ արքայի առաջ: Ռիչարդը դուրս քաշեց իր սուրը և դրեց Ռոբինի ուսին:

— Ոտքի՛ ելեք, Ռոբերթ Ֆիցուրթ, Յանթինգթոնի կոմս,— ասաց նա:— Իմ առաջին հրամանն է, միլորդ,— շարունակեց արքան,— ամուսնանալ Մարիանի հետ:

— Ես կուզենայի, ձերդ գերագանցություն, բոլոր հրամանները կատարել նույնպիսի բերկրանքով,— ասաց Յանթինգթոնի նոր կոմսը, իր մոտ քաշելով նախկին կոմսի դաստերը:

— Նա չի առարկում, որ ես լինեմ նրա կնքահայրը,— ասաց արքան:

Ապա արքան զրուցեց մյուս անտառապահների հետ և երեկոն, մտերիմ մարդու պես, անցկացրեց նրանց հետ: Մաչն Էլ՝ ջրաղացպանի որդին, Սթյուարթին Էլ, Սքարլեթն Էլ, Լիթլ Ջոնն Էլ և մյուս բոլորը մահակի խաղ խաղացին, շատ ուժեղ հարվածներ փոխանակելով: Ապա ամբողջ խումբը՝ ասպետներ և անտառապահներ, ընթրեցին և խմեցին մի բոցավառ խարույկի շուրջը, մինչ Ալլանը քաղցր երգում էր տավրի նվագակցությամբ, և մյուսները խմբերով ձայնակցում էին նրան:

Երբ գիշերը վրա հասավ, ամբողջ խումբը քուն էր մտել:

\*\*\*

Վաղ առավոտյան խումբը վեր կացավ և ընթացավ դեպի Նոթինգեմ: Դա մի հոյակապ հեծելախումբ էր: Առաջից դնում էր Ռիչարդ Առյուծասիրտ արքան, նրանից հետո Լիցի սըր Ռիչարդը՝ ութ ասպետներով, որոնց հետևից, սպիտակ ձիեր հեծած, գալիս էին Ռոբին Յուդիսն ու օրիորդ Մարիանը: Ալլան—Է-Դեյլին ուղեկցում էր տիկին Դեյլը՝ ձի հեծած: Ու նրանց հետևից գալիս էին հարյուր քառասուն նետածիգները իրենց լավագույն լինքոլն կանաչ զգեստները հագած:

Նրանց կանգնեցրին Նոթինգեմ քաղաքի դարպասների մոտ:

— Ովքե՞ր են գալիս,— լսվեց դարպասապահի ձայնը:

— Բայց արեք դարպասները Անգլիայի արքայի առջև,— եղավ պատասխանը և իսկույն դարպասները բացեցին և կամուրջը գցվեց:

Դեռ խումբը դարպասներից չմտած, լուրը թնդաց քաղաքով մեկ:

— Արքան է եկել, արքան է եկել, բռնել է Ռոբին Յուդին:

Ամեն անկյունից մարդիկ դուրս էին թափվում նայելու հեծելախմբին, որ ընթանում էր դեպի շուկայի հրապարակը:

Յրապարակի մյուս ծայրին արքային դիմավորեց շերիֆը: Նրա դեմքը զայրույթից կանաչեց, երբ տեսավ, որ Լիցի սըր Ռիչարդն ու Ռոբին Յուդն ուղեկցում էին արքայական շքերթին:

— Սըր շերիֆ,— ասաց արքան,— խոստմանս համաձայն ես եկել եմ անտառը մաքրելու օրենքից դուրս համարվող մարդկանցից: Այլևս անտառում օրենքից դուրս համարվող մարդիկ չկան: Բոլորն էլ ծառայության են մտել արքայի մոտ: Լիթլ Ջոնը լինելու է Նոթինգեմի շերիֆը և դուք նրան եք հանձնելու բանալիները:

Շերիֆը անխոս խոնարհվեց: Ապա արքան դարձավ Յերֆորդի եպիսկոպոսին, որը նույնպես եկել էր նրան դիմավորելու:

— Լսեցեք, միլորդ եպիսկոպոս,— ասաց նա,— ձեր վատ արարքների համբավը հասել է ինձ: Յետո մենք բացատրություն կպահանջենք ձեր կատարած հարստահարումների ու բռնությունների մասին: Իսկ կեսօրից հետո, Նոթինգեմի եկեղեցին կգաք մեր խմբից երկուսին պսակելու համար: Այնպես որ, պատրաստ եղեք:

Եպիսկոպոսը նույնպես խոնարհվեց ու գնաց: Կեսօրից հետո, երբ ամուսնական խումբը գնում էր Նոթինգեմի եկեղեցին, մարդիկ ուրախ-ուրախ ողջունում էին նրանց: Բոլորն էլ հետաքրքրությամբ էին նայում օրենքից դուրս համարվող հոչակավոր մարդկանց: Ռոբինի ժողովրդականությունը կրկնապատկվել էր, քանի որ նա վայելում էր նաև արքայի բարեհաճությունը:

Այդ օրը ուրախ չէին միայն ծերունի շերիֆն ու նրա գոռոզ դուստրը:

Ի վերջո, խումբը հասավ եկեղեցի, որտեղ եպիսկոպոսը արդեն հագել էր շուրջառը: Նրա կողքին կանգնած էր ճգնավոր Թաքը, որը եկել էր օգնելու:

Արարողությունից հետո Ուիլլ Սքարլեթի խնդրանքով խմբի անդամները հեծան իրենց ձիերը և գնացին Գեյմուլեյլ Լոջ, որտեղ ծերունի կալվածատեր Ջորջը, տեսնելով իր որդուն, արքային ու սորապսակներին, ուրախությունից արտասվեց:

Գիշերը անցկացրին այդտեղ, խրախճանք արեցին: Հաջորդ օրը Լիցի սըր Ռիչարդը հրավիրեց նրանց:

Եվ այսպես, խրախճանքներով, երգով ու ծիծաղով Ռոբին Յուդը, Յանթինգթոնի նոր կոմսը և նրա հարսը սկսեցին իրենց ամուսնական կյանքը:

## ԹԵ ԻՆՉՊԵՍ ՌՈՔԻՆ ՅՈՒՐԸ ԸՆԴՈՒՄԵՑ ԻՐ ՄԱՅԸ

Ռոբին Յուդն ու Նրա մարդիկ՝ այժմ արդեն արքայական նետածիգներ, Ռիչարդ Անյուծասիրտ արքայի հետ միասին շրջեցին Անգլիայով մեկ մի քանի նորման բարոնների մեջ ծագած վեճերը կարգավորելու համար: Ապա մեծ շուքով արքան վերադարձավ իր պալատը՝ Լոնդոն, միևնույն ժամանակ՝ Յանթրեպոնի նոր կոմսը, իր կնոջը բերեց այնտեղ, որտեղ նա դարձավ արքունիքի գեղանի լեդիներից մեկը:

Արքայական նետածիգները բաժանվեցին երկու խմբի: Մի կեսը մնաց Լոնդոնում, իսկ մյուսը վերադարձավ Շերվուդ և Բարնզդեյլ՝ արքայի արգելամասերը հսկելու համար:

Անցավ որոշ ժամանակ և Ռոբինի սիրտը սկսեց նեղվել: Նրան դուր չէր գալիս քաղաքի կյանքը: Կարոտել էր կանաչ անտառի զովաշունչ օդը և իր յոմենների ուրախ ընկերությունը:

Ի վերջո Նրա սիրտն այնքան նեղվեց, որ օտար երկրներ շրջելու թույլտվություն խնդրեց: Իրավունք առավ և, հետը վերցնելով Մարիանին, միասին շրջեցին բազմաթիվ երկրներ: Վերջում, մի արևելյան երկրում, անհուն մի վիշտ ունեցավ Ռոբինը: Մարիանը հիվանդացավ և վախճանվեց: Հագիվ հինգ տարի էր, ինչ ամուսնացել էր, բայց Ռոբինի կյանքի լույսը խավարեց արդեն:

Եվս մի քանի ամիս ճանապարհորդեց նա աշխարհի շուրջը, ջանալով մոռացության տալ իր վիշտը: Հետո կամեցավ զինվորական ծառայության մտնել: Բայց արքա Ռիչարդը նորից գնացել էր արշավանքի, իսկ Ռոբինը բնավ դուր չէր գալիս իշխան Ջոնին, որը գահի խնամակալն էր: Նա Ռոբինին ընդունեց հեզևանքի ժպիտը դեմքին:

— Գնա՛ կանաչ անտառդ, — ասաց նա սառնությամբ, — և արքայի եղջերուներից մի քանիսն էլ որսա: Գուցե և արքան վերադարձին արքունիքի ամենաբարձր պաշտոնը կտա քեզ դրա համար:

Այս հեզևանքի խոսքերը Ռոբինին խիստ զայրացրին: Բացի դրանից, իր կնոջ մահից հետո, Նրա տրամադրությունը միշտ վատ էր: Նա զայրացկոտ պատասխաններ տվեց իշխանին, որը հրամայեց իր պահակներին բռնել և զնդանը նետել Նրան:

Մի քանի շաբաթ անց հավատարիմ Սթյուարթին և մյուս արքայական նետածիգները ազատեցին Նրան ու բոլորը միասին վերադարձան կանաչ անտառը: Այնտեղ Նրանք նորից լսեցին իրենց այնքան մոտիկ ու սիրելի եղջերափողի կանչը: Խմբի մնացյալ անդամները վազելով եկան իրենց գլխավորի մոտ, փաթաթվեցին Նրա ոտքերին ու համբուրեցին Նրա ձեռքերը և ուրախությունից համարյա արտասվեցին, որ նա նորից եկել էր իրենց մոտ:

Այդպես խաղաղ, առանց մարդու վնաս տալու, ապրեցրին Նրանք անտառում՝ սպասելով Ռիչարդ արքայի վերադարձին:

Բայց Ռիչարդ արքան էլ ետ չեկավ: Լուր եկավ, որ նա զոհ է գնացել օտար հողում: Նրա գահը իշխան Ջոնին անցավ: Այդ դեպքերի ապացույցը Լիթլ Ջոնն էր, որի հաղթանդամ կերպարանքը երևաց բացատում:

— Եկել ես մեզ ձերբակալելու՞, — ասաց Ռոբինը, վազելով առաջ և ողջագուրելով իր վաղեմի ընկերոջը:

— Ո՛չ, ես որպես Նոթինգեմի շերիֆ չեմ եկել,— պատասխանեց Լիթլ Ջոնը:— Նոր արքան հեռացրեց ինձ, իսկ ես շատ ուրախ եմ դրա համար, որովհետև վաղուց ուզում էի ձեզ հետ լինել այստեղ՝ կանաչ անտառում:

Նրա խոսքերը ուրախացրին խմբի բոլոր անդամներին:

Նոր արքան կատաղի կռիվներ մղեց օրենքից դուրս համարվողների դեմ և այնքան շատ զինվորներ ուղարկեց Շերվուդ և Բարնզդեյլ, որ որոշ ժամանակով Ռոբինն ու իր մարդիկ հեռացան այդ անտառից ու գնացին Դարբիշիր: Մինչև օրս էլ քարերի մի կույտ է թափված այնտեղ՝ այն ապարանքի ավերակները, որտեղ շուրջ մի տարի ապրել է Ռոբին Յուդը:

Մի որոշ ժամանակ անց արքա Ջոնը այնքան այլևայլ դժվարությունների մեջ ընկավ, որ էլ չանհանգստացրեց օրենքից դուրս համարվող մարդկանց:

Սակայն, վերջին հարձակումներից մեկում Ռոբին Յուդը վիրավորվեց: Վերքը լուրջ չէր թվում, բայց նա գաղտնի ջերմ էր ունենում: Օր-օրի ուժասպառ էր լինում, մինչև որ, ի վերջո, շատ տկարացավ:

Մի օր էլ, երբ ձիով գնում էր Զըրքլիզ աբբայության մոտով, արյունը այնպես խուժեց գլուխը, որ էլ չկարողացավ շարունակել ճանապարհը: Մի կերպ իջավ ձիուց և թակեց աբբայության դուռը: Սևեր հագած մի վանամայր դուրս նայեց:

— Ո՞վ եք դուք, որ թակում եք դուռը, այս պարսպից ներս տղամարդու մուտքը արգելված է:

— Բաց արեք, ի սեր աստծո,— ասաց նա.— Ես Ռոբին Յուդն եմ, տաքություն ունեմ և շատ թույլ եմ զգում ինձ:

Ռոբին Յուդի անունը լսելով կինը վեր թռավ և իսկույն բաց արեց դուռը, ներս թողեց նրան: Աստիճաններով բարձ բանալիս օգնեց Ռոբինին ու տարավ մի սենյակ և սառը ջուր ցանեց երեսին մինչև որ ուշքի բերեց: Ապա կինը ցածրաձայն ու արագ-արագ խոսեց,

— Ձեր ջերմությունը կիջնի եթե արյուն առնեն: Տեսեք, ես նշտար ունեմ և կարող եմ բացել ձեր երակը: Դուք հանգիստ պառկեցեք:

Եվ նա Ռոբինից արյուն առավ: Ռոբինը քնեց ու ամբողջ օրը քնած մնաց: Բայց երբ արթնացավ, իրեն շատ թույլ էր զգում:

Մինչև օրս էլ վիճում են այդ կույսի մասին: Ոմանք գտնում են, որ նա մաքուր սրտով է արել այդ, ուրիշները պնդում են, թե նա նախկին շերիֆի դուստրն է եղել և այդ դաժան արարքով լուծել էր հոր վրեժը:

Ռոբինը շատ թույլ էր, երբ արթնացավ: Օգնություն կանչեց, բայց պատասխան չառավ: Բաց պատուհանից նայեց կանաչ անտառին, բայց այնքան թույլ էր, որ չէր կարող ցած թռչել:

Ապա նա հանեց իր եղջերափողը և երեք անգամ փչեց: Լիթլ Ջոնն այդ պահին մոտակա անտառում էր: Երբ եղջերափողի նվաղ ձայնը հասավ ականջին՝ նա տեղից վեր թռավ:

«Չլինի՞ թե իմ տերը մեռնում է, ինչքան թույլ է փչում»,— ասաց նա ինքնիրեն և վազեց արբայուրթյուն ու ծեծեց դուռը: Պատասխան չստանալով, նա բաց արեց դուռն իր հզոր բռունցքի ուժգին հարվածներով և վազեց այն սենյակը, ուր Ռոբինը պառկած էր՝ գունատ և ուժահատ:

— Օ՛հ, թանկագին տեր,— բացականչեց Լիթլ Ջոնը,— չլինի՞ թե դավաճանության գոհ ես դարձել: Եթե այդպես է, ուրեմն մի վերջին շնորհ արա:

— Ի՞նչ շնորհ,— հարցրեց Ռոբինը:

— Թույլ տուր հրի մատնել Քըրքլիզը իր բոլոր կանանցով:

— Ո՛չ, իմ լավ բարեկամ,— պատասխանեց Ռոբին Ջոնը անխռով,— ես չեմ կարող թույլ տալ այդ: Դու գիտես, որ իմ ամբողջ կյանքում ես ոչ մի կնոջ վնաս չեմ հասցրել, ոչ էլ այն տղամարդկանց, որոնք ուղեկցելիս ես եղել այդ կանանց:

Նա փակեց աչքերը ու ետ ընկրկեց: Ընկերը կարծեց, թե արդեն մեռնում է:

Արտասուքի կաթիլները գլորվեցին հսկայի աչքերից և թրջեցին տիրոջ ձեռքը: Ռոբինը բռնեց իր ընկերոջ թևից:

— Տա՛ր ինձ, բարի Լիթլ Ջոն,— շնջաց նա:— Ուզում եմ մեկ էլ շնչել կանաչ անտառի օդը: Տո՛ւր ինձ քո փառավոր աղեղն ու շիտակ նետը: Ես կարձակեմ նետը և այնտեղ, կաղնուտում, ուր որ ընկնի այս նետը՝ այնտեղ էլ թող լինի իմ գերեզմանը:

Ամբողջ մարմնով հենվելով Լիթլ Ջոնի վրա, Ռոբինը բաց պատուհանից արձակեց իր վերջին նետը, այնպես շիտակ ու թափով, ինչպես անցած-գնացած օրերին: Նետը դիպավ հաստաբուն կաղնուն ու ընկավ ծառերի ստվերում: Արձակեց ու ընկավ իր հավատարիմ ընկերոջ կրծքի վրա:

— Սա վերջինն էր,— խոսեց Ռոբինը:— Ասա իմ խիզախ ընկերներին, որ այնտեղ թաղեն ինձ. ոտքերիս ու գլխիս տակ թող կանաչ խոտ դնեն: Եվ թող կողքիս էլ հանգչի իմ ամրակուռ աղեղը, որովհետև նրա քաղցր երգը ականջումս է մշտապես:

Մի պահ հանգիստ առավ, և Լիթլ Ջոնը չիմացավ, թե դեռ կենդանի է: Բայց հանկարծ Ռոբինի աչքերը շողացին և նա փորձեց վրա նստել: Երևի նրան թվաց, թե նորից իր խմբի հետ է՝ անտառի բացատում:

— Չա՛, հոյակապ եղջերու է, Ուիլլ: Ալլան, երբեք այսքան քաղցր չէիր նվագել: Ինչ լավ է վառվում խարույկը: Մարիան... նա իմ Մարիանն է... մո՛տ արի վերջապես...

Լիթլ Ջոնը հեկեկաց: Ձեռքի մի թույլ սեղմում և ամեն ինչ վերջացավ: Էլ չկար Ռոբին Ջոնը, ամենահավատարիմ ու ամենաազնիվ մարդը:

\*\*\*

Այսպես վախճանվեց Ռոբին Ջոնը: Բայց նրա ոգին ապրում է դարեդար այն անմահ բալլադներում, որ նրա մասին երգում են ազատատենչ մարդիկ:

Ռոբին Ջոնին թաղեցին այնտեղ, ուր նրա արձակած վերջին նետն էր ընկել, և Լիթլ Ջոնը մի քար կանգնեցրեց հերոսի շիրմին, իսկ քարի վրա փորագրել էր տվել:

Աստ հանգչի մարմինը Ռոբին Յուդի,  
Աշխարհն ավելի լավ մարդ չի տեսել,  
Ռոբինի և նրա քաջերի պես նետաձիգներ,  
Անգլիական հողը երբեք չի տեսնի էլ: